


7332

ՖԻԶԻԿԱՅԻ
ՊՐԱԿՏԻԿՈՒՄ



ԹԵՏՐԱՑ

19 AUG 2006
05 JUL 2010

53
D-52

ՀԱՅՈՒ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍՈՒՐԱՆ

ՀԱՎԱԿԱՏԻԿԱՆ [Զ. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ]
Ն. ԳՈԶՅԱՆ, Ա. ԶՈՐՅԱՆ

244 20 57

53 | Քերական
D-52 | սպառչական
✓. 7 | սպառչական

120	2/խնց
120	57,85
Եւ-	4077 1979
2c	2390 54,80
Ժ. 72	22,11 20,11

Հ. Հ.
Հ. Հ.

ՖԻԶԻԿԱՅԻ ՊՐԱԿՏԻԿՈՒՄ

ԱՌԱՋԻՆ ՄԱՍ

ԶԵՄՆԱՐԿ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԴՊՐՈՑՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Խմբագրեց Հ. ԴԱՎԱԿԱՏԻԿԱՆ

1/2

05.09.2013

7332

Գ. Ա. Ռ. Խ. 1

ՀԻՄՆԱԿԱՆ ԶԱՓՈՂԱԿԱՆ ԳՈՐԾԻՔՆԵՐ

1. ՆՇՆՀՈՒՅ


Սահմանակարգի (կամ միլիմետրների) բաժանած մասշտաբի միջոցով կարելի յէ յերկարությունը չափել մի սանտիմետր (կամ մի միլիմետր) ձշությամբ, այսինքն չափվելիք յերկարությունը ու սանտիմետրից (կամ միլիմետրից) ավել ե, իսկ $n+1$ սանտիմետրից (միլիմետրից) պակաս: Կարելի է աչքաչափով չափել և ավելի մեծ ձշությամբ, սակայն առանց հատուկ հարմարանքի հնարքավոր չել վորոշել ձշության աստիճանը: Մասշտաբի միջոցով ցանկացած ձշությամբ չափելու համար (n -ինակ $\frac{1}{10}$ միլիմետր) մասշտաբին միացնում են նոնիուս (Nonius) կոչվող հարմարանքը: Նոնիուսը մի կարծ քանոն ե, վորի յերկարությունը տվյալ դեպքում ($0,1$ մմ ձշ չության դեպքում) վերցնում են հավասար 9 միլիմետրի և բաժանում տասը մասի, այդպիսով նոնիուսի յուրաքանչյուր բաժանմունքը հավասար է $0,9$ մմ: Այժմ տեսնենք, թե ինչպես ե կատարվում

0	1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15	16	17	18
0	1	2	3	4	5	6	7	8	9	0	1	2	3	4	5	6	7	8

c b N D

Նկ. Գ. Նոնիուս

չափման գործողությունը: Յեթե հարկավոր է չափել AB ձողի յերկարությունը, ապա AB-ն դնում են միլիմետրների բաժանած մասշտաբի կողքին, այնպես վոր ձողի մի ծալը (A) համընկնի մասշտաբի զերոյի հետ. դիցուք, ձողի միտւ ծայրը (B) այդ ժամանակ դանդում է 10-րդ և 11-րդ բաժանմունքների միջև. այդ նշանակում ե, վոր AB ձողի յերկարությունը հավասար է $10+x$ միլիմետրի, վորտեղ x-ը մի միլիմետրից պակաս ե: Հիմա նոնիուսը (N) դնում ենք մասշտաբի յերկարությամբ այնպես, վոր նրա զերոն



ԶՄԿՀՕ. 59

համընկնի ձողի Յ ծայրի հետ (աւես նկ. 1) և դիտում, թե նոնիուսի վոր գիծը ավելի շատ ե մոտ մասշտաբի գծերից (բաժանման) մեկին։ Ինչպես նկարից յերևում ե, նոնիուսի 6-րդ գիծը համարյա համընկնում ե մասշտաբի գծերից մեկի հետ, այն ել 16-րդ գծի հետ։ Վեցնենք յերկու միևնույն կետերը՝ մասշտաբի 10-րդ բաժանմունքի կետը (C) (և նրա հետ համընկած կետը ձողի վրա) և նոնիուսի վեցերրդ բաժանմունքի կետը (D) (և նրա հետ համընկած կետը մասշտաբի վրա)։ Այդ յերկու կետերի հեռավորությունը (CD-ն) չափած մասշտաբով հավասար ե 6 միլիմետրի։ Խակ այդ կետերի հեռավորությունը չափած նոնիուսով հավասար ե՝ $x + \frac{6}{10}$ բաժանմունք նոնիուսի այսինքն հավասար ե $x + \frac{6+9}{10}$ ։ Այդպիսով ստանում ենք հետեւյալ հավասարումը

$$6 = x + \frac{6 \cdot 9}{10}, \quad (1)$$

$x = 0,6$ միլիմետր

Ինչպես ահսանք քանոնի VI-րդ բաժանմունքը համընկել եր նունիուսի VI բաժանմունքի հետ։ Ապացուցենք, վոր քանոնի ո-րդ բաժանմունքը կարող է համընկնի միայն նոնիուսի ո-րդ բաժանմունքի հետ։ Իրոք, իեթև մինուույն հատվածը պարունակում ե ո բաժանմունք քանոնի, իսկ նոնիուսի ո + 1 բաժանմունքը և չ-ը, ապա՝ (1) հավասարման փոխարեն, կունենանք հետեւյալ հավասարումը

$$n = x + \frac{(n+1)9}{10}$$


$$x = \frac{n - 9}{10}$$

Բայց վորովհետև ոչի կարող 9-ից մեծ լինել, հետեաբար չ-ի համար ստացած արժեքը բացասական է, վորը չի կարող լինել: Իսկ յեթե ընդունենք, վոր նորիուսի ո-րդի բաժանմունքը համընկնում է քանոնի ($n+1$)-րդ բաժանմունքի հետ, այն ժամանակ կունենանք այսպիսի հավասարում՝

$$n+1 = x + \frac{n \cdot 9}{10}$$


վորտեղից $x = 1 + \frac{n}{10}$, այսինքն, դարձյալ անհեթեթ յեղակացության հանգանք՝ $x = 1 + \frac{1}{10} = 1.1$ մեծ լինել:

Նկ. 2-ի դեպքում AB-ի յերկարությունը հավասար է՝ 92,7 մմ.



Ակ. 2.

Նկար 3-ում պատկերացրած նոնիուսը չափում է $1\frac{1}{20}$ -ճշտությամբ. քանոնի 19 բաժանմունքը բաժանված է (նոնիուսի վրա)



iii. 3

20 մասի. համբնկած ե չորրորդ բաժանմունքը. հետեաբար՝

$$4 = x + \frac{4 \cdot 19}{20}$$

$$x = \frac{4}{20}$$

$$\mu u k \quad AB = 14 \frac{4}{20} = 14 \frac{1}{5} \quad (\text{քանոնի } \mu \text{աժանմունքի}):$$

Յերբեմն գործածում են հակադարձ նոնիուս. այս դեպքում քառասությունը 1 բաժանմունքը բաժանում են ո մասի, լեթեցանկանում են $\frac{1}{n}$ ձառությամբ չափել: Խնչպես նկ. 4-ից լերևում ե քառորդի 5-րդ բաժանմունքը համընկած ե նոնիուսի 4-րդ բաժանմունքի հետ. հիմա ունենք այսպիսի հավասարում՝


$$5 = x + \frac{4 \cdot (n + 1)}{n}$$

գորովնետե հիմա նոնիուսի մի բաժանմունքը հավասար է $\frac{n+1}{n}$:

Լուծելով այս հավասարումը կստանանք՝

$$x = \frac{n - 4}{n}$$

$$\text{Նկ. } 4\text{-ի } \eta_{\text{եղացում}} = \frac{6}{10}, \text{ այսինքն, } j_{\text{եթե}} \text{ նոնիուսի բաժան-} \\ \text{մունքները համարակալած լինեն աջ ծայրից, ապա համընկած համա-} \\ \text{րը բաժանած ո-ի կտա } x\text{-ի արժեքը:}$$




Նկ. 4.

Անկյունը վորոշ ձշառությամբ չափելու համար գործածում են աղեղային նոնիուս, վորի կառուցման համար կիրառվում ե սովորա- կան նոնիուսի սկզբունքը:

Դիցուք շրջանը (A), վորի վրա նշանակված են աստիճաններ և վորի միջոցով կարելի յի չափել անկյունն աստիճաններով՝ բա- ժանված ե այնպես, վոր նրա յուրաքանչյուր բաժանմունքը հավա- սար է $30'$ -ի: Յեթե B աղեղը հավասար է 29 նման բաժանմունքնե- րի և բաժանված է 30 մասի, ապա նոնիուսի յուրաքանչյուր բաժան- մունքը հավասար կլինի $\frac{30' \cdot 29}{30} = 29'$

Մի վորոշ անկյուն չափելիս պետք ե այնպիս անել, վոր ան- կյան գագաթը համընկնի AA շրջանի կենտրոնի հետ, իսկ մի կող- մը անցնի շրջանի զերո կետով, մյուս կողմին պետք ե սեղմել նո- նիուսի զերոն: Դիցուք այդ կողմը կամ նոնիուսի զերոն գտնվում է



Նկ. 5. Անկյունային նոնիուս

$$22 \cdot 30' = x + 22 \cdot 29$$

չորտեղից

$x = 22'$


և անկյունը հավասար է՝ $15^o 22'$: Չափման ձշառությունը տվյալ դեպ- քում հավասար է 1':

2. ԿԱՐԵՑՈՒՄԵՑՐ

Կաթետոմետրը ծառայում է յերկու կետերի ուղղաձիգ հեռավո- րությունը չափելու համար, յերբ այդ կետերը գտնվում են միևնույն կամ տարբեր ուղղաձիգերի վրա: Կաթետոմետրը (Նկ. 6) բաղկացած է հետևյալ մասերից՝ ա) յեռոտանուց, վորն ունի յերեք պատուակ- ներ (I, II և III), բ) ուղղաձիգ քանոնից, (DD), վորը կոչվում է նաև պրիզմա, և բաժանված ե սանտիմետրների, և միլիմետրների, գ) հո- րիզոնական դիտակից (H), վո- րը շարժվում է պրիզմայի լեր- կարությամբ և դ) նոնիուսից (N), վորը շարժվում է դիտակի հետ միասին և վորի միջոցով վորոշվում է դիտակի դիրքը պրիզմայի վրա: Ուղղելով դի- տակը նախ կետերից մեջի վրա (A), ապա մյուսի (B), կարելի չեն հաշվել այդ կետերի ուղղաձիգ հեռավորությունը՝ AB (Նկ. 6): Դիտակը ոժտված է հարթաչա- փով, վորի միջոցով հնարավոր ե դիտակին ճիշտ հորիզոնական ուղղություն տալ:


Նախ քան չափումներ սկսելը, անհրաժեշտ է կաթետոմետրը ճիշտ սարել: Տեսնենք թե ինչ պահանջների պիտի բավարարի ճիշտ սարած կաթետոմետրը:

I. Դիտակի առանցքը զուգահեռ պիտի լինի հարթաչափի առանց- քին: այդ տեղի կունենա այն ժամանակ, յերբ հարթաչափի բշտիկը միջնակետումն է և միաժամանակ դիտակի առանցքը հորիզոնական: Այդ վիճակը ստեղծելու համար նախ № 1 պտուտակի միջոցով հար- թաչափի բշտիկը բերում ենք միջնակետը, ապա բարձրացնում ենք դիտակը հարթաչափի հետ միասին և շուրջ տալով (այնպես, վոր ոկու- լարը գրավի որյեկտիվի տեղը, իսկ որյեկտիվը՝ ոկուլարի տեղը) բարձյալ դնում ենք և կ1 փոսիկների մեջ: Դրանից բարիկը մի քանի բա- ժանմունք կտեղափոխվի: Դիցուք տեղափոխվում ե ո բաժանմունք: Նույն № 1 պտուտակի ողնությամբ բշտիկը կիսով չափ (այսինքն




Նկ. 6. Կարեցումեցր.
III պտուտակը չի յերեվում

$\frac{n}{2}$ բաժանմունք) յետ և տարվում, $\frac{n}{2}$ բաժանմունք ել յետ և տարվում այն պտուտակի միջոցով, վորը գտնը-վում և հարթաչափի ծալքերից մեկի վրա: Այս ձեռվակի հաջողվի ստեղծել այնպիսի վիճակ, վոր դիտակի և հար-թաչափի առանցքները լինեն իր դուգահեռ և հորիզոնական:




Նկ. 7. Կարետմետր




Նկ. 7ա. Կարետմետր
(Ն 2 պտուտակը չի յերելի)

Ա. Կաթետոմետրի պրիզման պիտի ուղղահայաց լինի հորիզո-նական դիրք ունեցող դիտակի և հարթաչափի առանցքներին: Այդ հաջողվում ե անել յեռոտանու վրա գտնվող լերեք պտուտակների միջոցով (Նկ. 7գ): Նախ աչքաչափով պրիզմային տրվում է ուղղա-

ձիգ ուղղություն: Այնուհետև դիտակը պտտացնելով դնում են զու-դահեռ յեռոտանու լերկու պտուտակներին (դիրք (ա)) և Ն 1 պտու-




Նկ. 7բ. Կարետմետրի շարժական մասը. Ն 2 պտուտակը չի յերելի



Նկ. 7ց. Դիտակի տարբե դիրք

տակի ոգնությամբ բշտիկը բերվում միջնակնա: Պտտել դիտակը 180° -ով (դիրք (բ)). Նկատում են, վոր բշտիկը մի քանի (Ո) բաժանմունք տեղափոխվել է: № 1 պտուտակի ոգնությամբ բշտիկը վերադարձնում են $\frac{n}{2}$ բաժանմունք, իսկ I և II պտուտակների (յեռոտանու վրա) ոգնությամբ ել $\frac{n}{2}$ բաժանմունք տեղափոխում: այսինքն բշտիկը վերադարձնում միջնակետը՝ այս յեղանակով հնարավոր ել լինում ստեղծել այնպիսի վիճակ, վոր կաթետոմետրի պրիզման գտնվի ուղղաձիգ հարթության վրա, վորն ուղղահայց ե դիտակի առանցքին (առաջարկվում ե անել համապատասխան գծագիրը): Այժմ դիտակը պտտենք 90° (դիրք (ո)) և ոգտվելով № 1 և յեռոտանու III պտուտակներից՝ բշտիկը վերադարձնենք միջնակետը:



Նկ. 8. Դիտակի յերկաշափական յել պատիկական առանցքները պետք ե համբեկնեն

Այդպիսով կաթետոմետրին կհաղորդվի պահանջված դիրքը:

III. Դիտակի յերկաշափական և ոպտիկական առանցքները պետք ե համընկնեն:


Ոպտիկական առանցք կոչվում ե այն ուղիղ գիծը, վորն անցնում ե ոբյեկտիվի կենտրոնով և թելֆիկների հատման կետով:

Այս վիճակն ստեղծելու համար դիտակն ուղղում ենք քանոնի բաժանմունքների վրա և գրի յենք առնում թելի հատման կետի վրա յերկացող թիգը (Ա) (Նկ. 8). ապա

պտտացնելով դիտակը յերկաշափական առանցքի շուրջը 180° -ով, գրի յենք առնում քանոնի ան թիգը (Բ), վորը հիմա յերկում թելի հատման կետի վրա: Ոկուլարի մոտ գտնվող ա և ա պտուտակները այնքան պտտել, վոր թելի հատման կետը համընկնի քանոնի: Ը բաժանմունքի հետ, վորտեղ C-ն A և B բաժանմունքների միջնակետն է: Նույնը կատարում ենք նաև եթե թելի ուղղությամբ:


3. ՄԻԿՐՈՄԵՏՐ

Միկրոմետրը ծառայում ե լարի տրամագիծը, թերթի, թիթեղի հաստությունը չափելու համար: Միկրոմետրը (Նկ. 10 և 11) բաղկացած ե հետեւյալ մասերից՝ A աղեղից, F միկրոմետր պտուտակից, B սկալայից, C գլանից և պտուտակի գլխիկից (D):



Նկ. 10. Միկրոմետր հատուկ սկալայով

Չափվելու յենթակա մարմինը դնում են անշարժ E-ի և F-ի միջև և պտուտակի գլխիկը պտաեցնելով (անպայման D գլխիկը բռնելով) մարմինը սեղմում են E-ի և F-ի միջև, այնքան, վոր D պտը-




Նկ. 10ա. Քայլը = $1/2$ մմ

տեցնելիս պտուտակը այլիս չշարժվի: E և F-ի հեռավորության ամբողջ թիգով միջնակետը կարդացվում ե Յ սկալայի վրա, իսկ միկրոմետրի հարյուրերորդական մասերը՝ C գլանի վրա: Գործիքի կաշմությունը այնպես է, վոր յերը E և F իրար շաշփում են: C-ի գե-


քոն համընկնում և Յ սկալայի զերոյի հետ: Յերբ պտուտակը մի լրիվ պտույտ է անում, F-ը հեռանում է Է-ից մի միլիմետր (կամ կես միլիմետր), վորը սկալայի մի բաժանմունքն է (նկ. 10ա և 11): Ը գլանի շրջանագիծը բաժանված է 100 հավասար մասի, ուրեմն, չեթե Ը գլանը մի բաժանմունքով պտտենք F-ը Է-ից կհեռանա $\frac{1}{100}$

միլիմետր (կամ $\frac{1}{200}$ մմ.):

Յեթե Ե և F իրար շոշափելու ժամանակ Ը-ի զերոն չի համընկնում Յ սկալայի զերոյի հետ, ապա պետք է նախազես վորոշել սիսլը և հետագա չափումի ժամանակ այդ սիսլը (+) կամ (-) նշանով նկատի առնել (նկ. 10բ և 10գ):



Նկ. 10ա. Միկրոմետրի
սիսլը = + 0,035




Նկ. 10բ. Միկրոմետրի
սիսլը = - 0,015

4. ՇՏԱՆԴԵՆՑԻՐԿՈՒԼ

Շտանդենցիրկուլը գործածվում է բաղմազան դեղքերում՝ հաստություն, լերկարություն, խորություն, ներքին տրամագիծ և այլ չափումներ կատարելու համար: Նկ. 12, 13, 14, 15, 16 ցույց են տված շտանդենցիրկուլի տարրեր գործածությունները:

Նկ. 16 տեսնում ենք շտանդենցիրկուլ, վորը բացի նոնիուսից ունի նաև միկրոմետրիկ պտուտակ, այդ պտուտակի շնորհիվ չափվող մարմինը ավելի ճիշտ է տեղակալվում: Չափելու համար Ա և Յ պտուտակները թուլացնում են և չափման յինթակա մարմինը դըր-


վում և շտանդենցիրկուլի վոտների միջև և ըստ հնարավորության, սեղմվում, ապա ամրացնում են Յ պտուտակը և Ը պտուտակի միջոցով կատարվում է վերջնական տեղակայումը. որանից հետո ամ-




Նկ. 11. Միկրոմետր, վարի սկալան պտուտակի վրա յիշ Քայլը = 1 մմ




Նկ. 12. Պարզ շտանդենցիրկուլ. Չափվող մարմինը դրվում է Ա մասում յիշ սեղմիում




Նկ. 13. Շտանդենցիրկուլ: Չափում է հասուրյունը (1) յիշ ներփին տամա դիք (2)



Նկ. 14. Շանգանցիրկուլ. Զափում և խռությունը



Նկ. 15. Շամպենցիկուլ: Զափում և յերկու կետերի հեռավորությունը




Նկ. 16. Շամզենցիրկուլ՝ միկրոմետրիկ պտուտակով

բացնում են նաև Ա պտուտակը և գրի առնում շտանգենցիքուլի
ցուցմունքը՝ ամբողջ միլիմետրները վերցվում են քանոնի վրա, իսկ
տասնորդական մասերը՝ նոնիում միջոցով:

5. УЗБЕРУСТВО

Բարբակ թիթեղների հաստությունը ինչպես և կոր մակերեսույթ-ների կորության շառավիղը մեծ ճշտութամբ չափելու համար գործածում են սֆերոմետր (նկ. 17). Սֆերոմետրը բաղկացած է մի յեռատանուց (Ա), վորի միջով անցնում ե մի միկրոմետր պտուտակ (Բ): Պտուտակի ներքեի ծայրը սուլը և, իսկ ծայրի վրա աեղավորված ե մի սկավառակ, վորը բաժանված է լինում հավասար մասերի՝ սովորաբար 500 մասի: Յեռատանու վոտներից մեկի վրա, ուղղաձիգ դիրքով, ամրացած ե քանոն, վորի յուրաքանչյուր բաժանմունքը հավասար ե $1/2$ միլիմետրի: Դիսկի մի լրիվ պտույտի ժամանակ դիսկը բարձրանում կամ իջնում ե $1/2$ միլիմետր, հետեւ վարբակի մի բաժանմունքին համապատասխանում ե 0,001 մմ:



Üb. 17. Übersetzungen


Նախ քան սփերոմետրի միջոցով չափումներ կատարելը՝ պետք է վորոշել գործիքի սխալը. յեթե սփերոմետրը դրված ե ճշտված հարթության վրա և Յ պտուտակի սուր ծայրը շոշափում է հարթության մակերևույթը, ապա Ծ սկավառակի զերոն պիտի համընկնի. Ե քանոնի զերոյի հետ: Սովորաբար այդ տեղի չի ունենում և մենք վորոշում ենք գործիքի սխալը՝ քանոնը տալիս և լրիվ $\frac{1}{2}$ միլիմետրերը, իսկ սկավառակը միլիմետրի հազարերորդական մասերը:

Սրանից հետո կարելի յէ անցնել չափման. Յ պտուտակի ծայրը յետ պտաելով բարձրացնում են, և տակը դնում չափվելիք թիթեղը. ապա իջեցնում են պտուտակը մինչև վոր պտուտակի ծայրը շոշափի թիթեղի մակերևույթը: Նորից են չափում սկավառակի բարձրությունը՝ քանոնի և սկավառակի բաժանմունքների միջոցով: Այս թվից հանելով գործիքի սխալը գտնում ենք թիթեղի հաստությունը 0,001 մմ ճշտությամբ: Սֆերոմետրով աշխատելիս շատ կարեն ե կարողանալ պտուտակը այնքան իջեցնել, վոր նրա սուր ծայրը միմիկան շոշափի մակերևույթը՝ այսինքն գտնվի ճիշտ այն հարթության վրա, վորն անցնում ե յետոտանու յերեսունեւել ծայրերով: Ստուգել

այդ կարելի յե հետեւյալ ձևով: Յեթե պտուտակը ավել և իջեցրած քան պետք ե շոշափման համար, ապա վոտներից մեկին ձեռ տալուց ամբողջ սփերոմետրը սկսում ե պտավել պտուտակի շուրջը, իբրև առանցքի: Իսկ յեթե դեռ չի շոշափում, ապա վոտներից մեկը շարժելիս ամբողջ սփերոմետրը մակերեսույթով սահում ե:

6. ՎՈԼՅՈՒՄԵՆՈՄԵՏՐ (ԾԱՎԱԼԱՉԱՓ)

Վոլյումենոմետրը ծառայում է պինդ մարմնի ծավալը չափելու համար: Նա բաղկացած է ապակյա և անոթից, վորի պատերը հաստ են և յեզրերը լավ հղկած: Տ պտուտակի միջոցով Վ անոթը ամուր սեղմվում է Կ կափարիչին: Եռյն անոթը ապակյա խողվակով միացած է մանոմետրի հետ, վորը բաղկացած է յերկու առանձին խողովակներից (ԱԲ և Ը), այդ մասերը իրար հետ միացած են ուստինե խողովակով: Մանոմետրի Ը ծունկը բաց ե և նա կարող է ուղղաձիգ ուղղությամբ շարժվել՝ սկալայի յերկարությամբ, վորը գծված է հայելու մակերեսույթի վրա: Մանոմետրի փակ ծունկը Կ ծորակի միջոցով միանում է արտաքին ողի և Վ անոթի հետ: Այդ ծունկը ունի մի գնդային լայնացում (ա). այդ գնդից վերև և ներքև յերկու խաղ ե քաշած (Ա և Ը): Գնդի ծավալը՝ այդ յերկու խաղերի միջև նախապես պետք է չափված լինի: Անվանենք այդ ծավալը շ. իսկ Վ անոթի ծավալը պլյուս խողովակի ծավալը մինչև Ա գիծը անվանենք ։ Այժմ տեսնենք, թե ինչպես կարելի յե Վ ծավալը վորոշել: Դրա համար բացում ենք Կ ծորակը (վորով մանոմետրի ձախ ծունկը հաղորդակցում է արտաքին ողի հետ) և աջ ծունկը բարձրացնում կամ իջեցնում ենք այնքան, վոր սնդիկը հասնի ճիշտ Յ գծին. այժմ յեթե ծորակը փակենք, մանոմետրի ձախ ծնկի մեջ կունենանք ($v + a$) ծավալով ող, վորը գտնվում է մթնոլորտային ճնշման տակ (H): Բարձրացնենք աջ ծունկը այնքան, վոր սնդիկը հասնի Ա գծին. սնդիկը աջ ծնկի մեջ այլև նույն բարձրության վրա չի լինի. դիցուք Ա-ից բարձր



Նկ. 18. Վոլյումենոմետր

այնքան, վոր սնդիկը հասնի ճիշտ Յ գծին. այժմ յեթե ծորակը փակենք, մանոմետրի ձախ ծնկի մեջ կունենանք ($v + a$) ծավալով ող, վորը գտնվում է մթնոլորտային ճնշման տակ (H): Բարձրացնենք աջ ծունկը այնքան, վոր սնդիկը հասնի Ա գծին. սնդիկը աջ ծնկի մեջ այլև նույն բարձրության վրա չի լինի. դիցուք Ա-ից բարձր

վլինի ի մմ. ուրեմն և ծավալով ողը գտնվում է ($H + h$) մմ ճնշման տակ: Կիրառելով Բոյլ-Մարիոտի որենքը, կարող ենք գրել

$$(v + a) H = v (H + h)$$

Լուծելով այս հավասարումը կստանանք՝

$$v = -\frac{ah}{h} \quad \text{կամ } vh = ah$$

Վ վորոշելուց հետո կարող ենք անցնել անհայտ ծավալի գործման: Տ պտուտակի միջոցով բացում ենք Վ անոթի կափարիչը և մեջը դնում այն մարմինը, վորի ծավալը (x) ցանկանում ենք վորոշել: Վերև կիրառած յեղանակով չափում ենք՝

$$a + v - x \quad \text{ծավալի } \text{համապատասխան } \text{ճնշումը } H$$

$$v - x \quad \text{ծավալի } \text{համապատասխան } \text{ճնշումը } H + h$$

$$\text{Դարձյալ } \text{ունենք}$$

$$(a + v - x) H = (v - x) (H + h')$$

Լուծելով այս հավասարումը ըստ x -ի, կստանանք

$$x = \frac{vh' - ah}{h'}$$

ինչպես քիչ առաջ տեսանք $ah = vh$, այդ պատճառով

$$x = ah \left(\frac{vh'}{h'ah} - \frac{1}{h'} \right) = ah \left(\frac{1}{h} - \frac{1}{h'} \right)$$

կամ

$$x = vh \left(\frac{1}{h} - \frac{1}{h'} \right) = v \left(1 - \frac{h}{h'} \right)$$

Այդպիսով, վորձարկվող մարմնի ծավալը արտահայտվում է հաստատուն և ծավալի $\left(1 - \frac{h}{h'} \right)$ արտահայտության միջոցով:

7. ՍԻՖՈՆԱՅԻՆ ԲԱՐՈՄԵՏՐ

(Մբնոլուցային ննումը ցափելու համար)

Կարորատորիաներում հաճախ գործածվում է Կրակիչի սիֆոնային բարոմետրը: Նա ունի հետեւյալ կազմությունը (Նկ. 19): Հաղորդակից անոթները՝ Ա և Յ միացած են բարակ խողովակով. Ա անոթը դատարկ է, իսկ Յ-ն բաց է: Մթնոլորտային ճնշումը չափվում


և Ը և Ծ մակարդակների տարրերությամբ: Զափումների համար ծառայում ե շարժական Լ քանոնը և N նոնիուսը: Քանոնի Ը ծայրին ամբացած ե մետաղի ողակ, վորի ներքին յեզրը համընկնում ե քանունի զերոյի հետ. նման մի ողակ ել (Ծ) ամրացած ե նոնիուսին, այնպես, վոր նոնիուսի զերոն համընկնում ե D-ի ներքին յեզրի հետ: Զափելու համար № 1 պտուտակը թուլացնում են և № 2 միկրոմետրիկ պտուտակի միջոցով քանոնը գանգաղ շարժում են, մինչև վոր Ը ողակի ներքին յեզրը համընկնի B խողովակի սնդիկի մենիսկի հետ: Ամբացնելով № 1 պտուտակը (վորպեսզի քանոնը այլև չը շարժվի) շարժում են նոնիուսը, մինչև վոր D ողակի ներքին յեզրը համընկնի A խողովակի սնդիկի մենիսկի լինել, վոր համընկնումը տեղի ունենա մենիսկի վերին մասի հետ: Վորից հետո սովորական լեզանակով քանոնի և նոնիուսի ցուցմունքների միջոցով չափում են մթնոլորտային ճնշումը: Ստացած թվի նկատմամբ պետք ե կատարել ուղղութիւր:

Տեմպերատուրայի փոփոխման հետ միասին տեղի է ունենում սնդիկի տեսակարար կողի փոփոխություն. հետևաբար միանուն մթնոլորտային ճնշումը տարրեր տեմպերատուրայի ժամանակ հավասարակշռվում ե սնդիկի տարրեր բարձրություն ունեցող սյուներով: Միակերպության համար պայմանավորվել են մթնոլորտային ճնշումը չափել սնդիկի այն սյունով, վոր կեավասարակշռել մթնոլորտի ճնշումը 0°:

Նկատի պետք ե ունենալ նաև քանոնի յերկարության փոփոխությունը տեմպերատուրայի փոփոխությունից: Ինչպես հայտնի յէ մարմնի (լ₁) յերկարությունը t°-ում արտահայտվում է ալիպես՝

$$l_t = l_0 (1 + \alpha t),$$

վարտեղ l₀ նույն մարմնի յերկարությունն է 0°-ում, իսկ α գծային ընդարձակման գործակիցն է: Յեթե սնդիկի այսն բարձրությունը



Նկ. 19.

Սիֆոնային բարոմետր

t° նշանակենք H_t, իսկ 0°-ում H₀, ապա

$$H_t = H_0 \left[1 + (\beta - \alpha) t \right]$$

Վորտեղ թ-ն սնդիկի ընդարձակման գործակիցն է, պարզ ե, վոր քանոնի և սնդիկի ընդարձակվել հակառակ իմաստով են ազդում H_t-ի արժեքի վրա:

Նախորդ հավասարումից ստանում ենք

$$H_0 = \frac{H_t}{1 + (\beta - \alpha) t} = H_t \left[1 + (\beta - \alpha) t \right]^{-1}$$

և վորովհետև $\beta - \alpha$ շատ փոքր ե, ապա կարող ենք ընդունել

$$H_0 = H_t \left[1 - (\beta - \alpha) t \right]$$

կամ

$$H_0 = H_t - H_t (\beta - \alpha) t$$

Ինչպես տեսնում ենք H₀-ն ստանալու համար H_t-ի նկատմամբ պետք ե ուղղում կատարել. այդ ուղղումը (ΔH_t) հավասար ե

$$\Delta H_t = H_t (\beta - \alpha) t$$

և վորը պետք ե հանվի H_t արժեքից: ΔH_t -ը հաշվելու համար պետք ե տեղադրել β -ի և α -ի արժեքները: Սնդիկի համար $\beta = 0,000181$, և յեթե քանոնն արույրից ե, ապա $\alpha = 0,000019$: Այդպիսով ստանում ենք՝

$$H_0 = H_t - 0,000162 H_t \cdot t$$

$$\Delta H_t = 0,000162 H_t \cdot t$$

8. ՀԱՅԵԼՈՒ ՑԵՎ ՍԿԱՂԱՅԻ ՄԵԹՈԴԸ

Փոքր պտաման, թեքման անկյուններ չափելու համար հաճախ գործածում են այս յեղանակը:

Միենալուն շտատիվի վրա ամրացած են մի սկալա (քանոն) և պտիկական դիտակ, վորի ոկուլարում գտնվում ե թելի խաչ (նկ. 20) դիտակի միջոցով դիտում են ուժեղ լուսավորված քանոնի պտակերը հայելու մեջ, վորը ամրացած է գործիքի պտավող մասին և վորի թեքման անկյունը պետք ե չափել: Դիցուք դիտակով (Մ) հայելու մեջ յերկում ե քանոնի Օ բաժանմունքը (նկ. 20ա), յերբ հայելին թեքվում ե ա անկյամբ, ապա դիտակի մեջ յերե-


վում ուրդ բաժանմունքը, վորը բավարարում ե

$$\operatorname{tg} 2\alpha = \frac{n}{d}$$


հավասարումին. այստեղ ձև գիտակի հեռավորությունն է Հայելուց: Սովորաբար ու անկյունը փոքր եւ լինում. այդ գեղաքում կարող ենք գրել՝

$$2\alpha = \frac{n}{d} \text{ կամ } \alpha = \frac{n}{2d}$$

ուրեմն, թեքման անկյունը (α) չափելու համար պետք է գիտակի մեջ յերկացող թիվը բաժանել գիտակի հեռավորության վրա հայելուց:



Նկ. 20. Մի տասիմի վրա ամրացած եղիսակ յեվ սկալա



Նկ. 20ա. Հայելու յեվ սկալայի մերույ

9. ՊԿՈՒԼԱՐ ՄԻԿՐՈՍՔԵՏՐ

Փոքր հեռավորություններ մեծ ճշտությամբ չափելու համար գործածում են նաև ոկուլար միկրոմետր: Դա մի փոքր սկալա է ($1 \text{ mm} - 5 \text{ mm}$), գծված աղակու վրա, և վորի բաժանմունքները հավասար են $0,1 \text{ mm}$ կամ $0,05 \text{ mm}$: Միկրոմետրը տեղավորում են

միկրոսկոպի մեջ, ոկուլարից առաջ, այնտեղ վորտեղ ստացվում ե որյեկտիվի տված պատկերը: Միկրոսկոպով դիտելով վորեւ առարկա միաժամանակ տեսնում են և առարկան մեծացած և սկալան (վոչ այնքան շատ մեծացած): այդ հնարավորությունն ե տալիս համեմատելու և չափելու առարկան, առարկայի մեծությունը, յեթե նախապես հայտնի յեւ սկալայի յուրաքանչյուր բաժանմունքի արժեքը:

Ոկուլար միկրոմետրի ամեն մի բաժանմունքի արժեքը իմանալու համար, պետք է նրա միջոցով չափել վորեւ յերկու գծերի հեռավորությունը, վորը նախապես հայտնի յեւ, կամ մի այլ ոկուլար միկրոմետրի միջոցով չափել տվյալ միկրոմետրի բաժանմունքի արժեքը:

ԼՈԳԱՐԻԹՄԱԿԱՆ ՀԱՇՎԵՔԱՆՈՒ

1. Լոգարիթմական հաշվեքանոնի կազմությունը: Յերբ կարեք ելինում կատարել մեծ քանակությամբ հաշիվներ մեծ թվերի նկատմամբ, այն ել վոչ ստույդ թվերի կամ յերբ հաշիվներից մեծ ճշություն չի պահանջվում, ապա կարելի յել խուսափել սովորական թվաքանական գործողություններից կիրառելով լոգարիթմական հաշվեքանոնը: Հաշվեքանոնի կառուցման համար ոգտագործված ել լոգարիթմների այն հատկությունը, վոր

$$\log(A \cdot B) = \log A + \log B$$

$$\log \frac{A}{B} = \log A - \log B$$

$$\log(A^n) = n \log A$$

Գոյություն ունեցող բազմաթիվ լոգարիթմական հաշվեքանոններից մենք կնկարագրենք ամենատարածվածը մեղ մոտ, վորը պատրաստում ել „Росметровес“ արեստը:


Հաշվեքանոնը բաղկացած է յերեք հիմնական մասերից՝ ա) հիմնական քանոնից, վորը հետազայռում կանվանենք «քանոն», բ) շարժական ձողիկից, վորը կանվանենք «լեզվակ» (Zunge) և գ) շարժական ապակուց, վորը դրված ել մետաղե շրջանակի մեջ և կոչվելու լու «վիզիր»:

Ապակու վրա, քանոնին ուղղությամբ ուղղությամբ գծված ել մի բարակ գիծ:

Մեր նկարագրած հաշվեքանոնի յերկարությունն է 28 սմ.: «Քանոնի» վրա գծված ել չորս սկալա (շկալա), իսկ լեզվակի յերկու յերեսի վրա ել գծված ել յերեքական սկալա. սկալաների յերկարությունն է 25 սմ.:

Առջին սկալան (ներքեկից) ունի հավասար բաժանմունքներ, վորոնք նշանակված են 0, 1, 2... 10 թվանշաններով (մի ծայրի 0-ն չի գրվում, իսկ մյուս ծայրի 10-ի փոխարեն գրված ել 1):

Եկակու հաջորդական թվերի միջև յեղած տարածությունը բաժանված ել 10 մասի (յերկար գծերով), իսկ վերջինիս յուրաքանչյուր մասը բաժանված ել 5 մասի: Այդպիսով ամբողջ սկալան բաժանված ել 500 մասի: Այս սկալան կոչվում է լոգարիթմական և նշանակվում Լ տառով: Նրա միջոցով կարելի յել գտնել ցանկացած թվի լոգարիթմը:



Նկ. 21. Հաշվեքանոն

Ներքեկից յերկրորդ սկալան, վորը կոչվում է հիմքերի սկալա և նշանակվում Լ տառով, բաժանված ել 1, 2... 9 թվանշաններով, տասը՝ վոչ հավասար մասերի: Այդ թվանշաններին համապատասխան յերկարությունները (ձախ ծայրից հաշված) համեմատական են նրանց լոգարիթմներին. այսինքն՝ 1 և 2, 1 և 3, 1—4 և այլն թվանշանների միջև գտնվող հատվածների յերկարությունները համեմատական են 2, 3, 4... 10 թվերի լոգարիթմներին: Տարածությունը 1—2 թվանշանների միջև բաժանված է տասը մասի (1—9 թվանշաններով) և յուրաքանչյուր մասը դարձյալ տասը մասի լեր բանված. այդպիսով 1—2 ինտերվալը բաժանված ել 100 մասի: 2—3 և 3—4 ինտերվալները բաժանված են 50-ական մասի: Մնացած ինտերվալները (4—5, 5—6, 6—7, 7—8, 8—9) բաժանված են 20-ական մասի:

Յերրորդ սկալան տեղավորված է «լեզվակի» ներքին յեզրի վրա և նույնությամբ համընկնում է նախորդ Լ սկալայի հետ. սա նշանակվում է «լ»-ով:

Չորրորդ սկալան նույնն է, ինչ վոր նախորդները, միայն թվանշաններն սկսվում են հակառակ կարգով, այսինքն սկսվում ել

10-ով (գըլած՝ 1) և վերջանում 1-ով։ Նա գտնվում է լեզվակի վրա (միջին տողը) և նշանակվում Իհ-ով։

Հինգերորդ սկալան գտնվում է «լեզվակի» վերին յեղին,
պատրաստված ենույն ձևով, ինչ 1 սկալան ե, սակայն յերկու ան-
դամ փոքրացած ե. այդպիսով նա պարունակում է բոլոր թվերի լո-
գարիթմները՝ սկսած մեկից մինչև 100-ը:

Այս սկալայի վրա թվերը գրված են հետեւյալ կարգով՝ 1, 2, 3...9, 1 (փոխանակ 10-ի), 2 (20-ի փոխարեն) և այլն մինչև 1 (100-ի փոխարեն): Սկալան նշանակենք K_1 -ով:

Վեցերորդ սկալան, վորը գտնվում է «Քանոնի» վրա, նույննեւ ինչ նախորդության հանակենք Կոսի:

Վերջապես յոթերորդ սկալան (նշանակված Առող) գտնվում է «քանոնի» վերին լեզրի վրա և պարունակում է բոլոր թվերի լուգարիթմները սկսած 1-ից մինչև 1000-ը:

Բացի այս յոթը սկալաներից կա ևս յերեք սկալա, վորոնք նշանակված են լեզվակի տակի յերեսի վրա: Ներքեմի սկալան (նշանակված Տ-ով) տանգինսների սկալան ե. Նրա միջոցով կարելի յեղանել տանգեսնսները՝ $5^{\circ}45'$ մինչև 45° անկյունների:

Միջին սկալան (նշանակված և S+T) ծառայում է $35^{\circ}5$ մինչև $5^{\circ}45'$ անկյունների սինուսները և տանգենսները գտնելու համար։ Վերին սկալան (նշանակված S-ով) ծառայում է $5^{\circ}45'$ մինչև 90° անկյունների սինուսները գտնելու համար։

2. Ի յեվ Լ սկալաների վրա ամեն մի քվի համապատասխան տեղը գտնելու: Նախ տեսնենք, թե ինչպես են գտնում «միանիշ» թվերը. «միանիշ» ասելով հասկանում ենք այնպիսի անկանոն տասնորդական կոտորակ, վորի ամբողջ մասը 9-ից մեծ չէ:

Դիցուք պետք ե գտնել 1,52 թիվը. այս թիվը գտնվում է 1 և 2 միջև (վորոնք նշանակված են խոշոր թվանշաններով). կանգ ենք առնում 5-ի վրա. դնելով վիզիրի զիջը այդ 5-ի վրա, կստանանք 1,5 թիվը. մեզ հարկավոր 1,52 գտնելու համար՝ յերկու բաժանմունք աջ ենք գնում (ամեն մի բաժանմունք այս՝ 1—2 ինտերվալում հավասար է 0,01):

Գտնեաք հիմա 1,478 թիվը։ Այս թիվը գտնվում է 1,47-ի և 1,48-ի միջև։ Խսկ թվերը մենք կարող ենք գտնել յեթե վիզիրի գիծը զնելով 1,48-ի վրա, վիզիրը դեպի ձախ շարժենք գծի հաստությամբ, ապա կստանանք 1,478 թիվը։

Գտնենք 6,56 թիվը. Այս թիվը գտնվում է 6-ի և 7-ի միջև (խոշոր թվանշաններով գրված): Դնելով վիզիրը նրանց ճիշտ միջնագծի վրա կստանանք 6,5 թիվը. իսկ յեթե տանենք դեպի աջ՝ հարկան յերկար գծի վրա, կստանանք 6,6 թիվը. այս երկուսի միջև

կա ևս մի գիծ, ավելի կարճ, քան հարկան դժբը. Նրան համապատասխան թիվը կլինի 6,55: Մեզ հարկավոր 6,56 թիվն ստանալու համար, վեզիրը պետք է դեպի աջ շարժել գծի հաստությամբ (մոտավորապես):

իմանալով հաշվեքանոնի յերկարությունը կարելի յէ հաշվել ամեն մի բաժանմունքի լերկարությունը (ոգտվելով վիզիրից և Լոկալայից), վորը տարբեր ինտերվալներում տարբեր ե. միաժամանակ կարելի յէ ասել, թե ինչպիսի բացարձակ և հարաբերական սխալ ենք անում վորեւ թիվ սկալայի վրա վերցնելիս: Հաշվիները ցուց են տալիս, վոր այդ հաբարերական սխալը գտնվում է $0,15\%$ և $0,2\%$: Միջն: Հաշվեքանոնով հաշվելիս կատարած սխալը կախում ունի նաև հաշվողի փորձառությունից և գործիքի առանձնահատկություններից: Փորձված հաշվողի համար այդ սխալը կարող է լինել $0,1\%$, իսկ սկսնակի համար $0,2\%$ և ավել:

3. Բազմապատկօւմ՝ «միանիչ» բիերի: Դիցուք պետք ե հաշվել
2,46, 3,54 արտադրյալը: Գործողությունը կատարվում ե այսպես:
1 սկալայի վրա գտնում ենք 2,46 թիվը և նրա վրա դնում վիզիրի
գիծը. նույն գծի վրա յենք դնում 1, սկալայի ձախ ծայրը (այսինքն
1 թիվը). ապա 1-ի վրա գտնելով 3,54-ը այդ թվի վրա տեղափու-
խում վիզիրը: 1 սկալայի վրա, այն ժամանակ, վիզիրի գծի տակ
կատնենք արտադրյալը՝ 8,71:

Նկատի ունենալով, զոր 1 և 1₁ սկալաների վրա գրած թվերով
և ձախ ծայրով կազմված հատվածները համեմատական են հենց այդ
թվերի լոգարիթմներին, ապա գումարելով այդ հատվածները մենք
գումարում ենք թվերի լոգարիթմները և այդ գումարը կներկայացնի
արտադրյալի լոգարիթմը, իսկ նրա համապատասխան թիվը՝ արտա-
դրյալը:

36
36 թեթե բազմապատկեխների լոգարիթմների գումարը սու և 1-ը այս ժամանակ վերոհիշյալ է եղանակով չի լինի բազմապատկել: Այս դեպքում լու ծախ ծայրը պետք է փոխարինել աջ ծայրով. այդ նույն ե, թե լորկը արտադրիչի լոգարիթմը գումարելու փոխարեն, հանենք նրա մանտիսի լրացուցիչը (ապացուցել): Դիցուք պետք ե բազմապատկել՝ 7,35 . 9,48: Դրա համար լու վրա գտնում ենք 7,35-ը. նրա հետ համատեղում լու աջ ծայրը. ապա լու վրա գըտ նում 9,48 թիվը, որը համապատասխան թիվը լու վրա կլինի 69,68 = 7,35 . 9,48: Համապատասխան թիվը գտնում ենք վեզիրը միջոցով:

4,28 : 1,94:
Համատեղում ենք լի վրա 4,28. Նրա հետ համատեղում լի ե

1,94 թիվը, այն ժամանակ Լ-ի 1-ի (ձախ ծայրի) համապատասխան թիվը 1-ի վրա կլինի պահանջած թիվը՝ 2,206:

Բաժանման ժամանակ ևս կարող ե պատահել վոր Լ-ի ձախ ծայրը հաշվեքանոնից դուրս գա, այդ տեղի յեւ ունենում, յերբ համարիչի լոգարիթմի մանախը փոքր ե հայտարարի լոգարիթմի մանախից (ապացուցել), Այս դեպքում վարվում ենք նույն ձևով, ինչպես և բազմապատկման ժամանակի, Որինակի համար հաշվենք 2,65^{2,65}, 1-ի վրա գտնում ենք 2,65-ը և նրա հետ համատեղում Լ-ի 8,42 թիվը, այն ժամանակ Լ-ի աջ ձայրը՝ 1-ի վրա տալիս ե պահանջված քանորդը, տվյալ դեպքում 0,314:

5. Բազմապատկում յեվ բաժանում կամախոր թվերի նկատմամբ: Յուրաքանչյուր թիվ (N) կարող ե պատկերացվել այսպես N = a · 10^m, վորոնել ա-ն «միանիշ» թիվ ե, իսկ ուշը դրական կամ բացասական թիվ ե: Որինակ. $4237 = 4,237 \cdot 10^3$, $0,35 = 3,5 \cdot 10^{-1}$: Հետեւարար 4237-ը 0,35-ով բազմապատկելու համար, հախ բազմապատկում ենք, նախորդ յեղանակով՝ $4,237 \cdot 3,5 \cdot 10^{-1}$. ապա արտադրյալը բազմապատկում $10^2 (10^3 \cdot 10^{-1} = 10^2)$:

Նույն ձևով ենք վարվում նաև բաժանման ժամանակ:

Ծանոթություն: Բազմապատկման և բաժանման գործողությունները կարելի յեւ կատարել նաև Կ և K_t սկալաների վրա:

6. Բարձրացնել խոռվիւսի: Այս գործողության համար հաշվեքանոնի «լեզվակը» չի գործածվում:

Ինչպես տեսանք Կ և K_t սկալաները յերկու անգամ կարճ են 1-ից, հետևաբար միանույն հատվածը, վորը 1-ի վրա հանդիսանում ե վորեւ ա-ի լոգարիթմը, K-ի կամ K_t-ի վրա հավասար կլինի Ֆloga, այսինքն կներկայացնի ա² թիվը: Հետեւարար վորեւ ա թվի քառակուրք գտնելու համար պետք ե այդ թիվը վերցնել և սկալայի վրա և նրա հետ համատեղել վիզիրի գիծը. նույն գիծը ցույց կտա Կ-ի վրա ա²:

Որինակ՝ հաշվել 4,5²:

1-ի վրա վերցնում ենք 4,5 և այդ թվի համատեղում վիզիրի գիծը. նույն գիծ տակ Կ սկալայի վրա ունենք 2025 թիվը. բայց վորովեան 4,5²-ին յերկնիշ ե, ապա ուրեմն 4,5² = 20,25:

Դարձյալ մի որինակ. հաշվել 0,36²:

Պատկերացնենք այդ թիվը «միանիշ» թվի միջոցով՝ $0,36^2 = (3,6 \cdot 10^{-1})^2 = 3,6^2 \cdot 10^{-2}$:

Ուրեմն, նախ պետք ե գտնել 3,6², ապա արդյունքը բաժանել 100-ի վրա, կատարելով գործողությունները կստանանք $0,36^2 = 0,13$: Հաշվի միջոցով ուսացվում ե՝ $0,36^2 = 0,1296$:

Հաշվեքանոնի տված սխալը (բացարձակ) տղյալ գեպքում հավասար է 0,0004. իսկ հաբարերական սխալը հավասար է $\frac{4}{1296} \approx 0,003 = 0,3\%$:

7. Քտուակուսի արմատ հանելու: Տվյալ ա միանիշ թվից քառակուսի արմատ հանելու համար, ա թիվը գտնում ենք Կ սկալայի վրա և նրա հետ համատեղում վիզիրի գիծը. նույն գիծի տակ 1-ի վրա ստանում ենք \sqrt{a} : Յեթե տված թիվը «միանիշ» չի, ապա բազմապատկելով 19-ի համապատասխան աստիճանով կարելի յեւ վերածել յերկու արտադրիչների՝ «միանիշ» թվի և 10^m-ի: Գործողությունների հետագա ընթացքը նույնն ե:

8. Խորանարդ աստիճան բարձրացնել: 1 և M (յոթերորդ) սկալաների միջոցով հեշտությամբ գտնվում ե ամեն մի թվի խորանարդը: M-ի թվերը նշանակված են այսպես՝ միենույն հատվածը, վորը 1 սկալայի վրա հանդիսանում ե ա-ի լոգարիթմը, M-ի վրա հավասար է 3 loga, այսինքն ներկայացնում ե ա³. այսինքն, յեթե վիզիրի գիծը 1 սկալայի վրա դրվի ա-ի վրա, ապա M-ի վրա նա ցույց կտա ա³:

Նախ քան խորանարդ բարձրացնելը, թիվի և 10^m արտադրյալի ձևով:

Արինակներ՝ Հաշվել՝ (32,45)³

$$(32,45)^3 = (3,245 \cdot 10)^3 = 3,245^3 \cdot 10^3$$

1-ի վրա վերցնում ենք $3,245$. գտնում նրա համապատասխանը M-ի վրա (վիզիրի միջոցով), Ստանում ենք 342. բայց քանի վոր $3,245^3$ յերկնիշ թիվ ե, ուստի 3,245³ = 34,2. իսկ $32,45^3 = 34,200$ հարաբերական սխալը հավասար է $0,2\%$:

9. Խորանարդ արմատ հանել: $\sqrt[3]{a}$ գտնելու համար, M-ի վրա գտնում ենք ա-ն, և նրա համապատասխանը 1-ի վրա կլինի հենց $\sqrt[3]{a}$: Հաշվենք $\sqrt[3]{4,64}$:

Մ սկալայի վրա վերցնում ենք 4,64 թիվը (4 և 5 թվանշաների միջն). գտնում ենք նրա համապատասխանը 1-ի վրա՝ 1666.

$$\text{բայց } \sqrt[3]{4,64} \text{ միանիշ } ե, \text{ ուստի } \sqrt[3]{4,64} = 1,666:$$

10. Տված թվի լոգարիթմը գտնել: Դրա համար ծառայում ե Լ սկալան, ինչպես տեսանք Լ-ը բաժանված ե 500 հավասար մասերի. իսկ 1-ի վրա վերցրած հատվածները համեմատական են նշանակված թվերի լոգարիթմներին. հետևապես, յեթե վիզիրի գիծը դրվի 1-ի վորեւ ա թվի վրա, ապա նույն գիծը Լ-ի վրա կտա loga (ավելի միշտ, loga-ի մանախը): Բերենք մի շարք որինակներ:

$$\begin{aligned}\log 1,1 &= 0,042 & \log 3,32 &= 0,5^{\circ} 1 \\ \log 1,5 &= 0,176 & \log 5,48 &= 0,738 \\ \log 2,3 &= 0,362 & \log 8,25 &= 0,916\end{aligned}$$

Եւ 1 սկալաների միջոցով կարելի յե կատարել և հակառակ գործողությունը, այսինքն, գտնել այն թիվը, զորի լոգարիթմը տված է:

Օրինակներ 1. $\log x = 0,324$:

Եւի վրա վերցնում ենք 324 թիվը և նրա համապատասխանը 1-ի վրա՝ 211-ը կլինի այն թիվը, զորի լոգարիթմի մանտիսը 324 է. իսկ վորովհետև խարակտերիստիկը 0-ի, ուրեմն $x = 2,11$:

2. $\log x = 1,688$:

Եւի վրա վերցնում ենք 688 և նրա համապատասխանը 1-ի վրա, վորը կլինի 488. բայց վորովհետև խարակտերիստիկը հավասար է մեկի, ապա ուրեմն $x = 48,8$:

Նախորդ ասածներից կարող ենք յեղակացնել զոր հաշվեքանը հնարավորություն կտա մեծ հեշտությամբ և արագությամբ հաշվել բարդ արտահայտություններ:

11. Տված թվի ցրած արժեքը գտնել: Հաճախ կարիք է լինում զանազան թվերի շրջած արժեքը գտնել: Այդ նպատակի համար շատ հարմար է լի սկալան: Ստուգենք լի սկալայի հետեւյալ հատկությունը: Վերցնենք յերկու համապատասխան թվեր՝ 1₁-ի և 1₂-ի վրա. ինչպես տեսնում ենք նրանց արտադրյալը հավասար է 10-ի: Իրոք, 1₁-ի 2-ին՝ լի վրա համապատասխանում է 5 ($2 \cdot 5 = 10$), 4-ին համապատասխանում է 2,5 և այլն: Այս հատկության պատճառն այն է, զոր յերկու իրար համապատասխան թվերի (a_1 և a_2) լոգարիթմների գումարը հավասար է սկալայի յերկարությանը, այսինքն $1 = \log 10$. հետեւյալ

$$\log a_1 + \log a_2 = \log 10$$

$$\text{կամ } a_1 a_2 = 10$$

$$\text{Ուրեմն } a_1 = \frac{10}{a_2}, \text{ իսկ } a_2 = \frac{10}{a_1}$$

Սրանից յերկում է, թե ինչպես պետք է տված թվի շրջած արժեքը գտնել՝ տված թիվը վերցնում ենք 1₁-ի վրա և գտնում նրա համապատասխան 1₂-ի վրա. ստացած թիվը բաժանելով 10-ի վրա կստանանք տված թվի շրջած արժեքը:

12. Սինուսի լեվ տանիքների արժեքներ սարբերում: Յեռանկյունաչափական ֆունկցիաների արժեքները գտնելու համար պետք է նախ լեզվակը շուրջ տալ: Լեզվակի վրա կտեսնենք 3 սկալա: Առաջին սկալան (S) տալիս է սինուսների լոգարիթմների այն անկյունները, զորոնք անմիջապես քանոնի վրա նշանակված են՝ $5^{\circ} 45'$

մինչև 90° : Բաժանմունքների մասշտաբը I սկալայի մասշտաբն եւ այդ հնարավորություն է տալիս I սկալայի միջոցով հաշվել անկյան սինուսը. բայց վորովհետև 1-ի վրա թվերն սկսվում են 1-ից մինչև 10, ապա սինուսի արժեքն ստանալու համար I-ի ցուցմունքը պետք է բաժանել 10-ի վրա:

Նույն յեղանակով T սկալայի միջոցով գտնում ենք անկյան տանգենսը՝ $5^{\circ} 45'$ մինչև 45° անկյունների համար:

S&T սկալայի միջոցով գտնում ենք փոքր անկյունների ($35' 5''$ մինչև $5^{\circ} 45'$) սինուսը և տանգենսը. սակայն այս դեպքում I-ի ցուցմունքը պետք է բաժանել 100-ի վրա:

Օրինակներ

$$\sin 6^{\circ} 30' = 1,133 : 10 = 0,1133$$

$$\sin 10^{\circ} = 1,736 : 10 = 0,1736$$

$$\sin 23^{\circ} 50' = 0,4048$$

$$\sin 55^{\circ} 10' = 0,820$$

$$\sin 74^{\circ} 20' = 0,963$$

$$\tg 10^{\circ} = 1,763 : 10 = 0,1763$$

$$\tg 15^{\circ} 35' = 2,740 : 10 = 0,2740$$

$$\tg 21^{\circ} 48' = 0,401$$

$$\tg 35^{\circ} 40' = 0,7175$$

$$\tg 40^{\circ} 20' = 0,849$$

$$\tg 44^{\circ} 10' = 0,971$$

Յեթե ու անկյունը մեծ է 45° -ից, ապա նրա տանգենսը գտնելու համար կողտվենք հետեւյալ բանաձեկից

$$\tg \alpha = \cotg (90^{\circ} - \alpha) = \frac{1}{\tg (90^{\circ} - \alpha)}$$

վորտեղ

$$90^{\circ} - \alpha < 45^{\circ}$$

Ուրեմն ու անկյան դանգենսը գտնելու համար, նախ պետք է գտնել $90^{\circ} - \alpha$ անկյան տանգենսը, ապա ստացած արժեքը շրջիւ: Վերջին գործողությունը կատարվում է լի սկալայի միջոցով:

Մյուս յեռանկյունաչափական ֆունկցիաները կարելի եւ հաշվել սինուսների և տանգենսների միջոցով:

ՍԻԱԼՆԵՐԻ ՀԱՇՎՈՒՄԸ

1. Յուրաքանչյուր Փիղիկական մեծություն կարող ե վորոշվել (չափելու և հաշվելու պրոցեսների միջոցով) միայն մի վորոշ ճշտությամբ. ճշտության սահմանը կախված է մեր ունակություններից, առևնիկայի զարգացման աստիճանից և պահանջից:

Ֆիղիկական յերկույթի ուսումնասիրությունը կապված է այս կամ այն հաշվելու կամ չափելու պրոցեսի հետ. յուրաքանչյուր արդյունք գիտական արժեք կունենա միայն այն ժամանակ, յերբ գտնված մեծությունների ճշտության աստիճանը մեզ հայտնի է, միայն այդ դեպքում կատարված չափումները արժեք են ներկայացնում. յեթե մի վորեն ֆիղիկական մեծության համար գտնված ե որ. 2,41 թիվը և հայտնի չի այդ թվի ճշտության սահմանը, ապա այդ թիվը վոչ մի արժեք չունի ֆիղիկոսի համար. Այդ ե պատճառը, վոր լարորատոր աշխատանք կատարողից պահանջվում ե վոչ միայն այս կամ այն մեծությունը գտնել, այլ նաև ցույց տալ գտած թվի ճշտության սահմանը:

2. Չափումների պրոցեսին անխուսափելիորեն ուղղեցում են յերկու տեսակ սխալներ՝ սխտեմատիկ և պատահական:

Սխտեմատիկ սխալները առաջանում են գործիքների և կիրառվող մեթոդի թերություններից: Նման սխալների մասին խոսք չելինելու, նրանցից հնարավոր ե խուսափել:

Պատահական սխալների պատճառը մեր գգայանների անկատարությունն եւ. Պատահական սխալները վոչ մի հայտնի որենքի յենթակա չեն՝ մի չափում տալիս ե իսկականից մեծ արժեք, մի ուրիշ չափում նույն հաջողությամբ կարող ե ավելի փոքր արժեք տալ:

Պատահական սխալները հատուկ ուսումնասիրության առարկա չեն ներկայացնում հավանականության տեսության համար. Մեր համար այնուամենայնիվ կարեոր ե ծանոթանալ մի շաբաթ գործնական միջոցների, վորոնք անհրաժեշտ են չափած մեծության ճշտության սահմանը վորոշելու տեսակետից:

3. Ինչպես ասացինք, յուրաքանչյուր չափում իր մեջ պարունակում ե վորոշ սխալ. բայց այդ սխալը կարող ե լինել և դրական, և բացասական. այսինքն չափումից ստացած թիվը կարող ե և մեծ լինել իսկական արժեքից և փոքր. իսկ յեթե չափումը մենք մի քանի անգամ կրկնենք, ապա շատ հավանական ե, վոր դրական նշանով կատարած սխալը հավասարվի բացասական նշանով սխալին: Յեզ յեթե այդ չափումների միջին թվարանականը վերցնենք, ապա իսկականին ավելի մոտ արժեք կստանանք, քան առանձին չափումներից վորեն մեկն ե տալիս: Իրոք, գիցուք մի վորոշ մեծություն, վորի իսկական արժեքն ե ա, չափում ենք ո անգամ և ստանում հետեւյալ թվերը՝

$$a_1, a_2, a_3, \dots, a_n$$

և դիցուք առաջին արդյունքը տարրերվում ե իսկականից (ա-ից) ε_1 -ով, յերկրորդը ε_2 և այլն: Ստանում ենք հետեւյալ հավասարությունները՝

$$\begin{aligned} a - a_1 &= \varepsilon_1 \\ a - a_2 &= \varepsilon_2 \\ &\dots \\ a - a_n &= \varepsilon_n \end{aligned} \quad (1)$$

$\varepsilon_1, \varepsilon_2, \varepsilon_3, \dots, \varepsilon_n$ մեզ անհայտ են. սակայն մենք կարող ենք պնդել վոր այդ սխալները միևնույն հավանականությամբ կարող են և դրական լինել և բացասական. շեղումները և մեծի կողմը, և փոքրի կողմը հավասար հավանական են. յեթե չափումների թիվը (n -ը) բավական մեծ ե: Այդ իսկ պատճառով կարող ենք ընդունել, (մեծ ճշտությամբ), վոր $\varepsilon_1 + \varepsilon_2 + \dots + \varepsilon_n = 0$: Գումարելով (1) հավասարությունները կստանանք՝

$$na - (a_1 + a_2 + \dots + a_n) = \varepsilon_1 + \varepsilon_2 + \dots + \varepsilon_n$$

$$ինչպես ասացինք, \varepsilon_1 + \varepsilon_2 + \dots + \varepsilon_n = 0, \text{ հետեւյալ}$$

$$na = a_1 + a_2 + \dots + a_n, \text{ իսկ}$$

$$a = \frac{a_1 + a_2 + \dots + a_n}{n} = \bar{a} \quad (2)$$

այսինքն, չափվող մեծության ամենահավանական արժեքը (իսկականինքն) մեծությունը մոտ մեծությունը) հանդիսանում ե ո չափումների միջին թվարանականը՝ ձ:

Ուանձին չափումների շեղումները միջին արժեքից (ա-ից) մեծ ճշտությամբ նույն են, ինչպո՞ք շեղումները իսկական (ա) արժեքից

[2] հավասարության հիման վրա], այսինքն հավասար են
 $\varepsilon_1, \varepsilon_2, \dots, \varepsilon_n$

այս մեծությունները՝ վերցրած դրական նշանով կոչվում են տռան-
 ձին չափումների բացարձակ սխալներ:

Առանձին սխալների միջին թվաբանականը կոչվում է միջին
 բացարձակ սխալ. այդ սխալը նշանակենք ε_0 .

$$\text{Ուրեմն} \quad \varepsilon_0 = \pm \frac{|\varepsilon_1| + |\varepsilon_2| + \dots + |\varepsilon_n|}{n}$$

Վերտեղ $|\varepsilon_i|$ -ով նշանակված եւ ε_i -ի թվային արժեքը: Միջին բացար-
 ձակ սխալը (ε_0 -ի) և չափվող մեծության միջին արժեքի հարաբերու-
 թյունը կոչվում է միջին հարաբերական սխալ (E)՝

$$E = \frac{\varepsilon_0}{\bar{a}},$$

Միջին հարաբերական սխալը սովորաբար արտահայտում են
 առկոսներով՝ վորի համար $\frac{\varepsilon_0}{\bar{a}}$ բազմապատկում են 100-ով:

4. Հավանականության տեսության մեջ զրադշում են նաև հե-
 տևյալ մեծություններով՝
 1. առանձին չափումների միջին կվաղբատիկ սխալով, վորը
 կնշանակենք f_m .

2. արդյունքի միջին կվաղբատիկ սխալով (F_m).
 3. առանձին չափումների հավանական սխալով (f_w).

4. արդյունքի հավանական սխալով (F_w):
 f_m և F_m մեծությունները սահմանվում են հետեւյալ հավասա-
 րումներով՝

$$f_m = \pm \sqrt{\frac{\varepsilon_1^2 + \varepsilon_2^2 + \varepsilon_3^2 + \dots + \varepsilon_n^2}{n-1}}$$

Վորտեղ ուշ կատարած չափումների թիվը ե.

$$F_m = \pm \sqrt{\frac{\varepsilon_1^2 + \varepsilon_2^2 + \dots + \varepsilon_n^2}{n(n-1)}}$$

Արտահայտությունների առաջ վերցված են + և - նշանները այն
 իմաստով, վոր հավասար չափով հավանական եւ պլյուս նշանը և
 մինուս նշանը. ալսինքն, իսկական արժեքի համար հավասար հա-
 նական ե

$$\bar{a} + F_m \text{ և } \bar{a} - F_m$$

Վորտեղ ամիջին թվաբանականն ե:

f_w և F_w մեծությունների համար հավանականության տեսու-
 թյունը արտածում ե հետեւյալ հավասարությունները

$$f_w = \pm 0,6745 \quad f_m = \pm 0,6745 \sqrt{\frac{\varepsilon_1^2 + \varepsilon_2^2 + \dots + \varepsilon_n^2}{n-1}}$$

$$F_w = \pm 0,6745 \quad F_m = \pm 0,6745 \sqrt{\frac{\varepsilon_1^2 + \varepsilon_2^2 + \dots + \varepsilon_n^2}{n(n-1)}}$$

Ինչ վերաբերում է առանձին դիտումների սխալներին f_m և f_w
 (կվաղբատիկ և հավանական), պարզ ե, վոր նրանց արժեքը չի փոք-
 րանա, յերբ չափումների թիվը (n) մեծանում ե, վորովհետեւ առան-
 ձին չափումների վորակը կախում ունի գործիքների և դիտողի հատ-
 կություններից. իսկ արդյունքի վերաբերյալ սխալները՝ կվաղբատիկ
 սխալը (F_m) և հավանական սխալը (F_w) փոքրանում են, յերբ n -ը
 մեծանում ե. այդ յերկում ե F_m և F_w արտահայտություններից:

Այդպիսով, իբրև վերջնական արդյունք չափվող մեծության
 համար կարող ենք ընդունել

$$\bar{a} = \bar{a} \pm 0,6745 \quad F_m$$

Կամ

$$a = \frac{a_1 + a_2 + \dots + a_n}{n} \pm 0,6745 \sqrt{\frac{\varepsilon_1^2 + \varepsilon_2^2 + \dots + \varepsilon_n^2}{n(n-1)}},$$

Կիրառենք մեր ասածները մի որինակի նկատմամբ: Դիցուք
 չափելով տված խորանարդի կողը, ստացանք հետեւյալ թվերը՝

22,13 mm, 22,10 mm, 22,09 mm, 23,13 mm

22,08 mm, 22,08 mm, 22,16 mm:

Գտնում ենք նաև միջին թվաբանականը

$$\bar{a} = \frac{22,13 + 22,10 + 22,09 + 22,13 + 22,08 + 22,16 + 22,08}{7}$$

$\bar{a} = 22,11$ mm:

Առանձին չափումների սխալները (վերցրած ե թվային արժեքը
 անկախ նշանից)

$$\varepsilon_1 = |22,11 - 22,13| = 0,02 \text{ mm.}$$

$$\varepsilon_2 = |22,11 - 22,10| = 0,01 \text{ mm.}$$

$$\varepsilon_3 = |22,11 - 22,09| = 0,02 \text{ mm.}$$

$$\varepsilon_4 = |22,11 - 22,13| = 0,02 \text{ mm.}$$

$$\varepsilon_5 = |22,11 - 22,08| = 0,03 \text{ mm.}$$

[2] հավասարության հիման վրա], այսինքն հավասար են
 $\varepsilon_1, \varepsilon_2, \dots, \varepsilon_n$

այս մեծությունները՝ վերցրած դրական նշանով կոչվում են տռան-
 ձին չափումների բացարձակ սխալներ:

Առանձին սխալների միջին թվաբանականը կոչվում է միջին
 բացարձակ սխալ. այդ սխալը նշանակենք ε_0 .

$$\text{Պուրեմ} \quad \varepsilon_0 = \pm \frac{|\varepsilon_1| + |\varepsilon_2| + \dots + |\varepsilon_n|}{n}$$

Վորտեղ $|\varepsilon_i|$ -ով նշանակված են $\varepsilon_1, \dots, \varepsilon_n$ թվային արժեքը: Միջին բացար-
 ձակ սխալը (ε_0) և չափվող մեծության միջին արժեքի հարաբերու-
 թյունը կոչվում է միջին հարաբերական սխալ (E):

$$E = \frac{\varepsilon_0}{\bar{a}}$$

Միջին հարաբերական սխալը սովորաբար արտահայտում են
 առկոսներով՝ վորի համար $\frac{\varepsilon_0}{\bar{a}}$ բազմապատկում են 100-ով:

4. Հավանականության տեսության մեջ զրադշում են նաև հե-
 տևայլ մեծություններով՝

1. առանձին չափումների միջին կվագրատիկ սխալով, վորը
 կնշանակենք f_m .

2. արդյունքի միջին կվագրատիկ սխալով (F_m).

3. առանձին չափումների հավանական սխալով (f_w).

4. արդյունքի հավանական սխալով (F_w):

f_m և F_m մեծությունները սահմանվում են հետևյալ հավասա-
 րումներով՝

$$f_m = \pm \sqrt{\frac{\varepsilon_1^2 + \varepsilon_2^2 + \varepsilon_3^2 + \dots + \varepsilon_n^2}{n-1}}$$

Վորտեղ ուշ կատարած չափումների թիվը ե.

$$F_m = \pm \sqrt{\frac{\varepsilon_1^2 + \varepsilon_2^2 + \dots + \varepsilon_n^2}{n(n-1)}}$$

Արտահայտությունների առաջ վերցված են + և - նշանները այն
 իմաստով, վոր հավասար չափով հավանական ե և պլյուս նշանը և
 մինուս նշանը. ալսինքն, իսկական արժեքի համար հավասար հա-
 անական ե

$$\bar{a} + F_m \text{ և } \bar{a} - F_m$$

Վորտեղ ձ միջին թվաբանականն ե:

f_w և F_w մեծությունների համար հավանականության տեսու-
 թյունը արտածում ե հետեւյալ հավասարությունները

$$f_w = \pm 0,6745 f_m = \pm 0,6745 \sqrt{\frac{\varepsilon_1^2 + \varepsilon_2^2 + \dots + \varepsilon_n^2}{n-1}}$$

$$F_w = \pm 0,6745 F_m = \pm 0,6745 \sqrt{\frac{\varepsilon_1^2 + \varepsilon_2^2 + \dots + \varepsilon_n^2}{n(n-1)}}$$

Ինչ վերաբերում ե առանձին դիտումների սխալներին f_m և f_w
 (կվագրատիկ և հավանական), պարզ ե, վոր նրանց արժեքը չի փոք-
 րանա, յերբ չափումների թիվը (n) մեծանում ե, վորովհետև առան-
 ձին չափումների վորակը կախում ունի գործիքների և դիտողի հատ-
 կություններից. իսկ արդյունքի վերաբերյալ սխալները՝ կվագրատիկ
 սխալը (F_m) և հավանական սխալը (F_w) փոքրանում են, յերբ n -ը
 մեծանում ե. այդ յերեսում ե F_m և F_w արտահայտություններից:

Այդպիսով, իբրև վերջնական արդյունք չափվող մեծության
 համար կարող ենք ընդունել

Գամ

$$a = \bar{a} \pm 0,6745 F_m$$

$a = \frac{a_1 + a_2 + \dots + a_n}{n} + 0,6745 \sqrt{\frac{\varepsilon_1^2 + \varepsilon_2^2 + \dots + \varepsilon_n^2}{n(n-1)}}$

Կիրառենք մեր ասածները մի որինակի նկատմամբ: Դիցուք
 չափելով տված խորանարդի կողը, ստացանք հետևյալ թվերը՝

22,13 mm, 22,10 mm, 22,09 mm, 23,13 mm

22,08 mm, 22,08 mm, 22,16 mm:

Դանում ենք նաև միջին թվաբանականը

$$\bar{a} = \frac{22,13 + 22,10 + 22,09 + 22,13 + 22,08 + 22,16 + 22,08}{7}$$

$\bar{a} = 22,11$ mm:

Առանձին չափումների սխալները (վերցրած ե թվային արժեքը
 անկախ նշանից)

$$\varepsilon_1 = |22,11 - 22,13| = 0,02 \text{ mm.}$$

$$\varepsilon_2 = |22,11 - 22,10| = 0,01 \text{ mm.}$$

$$\varepsilon_3 = |22,11 - 22,09| = 0,02 \text{ mm.}$$

$$\varepsilon_4 = |22,11 - 22,13| = 0,02 \text{ mm.}$$

$$\varepsilon_5 = |22,11 - 22,08| = 0,03 \text{ mm.}$$

$$\varepsilon_6 = |22,11 - 22,16| = 0,05 \text{ mm.}$$

$$\varepsilon_7 = |22,11 - 22,08| = 0,03 \text{ mm.}$$

$$S_{\text{իջին}} \text{բացարձակ սխալը } (\varepsilon_0) \text{ հավասար է} \\ S_{\text{իջին}} = \frac{0,02 + 0,01 + 0,02 + 0,02 + 0,03 + 0,05 + 0,03}{7}$$

$$\varepsilon_0 = \pm 0,026 \text{ mm.}$$

$$S_{\text{իջին}} \text{հարաբերական սխալը } (E) \text{ հավասար է}$$

$$E = \pm \frac{0,026}{22,11} = 0,0012 \text{ կամ } 0,12\%$$

$$0_{\text{ռանդին}} \text{չափումների միջին կվաղըատիկ սխալը } f_m \text{ հավասար է}$$

$$f_m = \pm \sqrt{\frac{0,02^2 + 0,01^2 + 0,02^2 + 0,02^2 + 0,03^2 + 0,05^2 + 0,03^2}{6}}$$

$$f_m = \pm 0,031:$$

$$Արդյունքի միջին կվաղըատիկ սխալը F_m \text{ հավասար է}$$

$$F_m = \pm \frac{0,031}{\sqrt{7}} = \pm 0,004 \text{ mm}$$

$$Արդյունքի հավանական սխալը (F_w) կլինի$$

$$F_w = \pm 0,6745 \cdot 0,004 = \pm 0,0027 \text{ mm}$$

$$Հավանական հարաբերական սխալը կլինի$$

$$\frac{0,0027}{22,11} = 0,0001 \text{ կամ } 0,01\%:$$

Յուրաքանչյուր աշխատանքի բացարձականի վերջում տրվում է սխալի հաշվան լեզանակը, սակայն մենք սահմանափակվում ենք միջին բացարձակ և միջին հարաբերական սխալների հաշվումներով:

5. Գումարի յել տարբերության սխալը: Դիցուք տված են գտնել բազմանկյան պարագիծը (S), զորի առանձին կողմերի յերկարությունները (a, b, c, d...) կարող են չափվել $\pm \Delta a$, $\pm \Delta b$, $\pm \Delta c$ և $\pm \Delta d$ բացարձակ սխալներով. պետք է գտնենք S-ի սխալը (ΔS), S-ի պարագիծ հավասար են:

$$S = a + b + c + d + \dots:$$

Ամենաանքարեն պաստ դեպքը կլինի այն, վոր բոլոր սխալները միենույն նշանը կունենան, այն ժամանակ ամբողջ գումարի սխալը ΔS -ը հավասար կլինի

$$\Delta S = \pm (\Delta a + \Delta b + \Delta c + \dots)$$

այսինքն, գումարի ամենամեծ հնարավոր սխալը հավասար է գումարելիների բացարձակ սխալների գումարին:

Իսկ հարաբերական ամենամեծ սխալը կլինի

$$\frac{\Delta S}{S} = \pm \frac{\Delta a + \Delta b + \Delta c + \dots}{a + b + c + \dots}$$

Դիցուք S մեծությունը ներկայացնում է a և b տարբերությունը՝

$$S = a - b$$

վորտեղ ա և b չափելու հնարավոր սխալներն են $\pm a$ և $\pm b$. S-ի համար ամենամեծ սխալը կստացվի այն ժամանակ, յերբ a-ի և b-ի սխալները տարբեր նշաններ ունեն. հետևաբար տարբերության ամենամեծ բացարձակ սխալը կլինի՝

$$\Delta S = \pm (\Delta a + \Delta b)$$

Իսկ հարաբերական ամենամեծ սխալը կլինի

$$\frac{\Delta S}{S} = \pm \frac{\Delta a + \Delta b}{a - b}$$

6. Արտադրյալի սխալը: Դիցուք S-ով նշանակված է մի ուղղանկյան մակերեսը, զորի կողմերը ա և b կարող են չափվել $\pm \Delta a$ և $\pm \Delta b$ սխալներով. գտնենք S-ի ամենամեծ սխալը (ΔS). ուղղանկյան կողմերի ամենամեծ հնարավոր արժեքը կլինեն ա + Δa և b + Δb. Իսկ ուղղանկյան մակերեսի ամենամեծ արժեքը կլինի՝

$$(a + \Delta a) (b + \Delta b):$$

Հետևաբար

$$\Delta S = (a + \Delta a) (b + \Delta b) - ab$$

կամ

$$\Delta S = b \cdot \Delta a + a \cdot \Delta b + \Delta a \cdot \Delta b:$$

$\Delta a + \Delta b$ -ով կարելի յե արհամարհել՝ իբրև փոքր մեծությունների արտադրյալ զգալի փոքր և մյուս գումարելիներից. այդպիսով ΔS -ի համար ստանում ենք՝

$$\Delta S = \pm (b \cdot \Delta a + a \cdot \Delta b)$$

այսինքն արտադրյալի ամենամեծ բացարձակ սխալը հավասար է արտադրիչներից առաջինին՝ բազմապատկած մյուսի բացարձակ սխալով՝ գումարած յերկորդ արտադրիչը՝ բազմապատկած առաջինի բացարձակ սխալով:

Արտադրյալի հարաբերական ամենամեծ սխալը հավասար է՝

$$\frac{\Delta S}{S} = \pm \frac{b \cdot \Delta a + a \cdot \Delta b}{ab} = \pm \left(\frac{\Delta a}{a} + \frac{\Delta b}{b} \right)$$

այսինքն արտադրելու հարաբերական ամենամեծ սխալը հավասար է
արտադրիչների հարաբերական սխալների գումարին:

Դժվար չի համոզվել զոր յեթե արտադրիչներից մեկը (*որինակ
ան*) հաստատուն է,

$$\text{ապա} \quad \Delta a = 0 \quad \text{և} \\ \Delta S = + a \cdot \Delta b$$

$$\text{իսկ} \quad \frac{\Delta S}{S} = \pm \frac{a \cdot \Delta b}{a \cdot b} = \pm \frac{\Delta b}{b}$$

այսինքն տվյալ դեպքում հարաբերական ամենամեծ սխալը հավասար է վոչ հաստատուն արտադրիչի հարաբերական սխալին:

Յեթե $S = a \cdot b$ ներկայացնում են մի ուղղանկյուն պրիզմայի ծավալ և $[a, b]$ պրիզմայի կողերը՝ a, b, c կարող են չափվել $\Delta a, \Delta b, \Delta c$ սխալներով, այս դեպքում $\Delta S = \frac{\Delta S}{S} \cdot S = \sqrt{a^2 + b^2 + c^2}$ հաշվելու համար, $a + b + c$ արտադրյալը կնշանակենք d -ով՝

$$d = ab$$

$$S = d \cdot c$$

Ինչպես քիչ առաջ տեսանք

$$\Delta d = \pm (a \cdot \Delta b + b \cdot \Delta a)$$

$$\frac{\Delta d}{d} = \pm \left(\frac{\Delta b}{b} + \frac{\Delta a}{a} \right)$$

Մյուս կողմից

$$\Delta S = \pm (d \cdot \Delta c + c \cdot \Delta d)$$

$$\frac{\Delta S}{S} = \pm \left(\frac{\Delta c}{c} + \frac{\Delta d}{d} \right)$$

Տեղադրելով այս յերկու վերջին հավասարությունների մեջ ձեռք

$$\frac{\Delta d}{d} = \pm (ab \cdot \Delta c + bc \cdot \Delta a + ac \cdot \Delta b)$$

$$\Delta S = \pm \left(\frac{\Delta c}{c} + \frac{\Delta b}{b} + \frac{\Delta a}{a} \right)$$

Նման յեղանակով կարելի յե հաշվել $S = \sqrt{a^2 + b^2 + c^2}$ սխալը, յերբ $S = \sqrt{a^2 + b^2 + c^2}$ ներկայացնում ե ավելի քան յերեք արտադրիչների արտադրյալ:

Յեթե արտադրիչների թիվը հավասար է n -ի և արտադրիչները իրար հավասար են, այսինքն, $S = a^n$, ապա, հեշտությամբ կգտնենք,
 $\Delta S = \pm na^{n-1} \cdot \Delta a$

իսկ

$$\frac{\Delta S}{S} = \pm n \frac{\Delta a}{a}$$

Աստիճանի բացարձակ սխալը հավասար է հիմքի բացարձակ սխալին բազմապատկած՝ հիմքի $n-1$ աստիճանով և աստիճանացույցով. իսկ աստիճանի հարաբերական ամենամեծ սխալը հավասար է հիմքի հարաբերական սխալին բազմապատկած աստիճանացույցով:
Մասնավոր դեպքերում, յերբ $S = a^3$,

$$\frac{\Delta S}{S} = 3 \frac{\Delta a}{a}, \quad \text{իսկ} \quad \Delta S = 3a^2 \cdot \Delta a$$

7. Արմատի սխալը: *Դիցուք $S = \sqrt[n]{a}$, վորտեղ ան չափվում է Δa սխալով, պետք ե հաշվել $S = \sqrt[n]{a + \Delta a}$ (ΔS):*
 $S = \sqrt[n]{a + \Delta a}$ յե այսպիս պատկերացնել

$$S = a^{\frac{1}{n}}$$

և կիրառելով նախորդ բանաձևերը կստանանք՝

$$\Delta S = \pm \frac{1}{n} a^{\frac{1}{n}-1} \cdot \Delta a$$

$$\frac{\Delta S}{S} = \pm \frac{1}{n} \cdot \frac{\Delta a}{a}$$

$$\text{Յեթե } n = 2, \quad \text{ապա} \quad S = \sqrt{\Delta a} \quad \text{և}$$

$$\Delta S = \pm \frac{1}{2} a^{\frac{1}{2}} \cdot \Delta a = \pm \frac{1}{2} \cdot \frac{\Delta a}{\sqrt{a}}$$

$$\frac{\Delta S}{S} = \pm \frac{1}{2} \cdot \frac{\Delta a}{a}$$

8. Կոնօրակի սխալը: *Դիցուք, $S = \frac{a}{b}$, վորտեղ աև բ կարող են վորովել Δa և Δb սխալներով. հաշվենք $S = \sqrt{a^2 + b^2}$ սխալը:*

$S = \sqrt{a^2 + b^2}$ համար ամենամեծ սխալը կստանանք, յեթե համարիչի և հայտարարի սխալների նշանները հակառակ են, այսինքն

$$S \pm \Delta S = \frac{a + \Delta a}{b + \Delta b}$$

$$\Delta S = \frac{a + \Delta a}{b + \Delta b} - \frac{a}{b} = \frac{b(a + \Delta a) - a(b + \Delta b)}{b(b + \Delta b)}$$

$$\Delta S = \frac{ba + b \cdot \Delta a - ab - a \cdot \Delta b}{b^2 + b \cdot \Delta b}$$

Կատարելով միացում և արհամարելով $b \cdot \Delta b$, կստանանք՝

$$\Delta S = \pm \frac{b \cdot \Delta a + a \cdot \Delta b}{b^2}$$

Ամենամեծ հարաբերական սխալը կլինի

$$\frac{\Delta S}{S} = \pm \frac{(b \cdot \Delta a + a \cdot \Delta b)}{b^2} \cdot \frac{b}{a}$$

կամ

$$\frac{\Delta S}{S} = \pm \left(\frac{\Delta a}{a} + \frac{\Delta b}{b} \right)$$

այսինքն կոտորակի հարաբերական սխալը հավասար է համարիչի և հայտարարի հարաբերական սխալների գումարին:

9. Սխալի հաշիվը դիֆերենցիալի միջոցով: Դիֆերենցիալ հաշվի որևէքներին ծանոթ լինելու դեպքում, սխալի հաշվը կարելի է կատարել ընդհանուր կանոնների հիման վրա:

Լաբորատոր աշխատանքներ կատարելիս, սովորաբար, մենք չափումներ ենք կատարում մի շարք մեծությունների նկատմամբ, վորոնց ֆունկցիան և հանդիսանում վորոնելիք մեծությունը: Որինակ. յերկրագնդի ձգողական ուժի արագացումը վորոշելու համար մենք պետք են չափենք ճոճանակի յերկարությունը և ճոճման տևողությունը:

Այս չափումները կատարվում են սխալի վորոշ սահմաններում. այդ սխալների միջոցով պետք է հաշվել վորոնելիք մեծության սխալը, յեթե մեզ հայտնի յե, թե ինչպես ե արտահայտվում արագացումը ճոճանակի յերկարության և ժամանակի միջոցով. տվյալ դեպքում արագացումը ֆունկցիա յե յերկու մեծությունների: Դիցուք վորոշելիք մեծությունը՝ շը հայտնի ֆունկցիա յե խ-ի և յ-ի՝ $z = f(x, y)$ վորոշել և սկզբան ամփոփել մի աղյուսակի մեջ, վորը և տալիս ե ջրի յեռման տեմպերատուրայի կախումը ճնշումից (տես աղյուսակ IX):

այստեղ $\frac{\partial f(x, y)}{\partial x}$ -ը $f(x, y)$ -ի մասնակի ածանցյալն ե ըստ չ-ի (յենթադրելով յ-ը հաստատուն), իսկ $\frac{\partial f(x, y)}{\partial y}$ -ը նույն ֆունկցիայի մասնակի անցյալն ե ըստ յ-ի:

Ինչպես (1) հավասարումից յերկում ե շ-ի բացարձակ սխալը հավասար է շ-ի մասնակի ածանցյալին ըստ չ-ի՝ բազմապատկած չ-ի բացարձակ սխալով պլառում շ-ի մասնակի ածանցյալը ըստ յ-ի բազմապատկած յ-ի բացարձակ սխալով: Հարաբերական սխալը շ-ի, այսինքն $\frac{dz}{z}$ հավասար կլինի՝

$$\frac{dz}{z} = \frac{\frac{\partial f(x, y)}{\partial x}}{f(x, y)} dx + \frac{\frac{\partial f(x, y)}{\partial y}}{f(x, y)} dy \quad (2)$$

կամ

$$d(\ln z) = d(\ln f(x, y)) \quad (2')$$

այդպիսով ստանում ենք հետևյալ ընդհանուր կանոնը՝

Վորեւ մեծության հարաբերական սխալը գտնելու համար, պետք է այդ մեծության արտահայտության բնական լոգարիթմը դիֆերենցիալ ըստ չափողի մեծությունների, վորոնք դիտվում են իրեն փոփոխականներ: (2) կամ (2') բանաձերից անմիջապես կստացվեն նախորդ բանաձերը՝ սխալի հաշվումների վերաբերյալ:

Յուրաքանչյուր աշխատանքի վերջում արվում է սխալի հաշվաման յեղանակը. արդյունքի սխալն անպայման պետք է հաշվել. միայն այդ դեպքում կատարած փորձը և չափումները արժեք ունեն:


10. Խնեթրպության (միջարդում): Դիցուք փորձի ավյալներից մեզ հայտնի յե ջրի յեռման տեմպերատուրան տարբեր ճնշման տակ. այդ տվյալները կարելի յե ամփոփել մի աղյուսակի մեջ, վորը և տալիս ե ջրի յեռման տեմպերատուրայի կախումը ճնշումից (տես աղյուսակ IX):

Սակայն աղյուսակը չի կարող ամփոփել բոլոր հնարավոր տվյալները և վոչ ել հնարավոր ե ամեն մի ճնշման համար համապատասխան տեմպերատուրան փորձով վորոշել: Որինակ աղյուսակը մեզ տալիս ե՝

յեթե արտաքին ճնշումը 731 mm ե, ջուրը յեռում ե $98^{\circ}, 92$ -ում
յեթե » » » 732 mm ե, » » » $98^{\circ}, 95$ -ում

Բայց աղյուսակում չենք գտնում ջրի յեռման տեմպերատուրան, յերբ յեռումը տեղի յե ունենում 731,6 mm ճնշման տակ: Նման հար-

Յեթե կշեռքի նժարների վրա վոչ մի մարմին չի գտնվում, զծակը պետք է կանգնած լինի հորիզոնական: Լծակի ուղղությունը ստուգելու համար, նրա մեջտեղից, ուղղահայաց այն գծին, վորը միացնում է և օ պրիզմաների վերևի սուրբ ծայրերը, ամրացրած է յ յերկար սլաքը: Սլաքի ծայրը կարող է շարժվել, կանգնակի հիմքի մոտ ամրացրած, Տ սկալայի յերկարությամբ: Յեթե լծակը հորիզո-



Նկ. 22. Տեխնիկա իմիական կենք

նական ե, ապա սլաքի ծայրը կանգնած պիտի լինի սկալայի ճիշտ միջնակետում, զերո կետի վրա:

Կշեռքի պատկանդանի և նրա կանգնակի մեջ գտնվում է մի սարքավորում, վորը կոչվում է արբետիր: Արբետիրի միջոցով կշեռքի լծակը և նժարները կարելի յե հենման կետերից քիչ բարձրացնել: Այդ գործողությունը կոչվում է արբետիրել: Հակառակ գործողությունը կոչվում է ազատել:

Արբետիրումը կատարում են այն նպատակով, վոր այն ժամանակ, յերբ կշեռքից չեն ոդտվում, պրիզմաները չձնշեն հենման հարթությունների վրա և անտեղի չմաշվեն: Արբիտիրելը և ազատելը կատարում են հատուկ լծակի միջոցով, վորի վ կոթը գտնվում է կշեռքի ներքեմի մասում՝ առաջից կամ կողքից:

Կշեռքի կանգնակին ուղղաձիգ ուղղություն տալու համար, նրա Կ վուները, պտուտական շարժումով, կարելի յե յերկարացնել կամ կարձացնել և, բացի դրանից կշեռքի մեջ, նրա հատակի վրա, գտնվում է մի կլոր վատերպաս: Յերբեմն վատերպասի փոխարեն կշեռքի մեջ, նրա կանգնակի կողքին, կախած է լինում ուղղալար:

Լավ պատրաստած կշեռքը պետք է բավարարի հետեյալ պարագաներին:

1) պրիզմաների հենման կողերը պետք է լինեն իրար զուգահեռ և գտնվեն միևնույն հարթության վրա:

2) լծակի բաղուկները պետք է լինեն իրար հավասար՝ թե յերկարությամբ և թե կշռով:

3) արբետիրը կամ պետք է ազատի բոլոր մասերը միաժամանակ և կամ հետևյալ հաջորդականությամբ՝ նախ լծակը, ապա նժարները:

4) կշեռքի զգայնությունը պետք է լինի հաստատուն՝ անկախ բեռնավորումից:

Կշեռքի զգայնությունը չափվում է Տ սկալայի բաժանմունքների ո թվով, վորով տեղափոխվում է Ի սլաքի ծայրը, յերբ նժարներից մեկի վրա դրված է վորոշ թ կշռաքարը (սովորաբար 1 mg): Առհասարակ զգայնությունը կախում ունի բեռնավորումից: Սակայն, յեթե կշեռքի պրիզմաները ճիշտ են դասավորված, կշեռքի զգայնությունը հաստատուն է, անկախ բեռնավորումից և արտահայտվում է հետևյալ բանաձևով՝

1)

$$n = c \frac{\alpha p}{\omega h}$$


վորտեղ ա լծակի բաղուկի յերկարությունն է, ի՛ ծանրության կենտրոնի հեռավորությունն է հենակետից, իսկ ա լծակի կշռը:

Յուրաքանչյուր կշեռք հաշված է լինում վորոշ սահմանային բեռնավորման համար. ավելի ծանր մարմին կշռելու գեղաքում, կշեռքը կարող է փշանալ, լծակը ծովելու հետեւանքով:

Յուրաքանչյուր կշեռք ունենում է իրեն համապատասխան կշռաքարեր, վորոնք դրված են լինում տուփի մեջ (Նկ. 23, 24, 25):

Կշռաքարերը սովորաբար գասավորված են լինում տուփի մեջ հետևյալ կարգով՝

1) 1000 g, 500, 200, 100, 100, 50, 20, 10, 10, 5, 2, 1, 1, 0,5, 0,2, 0,1, 0,1, 0,05, 0,02, 0,01, 0,01, g.




Նկ. 23. Կոռաբարերի տուփ


ԱԿԱՏ

2) 1000 գ, 500, 200, 200, 100, 50, 20, 20, 10, 5, 2, 2, 1, 0,5, 0,2, 0,2, 0,1, 0,05, 0,02, 0,02, 0,01 գ.

Այսպիսի կշռաքարերի միջոցով համարավոր և կշռել բոլոր ծանրությունները՝ 0,01-ից մինչև 1999,99 գ և կամ մինչև 2111,1 գ:



Նկ. 24. Կօռաքարերի տուփ՝ գրամի մասերով



Նկ. 25. Տարբեր ձեվի կօռաքարեր՝ 10—500 մգ

Կենոքի նետ վարվելու կանոնները:

1) Զի կարելի կշռոքի նժարի մեջ դնել կամ նժարից հանել վորեն մարմին կամ կշռաքար յերե կենոքը արրեսիրած չե:


2) Մարմինը և կշռաքարերը նժարի մեջ դնել հանդարտ շարժումով արրետիրած կշռոքի վրա, այն ել նժարի մեջտեղը:

3) Կշռոքին և կշռաքարերին ձեռք չտալ: Կշռաքարերը տուփից հանելու և նժարի մեջ դնելու համար ծառայում ե հատուկ պինցետ կամ ունելի (նկ. 26):

4) Կշռաքարը նժարից վերցնելիս ոգտագործել պինցետը և նժարից վերցրած կշռաքարը, անմիջապես դնել տուփի մեջ իր տեղում: Կշռաքարը կարող ե գտնվել կամ տուփում և կամ կշռոքի նժարի վրա: Կշռաքարի համար ուրիշ տեղ գործություն չունի:

5) Յեթե կշռվելիք մարմին և նժարի վրա դրված կշռաքարերի կշռի տարրերությունը մեծ ե, կարիք չկա կշռոքը լրիվ ազատեն այլ բարձրան և այնքան թուլացնել, մինչև վոր պարզ յերկա, թե ուլաքը

վոր կողմն և թեքվում: Ապա արրետիրել կշռոքը և ավելացնել կամ պակասեցնել մի կշռաքար: Յեթե կշռվելիք մարմինի և նժարի վրա դրված կշռաքարերի միջև տարրերությունը փոքր ե, այն ժամանակ, լծակը ազատելուց հետո, նա սկսում է ճոճանակի նման ճոճվել:



Նկ. 26. Ի՞նչպիս պետք է կօռաքարը վեցնել

6) Լծակի ազատելը և արրետիրելը պետք ե կատարել դանդաղ յիվ սահուն շարժումով: Յեթե լծակը ճոճվում է, ապա արրետիրելիս պետք ե լինել շատ զգույշ և արրետիրել այն մոմենտին, յերբ ոլաքի ծայրը անցնում է զերո կետով:

7) Յեթե արրետիրած կշռոքի նժարները ճոճվում են՝ ապա մի կտոր թղթի ծալքով զգուշությամբ նախ հանդարտեցնել ճոճումները և հետո միայն ազատել լծակը:

8) Ճոճումները գիտելիս կշռոքի դոնակը պետք ե անպալման ծածկած լինի:

9) Յեթե լծակն ազատելուց հետո նրա ճոճումները շատ թույլ են, ապա բարձրացնելով դուռը նժարից մեկի վրա պետք ե մի քիչ թափահարել ձեռքով, հետեւելով, սակայն, վոր ձեռքը վոչ մի գեպքում չդիպչի կշռոքին: Լծակը, ողի հոսանքի ազդեցության տակ կսկսի ավելի ինտենսիվ ճոճվել, Բավական ե, յեթե ոլաքի ծալքը միշտին դրությունից ճոճվում է 3—5 բաժանմունք դեպի աջ և նույնական գեպքի ձախ:

10) Զի կարելի կշռվելիք մարմինը և կշռաքարերը յերկար ժամանակ թողնել նժարների մեջ, մանավանդ յեթե կշռոքը արրետիր-

ված չե, Յեթե կշռումը վերջացրած ե, անհրաժեշտ է խսկույն կշեռքը արրետիրել. ապա հեռացնել կշռվելիք մարմինը, կշռաքարերը դասավորել առուիքի մեջ և կշեռքը փակել:

Մարմնի կըռումը:

Մարմինը կշռելու համար նախ վորոշում են զերո կետը: Դրա համար աղատում են դատարկ կշռքը և ստիպում, վոր լծակը ճոճվի՝ 3—5 բաժանմունք ամպլիտուդով: Զանց առնելով 1—3 ճոճումները՝ սկսել գրել՝ աչքաչափով վորոշելով տասերորդ մասերը: Ճոճումները դեպի ձախ համարել բացառական բացառական է:

Սկսելով գրի առնել ձախից՝ գրել չորս հաշվում ձախից և յերեք՝ աջից։ Չորս ձախ հաշվումներից վերցնել միջինը—(մինուս) նշանով։ Յերեք աջ հաշվումներից վերցնել միջինը + (ալյուս) նշանով։ Գերակետը կլինի այդ յերկու տվյալների միջինը։ Դիցուք նրան համապատասխանում ե սկալայի լօ թիվը։

Զերո կետը անընդհատ, նույն իսկ կշռելու ընթացքում, փոխում և իր տեղը: Այդ պատճառով, դրանից առաջացած սխալը նվազեցնելու համար, զերո կետը վորոշել էրկու անդամ՝ կշռելուց առաջ և կշռելուց անմիջապես հետո և վերցնել այդ յերկու տվյալներից միջինը:

Առաջին անգամ զերո կետը վորոշելուց հետո, իսկույն, արքետիրած կշեռքի ձախ նժարի մեջտեղում զետեղել կշռվելիք մարմինը, իսկ աջ նժարի մեջտեղում կշռաքարերը և աստիճանաբար ստանալ հավասարակշռության մոտիկ վիճակ։ Դրա համար աչքաչափով վերցնել այն ամենափոքր կշռաքարը, վորը ավելի ծանր է, քան կշռվելիք մարմինը և հաջորդաբար անցնել ավելի մանր կշռաքարերին։

Որինակ՝ կշռում ենք արույրե մի փոքր զլան: Դնում ենք ձախ նժարի վրա 20 գ.: Ազատում ենք կշռոքը: Շատ ե: Արբետիրում ենք: Դնում ենք 10 գ.: Ազատում ենք կշռոքը: Քիչ ե: Արբետիրում ենք: Դնում ենք 5 գ.¹⁾)—շատ ե: Վերցնում ենք: Դնում ենք 2 գ.—շատ ե: Վերցնում ենք: Դնում ենք 1 գ.—շատ ե: Վերցնում ենք: Դնում ենք 0,5 գ.—շատ ե: Վերցնում ենք: Դնում ենք 0,2 գ.—քիչ ե: Դնում ենք ևս 0,2 գ.—շատ ե: Վերցնում ենք: Դնում ենք 0,1 գ.—քիչ ե: Դնում ենք 0,05 գ.—քիչ ե: Դնում ենք 0,02 գ.—քիչ ե: Դնում ենք նորից 0,02 գ.—շատ ե: Վերցնում ենք: Դնում ենք 0,01 գ.: Համարյա թե հասել ե հավասարակշռությանը:


Ուրեմն սժարի վրա դրված են

$$P = 10 + 0,2 + 0,1 + 0,05 + 0,02 + 0,01 = 10,38 \text{ g..}$$

Այսպիսով գտել ենք յերկու կշիռը և պ' = $P + 0,1$ գ և այնպիս, վոր պ' $< P < p'$: Այստեղ P մարմինի իսկական կշիռն ե:

Թողնելով նժարի վրա թ կշռաքարերը, հաշվելով լժակի ճոճումները, զորոցի Ս սլաքի հավասարակշռության դիրքը, դիցուք սլաքին համապատասխանում ե սկալայի վրա 1₁ թիվը (նկ. 27): Այնու-

հետև, ավելացնելով թ կշռաքարին 10 mg, (այդպիսով նժարի վրա դրված կլինի թ կշռաքարերը) նույն ձևով փորոշել ուղաքի 1₂ հավասարակշռության դիրքը: Խոկ 0 կետին ինչպես ընդունեցինք համապատասխանել ե լո դիրքը:



Ակ. 27. Հավասարակըոռության համապատասխան դիրքեր

$l_1 - l_2$ տեղափոխման համար անհրաժեշտ է 10 mg
 $l_1 - l_0$ » » » x »

$$\text{从图知} \quad (l_1 - l_2) : (l_1 - l_0) = 10 : x$$

Վորանեղից

$$x = 10 \frac{l_1 - l_0}{l_1 - l_2} mg$$

Ավելացնելով ք կը ի՞ն հաշված միլիոնամսերի թիվը (2) հավասարությունից կստացվի վոր՝

$$3) \quad P = p + 10 \cdot \frac{l_1 - l_0}{l_1 - l_2}$$

Հարմար ե գրի առնել հետևյալ ձևով: Որինակ՝

l_0'	$+$	l_1	$+$	l_2	$+$	l_0''	$+$
4,7	4,7	3,7	5,6	5,8	4,0	4,9	4,9
4,5	4,5	3,5	5,3	5,6	3,8	4,7	4,7
4,3	4,3	3,3	5,1	5,4	3,6	4,4	4,4
4,1	4,5	3,1	5,33	5,2	3,5	4,2	4,67
4,4		3,4		5,5		4,55	

$$l_0' = 0,05$$

$$l_1 = 0,97$$

$$l_2 = -0,81$$

$$l_0'' = 0,06$$

Այստեղ l_0' ՝ զերո կետն և նախ քան կշռելը. l_0'' ՝ զերո կետն և կշռելուց անմիջակես հետո, իսկ $l_0' - l_0''$ և $l_0'' - l_0'$ միջինն են:
 $l_0' - l_0''$ ճռճռմների միջինը դեպի աջ 4,5, իսկ դեպի ձախ — 4,4:

$$\text{Այս յերկու մեծությունների միջինը } l_0 = \frac{4,5 - 4,4}{2} = 0,05:$$

Նման յեղանակով կստանանք՝

$$l_0'' = \frac{4,67 - 4,55}{2} = 0,06, \quad l_1 = \frac{5,33 - 3,4}{2} = 0,97$$

$$l_2 = \frac{3,8 - 5,5}{2} = -0,85 \quad \text{և} \quad l_0 = \frac{l_0' + l_2''}{2} = \frac{0,05 + 0,06}{2} = 0,055:$$

Տեղադրելով այս արժեքները (2) հավասարման մեջ ստանում ենք

$$x = 10 \frac{0,97 - 0,055}{0,97 + 0,85} \approx 5 \text{ mg},$$

Այսպիսով, բերված որինակի համար

$$P = 10,385 \text{ g}$$

Այս ձևով կշռելու ժամանակ կատարած սխալը 1 mg.-ից պահանջանակ է:

Ուղղումներ:

Ուղղում՝ ողում տեղի ունեցող կռուի կորուսի նկատմամբ
 Համաձայն Արքիմեդի որենքի ամեն մի մարմին ողում իր կշռից կորցնում ե այնքան, վորքան կշռում ե նրա ծավալաչափ ողը:
 Նշանակենք մարմնի կշռով դատարկության մեջ . . . Q

Կշռաքարերի կշռով (վորը թվանշաններով գրված ե նրանց վրա) P
 Մարմնի տեսակարար կշռով d
 Կշռաքարերի տեսակարար կշռով λ
 Որի δ
 Լծակի ձախ բազուկի յերկարությունը K₁
 » աջ » » » K₂
 Լծակի հավասարակշռության դեպքում, այս նժարի վրա ազդող ուժի մոմենտը, հենման կետի նկատմամբ, հավասար ե ձախ նժարի վրա ազդող ուժի մոմենտին, նույն կետի նկատմամբ:

Զախ նժարի վրա ազդող ուժը հավասար ե Q՝ մինուս այնքան, վորքան մարմինը իր կշռից կորցրել ե ողում: Վորովհետև մարմնի ծավալը հավասար ե

$$\frac{Q}{d}$$

ապա մարմնի կորուսալը ողում կլինի՝

$$\frac{Q}{d} \delta \text{ գրամ}$$

Նույն ձևով հաշված կշռաքարերի կորուսալը ողում կլինի՝

$$\frac{P}{\lambda} \delta \text{ գրամ}$$

Կշռելի հավասարակշռության դեպքում ողում, ինչպես ասացինք, մոմենտները հավասար են. ուստի

$$(Q - \frac{Q}{d} \delta) K_1 = (P - \frac{P}{\lambda} \delta) K_2$$

Լայն

$$Q \left(1 - \frac{\delta}{d} \right) K = P \left(1 - \frac{\delta}{\lambda} \right) K_2$$

Վորտեղից՝

$$Q = P \frac{1 - \frac{\delta}{\lambda}}{1 - \frac{\delta}{d}} \cdot \frac{K_2}{K_1}$$

$$\text{Կատարենք } \frac{1 - \frac{\delta}{\lambda}}{1 - \frac{\delta}{d}} \text{ բաժանումը. Բայց } \frac{1}{1 - \frac{\delta}{d}} \frac{\delta}{\lambda} = \frac{\delta}{d} \quad \text{և} \quad \frac{\delta}{d}$$

շատ փոքր լինելը, մենք կարող ենք արհամարհել նրանց բարձր առաջանաները և նրանց արտադրյալը. ուստի կարող ենք գրել

$$\frac{1 - \frac{\delta}{\lambda}}{1 - \frac{\delta}{d}} \approx 1 - \frac{\delta}{\lambda} + \frac{\delta}{d}$$

իսկ Q հավասար եւ

$$Q = P \left(1 - \frac{\delta}{\lambda} + \frac{\delta}{d} \right) \frac{K_2}{K_1}$$

Այն դեպքում յերբ բազուկները իրար հավասար են ($K_1 = K_2$), ունենք՝

$$4) \quad Q = P + \delta P \left(\frac{1}{d} - \frac{1}{\lambda} \right)$$

Ուրեմն, մարմնի կշիռը ձիչտ վորոշելու համար անհրաժեշտ է կմանալ նրա P կշիռը ողում, ողի (δ), մարմնի (d) և կշռաքարերի (λ) տեսակաբար կշիռները: Ողի տեսակաբար կշիռը տվյալ ճնշման և տեմպերատուրի տակ վորոշում են հետևյալ բանաձևով՝

$$\delta = \frac{\delta_{0,760} \cdot H}{760(1 + \alpha \cdot t)}$$

Վորտեղ $\delta_{0,760}$ ողի խտությունն են նորմալ պայմաններում, վորը հավասար են $0,001293 \frac{g}{cm^3}$, իսկ α -ն զաղի ծավալային ընդարձակման գործակիցն են, նաև հավասար են $0,00367$, Ուրեմն՝

$$\delta = \frac{0,001293 \cdot H}{760(1 + 0,00367 \cdot t)}$$

Այսուղի Հ-ը մթնոլորտի ճնշումն են, վորը վորոշում են բարումետրի միջոցով, իսկ տան ողի տեմպերատուրան են:

Ողում բազուկների անհավասարության նկատմամբ

Լծակի բազուկների հավասարությունը վորոշում են հետևյալ ձևով՝ կշռաքարերի տուփից վերցնում են յերկու միենույն արժեք ունեցող կշռաքար (որինակ յերկու 20 գրամանոց) և դնում կշեռքի նժարների վրա: Յեթե ոլտքը շատ քիչ ե շեղվում զերո կետից, կշեռքը կարելի է համարել հավասարաբազուկ: Իսկ յեթե շեղումը զգալի յե՝ կշեռքի բազուկները իրար հավասար չեն:

Այդ դեպքում կշիռը վորոշելու համար դիմում են Գառուսի յեղանակներ:

Այդ յեղանակը հետևյալն ե՝ սկզբից մարմինը դնում են ձախ նժարի վրա և վորոշում նրա P_1 կշիռը. հետո նույն մարմինը դնում են աջ նժարի վրա և նորից վորոշում նրա կշիռը (P_2): Մարմնի ձիշակշիռը ողում նշանակենք P , իսկ բազուկների յերկարությունը K_1 և K_2 : Մոմենտների որենքի համաձայն կստանանք՝ առաջի դեպքում

$$P \cdot K_1 = P_1 K_2,$$

յերկրորդ դեպքի համար.

$$P \cdot K_2 = P_2 K_1$$

բազմապատկելով այս հավասարումները իրար վրա, կստանանք

$$P^2 K_1 K_2 = P_1 P_2 K_1 K_2$$

Կամ կրճատելով $K_1 K_2$ -ով վերջնականապես կստանանք

$$P = \sqrt{P_1 P_2}$$

Տեղադրելով P -ի արժեքը (4) հավասարման մեջ կդանենք մարմնի կշիռը (Q) դատարկության մեջ. Q -ն հավասար եւ

$$5) \quad Q = \sqrt{P_1 P_2} + \delta \sqrt{P_1 P_2} \left(\frac{1}{d} - \frac{1}{\lambda} \right)$$

Սխալի հաշիվը:

(3) Հավասարումից հետեւում ե, վոր մարմնի կշիռը վորոշելիս, նժարի վրա դրված կշռաքարերին պետք է ավելացնել վորոշ թվով միլիսքրամ: Այդ թիվը վորոշում են (2) հավասարումից: Ուրեմն, հարաբերական սխալը $\frac{\Delta x}{x}$ պետք է վորոշել վորպես կոտորակի սխալը, նաև հավասար ե համարիչի սխալին, գումարած հայտարարի սխալը՝ ալիսինը:

$$\frac{\Delta x}{x} = \frac{\Delta l_1 + \Delta l_0}{l_1 - l_0} + \frac{\Delta l_1 + \Delta l_2}{l_1 + l_2}$$

Ա. Ելատանք № 2


2. ԱՆԱԼԻՏԻԿ ԿՇԵՐՏՔ

Ցեֆե պահանջվում ե մարմնի կշիռը վորոշել այնպես, վոր սխալը լինի $0,1$ տց-ից պակաս, առա ոգտագործում են անալիտիկ կշեռք, վորի զգայունությունն անհամեմատ ավելի մեծ ե, քան տեխնիկա-քիմիականինը:


Տասը միլիգրամից ավելի փոքր կշռաքարեր ոգտագործելն, նրանց

փոքրության պատճառով, անհարժար եւ Դրանց փոխարեն գործածում են ռայտեր (հեծվոր): Ռայտերը սովորաբար մետաղյա լարից ծռած մի ողակ ե (նկար 28), վորի կշիռը հավասար ե 10 mg:

Ռայտերը ոգտագործելու համար անալիտիկ կշեռքի (նկ. 29) աչքագուկը բաժանված ե 10 հավասար մասի. բաժանմունքների համար ները սկսվում են լծակի միջնակետից:



Նկ. 28. Ռայտեր



Նկ. 29. Անալիտիկ կշեռք

Կշեռքի պահարանի վերեկի մասում դանվում ե Տ շարժական ձողը, վորի մեկ ծայրում ամրացրած ե ք կառթիկը, իսկ մյուս ծայրը (M) դուրս ե գալիս պահարանից: Կառթիկից կախված ե լինում ռայտերը: M կոթից քաշելով կարելի յե ձողը շարժել՝ լծակի աջ բազուկի յերկարությամբ. իսկ պատելով կարելի յե ռայտերը նստեցնել բազուկի ցանկացած բաժանմունքի վրա:

Յեթե ռայտերը դրված ե տասկերորդ բաժանմունքի վրա, ապա կշեռքի նժամարի վրա նա ազդում ե 10 mg ուժով. իսկ յեթե ռայտերը կախած ե 9, 8, 7 և այլն բաժանմունքներից, ապա, լծակի որենքի համաձայն, ռայտերն ազդում ե համապատասխանաբար 9, 8, 7 և այլն միլիգրամ ուժով:

Կշեռքը կանոնները ե գործողությունները նույնն են, ինչ վորակների քիմիական կշեռքի համար: Որինակ, կշռում ենք յերկաթիւ մի կտոր:

1' կետը վորոշելուց հետո¹⁾ դնում ենք նժամարի վրա 20 g—քիչ ե: Դնում ենք նորից 20 g—շատ ե: Վերցնում ենք և դնում 10 g—քիչ ե: Դնում ենք 5 g—շատ ե: Վերցնում ենք: Դնում ենք 2 g—շատ ե: Վերցնում ենք: Դնում ենք 1 g—շատ ե: Վերցնում ենք: Դնում ենք 0,5 g—շատ ե: Վերցնում ենք: Դնում ենք 0,2 g—քիչ ե: Դնում ենք 0,2 g—շատ ե: Վերցնում ենք: Դնում ենք 0,1 g—շատ ե: Վերցնում ենք: Դնում ենք 0,05 g—քիչ ե: Դնում ենք 0,02 g—շատ ե: Վերցնում ենք: Դնում ենք 0,01 g—քիչ ե:

Այժմ անհամեշշտ ե աշխատել ռայտերով: Ռայտերը դնում ենք 9-րդ բաժանմունքի վրա. լծակի ճոճումներից տեսնում ենք, վոր շատ ե: Զմոռանալով արրետիրել, ռայտերը տեղափոխում ենք 7-րդ բաժանմունքի վրա: Շատ ե: Ռայտերը տեղափոխում ենք 5-րդ բաժանմունքի վրա. մի քիչ պակաս ե:

Այսպիսով ռայտերը 5 բաժանմունքի վրա՝ քիչ պակաս ե, իսկ 7 բաժանմունքի վրա՝ քիչ ավելի յե:

Պետք ե գրի առնել լծակի ճոճումները և այս յերկու գեղքերի համար վորոշել l_1 և l_2 կետերը և վերջապես, հեռացնելով մարմինը և կշռաքարերը, վորոշել l_0'' կետը:

l_2 կշեռքի նժամարի վրա դրված ե՝

$$P_0 = 20 + 10 + 0,2 + 0,05 + 0,01 \text{ g.} = 30,26 \text{ g.}$$

Ռայտերը ազդում ե $p_1 = 5 \text{ mg}$ ուժով մարմնի կշեռք համաձայն (3) բանաձնի կլինի:

$$7) \quad P = p_0 + p_1 + 2 \frac{l_1 - l_0}{l_1 - l_2},$$

վորակ

$$p_0 + p_1 = 30,265 \text{ g.}$$

Ճոճումները հարմար ե այսպես գրի առնել

l_0'	$+$	l_1	$+$	l_2	$+$	l_0''	$+$
7,6	7,2	5,8	6,9	7,0	4,3	7,8	6,8
7,2	6,7	5,5	6,7	6,8	4,1	7,5	6,6
6,8	6,95	5,2	6,8	6,5	4,2	7,2	6,7
7,2		5,5		6,77		7,5	

$$l_0' = -0,13 \quad l_1 = 0,65 \quad l_2 = -1,20 \quad l_0'' = -0,4$$

¹⁾ Ամեն անդամ կշռաքար դնելուց կամ հեռացնելուց առաջ կշեռքը պետք է արքատիրել:

$$l_0 = \frac{l_1 + l_0}{2}; \quad l_0 = \frac{-0,13 - 0,4}{2} = -0,27$$

$$2 \cdot \frac{l_1 - l_0}{l_1 - l_2} = 2 \cdot \frac{0,65 + 0,27}{0,65 + 1,29} = 0,9 \text{ mg}$$

Ուրեմն՝ մարմնի կշիռն ե

$$P = 30 \text{ g. } 265,9 \text{ mg.}$$

Ուղղումները և սխալի հաշվիքը կատարել այնպես, ինչպես առաջած ե տեխնիկո-քիմիական կշեռքի համար:

Ս. ԺԱՄԱՏԱՏԻՔ № 3

3. ՀԵՂՈՒԿՆԵՐԻ ԽՏՈՒԹՅԱՆ ՎՈՐՈՇԵԼԸ ՊԻԿՆՈՄԵՏՐԻ ՄԻՋՈՑՈՎ

Զանգվածի հարաբերությունը ծավալին՝ կոչվում է տեսակարար զանգված կամ խտություն. իսկ մարմնի կշռի հարաբերությունը ծավալին՝ կոչվում է տեսակարար կշիռ. Յերկրագնդի վորուելու կետի համար այս յերկու մեծությունների միջև գոյություն ունի ուղիղ համեմատականություն, այսինքն, յեթե մարմնի կշիռը վորոշում են գրամ-ուժերով, իսկ զանգվածը՝ գրամ-զանգվածներով, ապա թե խտությունը և թե տեսակարար կշիռը արտահայտվում ե միենույն թվային արժեքով: Սակայն պետք ե միշտ հիշել, վոր խտությունը և տեսակարար կշիռը տարբեր ֆիզիկական մեծություններ են:

Խտությունը վորոշելու համար անհրաժեշտ է իմանալ յերկու մեծություն՝ մարմնի զանգվածը և ծավալը: Նշանակելով առաջինը տառը, իսկ յերկրորդը շառը, ապա խտության (d) համար կստանանք՝

$$1) \quad d = \frac{m}{v}$$

Հեղուկի խտությունը վորոշելու համար շատ հարմար և ոգտագործել պիկնոմետրը: Պիկնոմետրը յերբեմն ոգտագործվում է նաև պինդ մարմինների խտությունը վորոշելու համար:

Պիկնոմետրը ամեմապարզ գեպքում մի կոլք ե, վորի տարողությունը 5-ից 30 cm^3 է: Սովորաբար նրա տարողության մեծությունը գրած ե լինում պիկնոմետրի վրա: Պիկնոմետրի վիզը պետք ե շատ նեղ լինի: Վորքան նեղ ե վիզը, այնքան ավելի ճիշտ արդյունք կարելի է ստանալ: Պիկնոմետրի վիզի վրա շրջանագծի ձևով իտաղ ե քաշված:

Խտությունը վորոշելու համար նախ կշռում են դատարկ պիկնոմետրը՝ չոր վիճակում. ապա, յեթե նրա ծավալը ճիշտ հայտնի չե,

նրա մեջ լցնում են (հատուկ ծորակի միջոցով) թորած ջուր՝ մինչև վիզի խաղը և նորից կշռում: Վերջապես, թափելով միջի ջուրը և չուրացնելով պիկնոմետրը, նրա մեջ լցնում են փորձարկվող հեղուկը և նորից կշռում:

Դիցուք, դատարկ պիկնոմետրի կշիռն է p_1 իսկ ջրով լցված պիկնոմետրի կշիռը՝ p_2 . ապա պիկնոմետրի մեջ լցրած ջրի կշիռը p_3 է $p_2 - p_1$: Իմանալով պիկնոմետրի մեջ լցրած ջրի մաքուր կշիռը և տեմպերատուրան, մեծ հեշտությամբ կարելի յել վորոշել այդ ջրի ծավալը, վորի համար պետք ե ոգտագործել հետեւյալ աղյուսակը.

Տիպի առողջություն	1 cm^3 ջրի կշիռը	1 գրամ ջրի ծավալը	Տիպի առողջություն	1 cm^3 ջրի կշիռը	1 գրամ ջրի ծավալը
10	0,9986	1,0014	18	0,9976	1,0024
11	85	15	19	74	26
12	84	16	20	72	28
13	83	17	21	70	30
14	82	18	22	67	33
15	81	19	23	65	35
16	79	21	24	63	37
17	77	23	25	60	40

Ինչպես տեսնում ենք, յերբորդ սյունը պարունակում է մի գրամ ջրի ծավալը՝ տարբեր տեմպերատուրաների համար. ուստի, բազմապատկերով $p_2 - p_1$ համապատասխան տեմպերատուրայի դիմացի թվով, կստանանք ջրի ծավալը, հետեւյար և պիկնոմետրի տարողությունը՝ մինչև վիզի խաղը: Յեթե այդ թիվը շահ, ապա պիկնոմետրի տարողությունը, ինչպես և նրա մեջ լցրած հեղուկի ծավալը կլինի՝

$$v = c (p_2 - p_1)$$

Յեթե պիկնոմետրի կշիռը՝ նրա մեջ լցրած հեղուկով նշանակենք p_3 , ապա հեղուկի մաքուր կշիռը (p) կլինի՝

$$p = p_3 - p_1$$

իսկ տեսակարար կշիռը d հավասար կլինի՝

$$2) \quad d = c \frac{p_3 - p_1}{p_2 - p_1}$$

Այն դեպքերում յերբ պահանջվում է մեծ ձատություն, անհրա-

Ժեշտ և մացնել հետեւյալ ուղղումները՝ ողի մեջ կշիռի կորուստի զերաբերյալ և կշեռքի բազուկների անհավասարության վերաբերյալ:
Այդ ուղղումները հաշվելու համար մացնենք հետևյալ նշանակումները՝

պիկնոմետրի ապակու ծավալը.	v
պիկնոմետրի տարողությունը մինչև խաղը.	w	
փորձարկվող հեղուկի տեսակաբար կշիռը	x	
կշռաքարերի տեսակաբար կշիռը	Λ	
ջրի	»	»	»	»	ρ	
ողի	»	»	»	»	δ	
ապակու	»	»	»	»	D	
կշեռքի ձախ բազուկի յերկարությունը	l ₁	
» աջ » » »	l ₂	

Այդ դեպքում, p_1 կշիռը ստանալու ժամանակ կշռաքարերի ծավալը յեղել է $\frac{p_1}{\lambda}$, p_2 կշիռը ստանալու ժամանակ $\frac{p_2}{\lambda}$ և յերրորդ կշիռի ժամանակ $\frac{p_3}{\lambda}$,

կշեռքի հավասարակշռության պայմանը, այն եւ աջ և ձախ նժարների վրա ազգող ուժերի մոմենտները, լծակի հենակետի նկատմամբ հավասար են, տալիս եւ առաջի դեպքում՝

$$(vD - v\delta) l_1 = \left(p_1 - \frac{p_1}{\lambda} \delta \right) l_2$$

կամ

$$3) \quad v(D - \delta) l_1 = p_1 \left(1 - \frac{\delta}{\lambda} \right) l_2$$

կշեռքի հավասարակշռության պայմանը յերրորդ կշռման դեպքում տալիս եւ՝

$$4) \quad \left[v(D - \delta) + w(\rho - \delta) \right] l_1 = p_2 \left(1 - \frac{\delta}{\lambda} \right) l_2$$

և վերջապես յերրորդ կշռման դեպքում՝

$$5) \quad \left[v(D - \delta) + w(x - \delta) \right] l_1 = p_3 \left(1 - \frac{\delta}{\lambda} \right) l_2$$

հանելով (4) հավասարումից (3)-ը կստանանք՝

$$6) \quad w(\rho - \delta) l_1 = (p_2 - p_1) \left(1 - \frac{\delta}{\lambda} \right) l_2$$

հանելով (5) հավասարումից (3)-ը կստանանք՝

$$7) \quad w(x - \delta) l_1 = (p_3 - p_1) \left(1 - \frac{\delta}{\lambda} \right) l_2$$

բաժանելով (7) հավասարումը (6)-ի վրա կստանանք՝

$$8) \quad \frac{x - \delta}{\rho - \delta} = \frac{p_3 - p_1}{p_2 - p}$$

Զետիոնելով, վերջնականապես կստանանք՝

$$9) \quad x = \frac{p_3 - p_1}{p_2 - p} (\rho - \delta) + \delta$$

ρ ջրի տեսակաբար կշիռը տվյալ տեմպերատուրայի տակ գտնուել են վերե բերված աղյուսակից:

δ ողի տեսակաբար կշիռը տվյալ է տեմպերատուրայի և H միավորը ճնշման տակ վորոշում են հետեւյալ բանաձևով

$$10) \quad \delta = \frac{0,001293 \cdot H}{760 (1 + 0,00367 \cdot t)}$$

Լաբորատորիայի պայմաններում կարելի յեւ մոտավորապես ընդունել՝

$$\delta = 0,00115$$

Փորձի կատարումը

Փորձը կատարելու համար անհրաժեշտ ե Ոստվալդի կամ Ռեն'յովի պիկնոմետրներ, ջերմաչափ, կշեռք 0,1 gr ճշտությամբ և փորձարկվող հեղուկներ:

Հեղուկների խտությունը վորոշելու համար շատ հարմար է Ոստվալդի պիկնոմետրը (յերբեմն այդ պիկնոմետրը սխալմամբ անվանում են Շալբենգելի պիկնոմետր):

Դա մի Ս ձև խողովակ ե, վորի մի կողմը բարակ ե, իսկ մյուսը հաստ (նկ. 30), Պիկնոմետրի մեջ հեղուկի լցնելը կատարվում է այնպես ինչպես ցույց է տված 31 նկարում: Ա ծայրը իջեցնում են հեղուկով լիքը բաժակի՝ մեջ, իսկ Ե ծայրից առաջացնում են ողի նոսրացում. ապա հեղուկը ինքը հեշտությամբ լցնում է պիկնոմետրը: Նորացում առաջացնելու համար վերցնում են մի լիտրանոց անոթ (A), վորի խցանի միջով անց Ե կացրած յեռածալը խողովակ (d): Այդ խողովակի մի ծայրը ուստինե խողովակով միացրած է պիկնոմետրի (տես նկար 31) Ե մասին, իսկ մյուս ծայրին միացրած է մի ուրիշ խողովակ, վորը ծառայում է A անոթից ողը դուրս ծծելու

համար: Հեղուկը պիկնոմետրի մեջ պետք է լինի այնքան լցրած, վոր մենիսկը հասնի մինչև ո նշանացույցը: Յեթե ավելի լցվեց,

ապա պետք է ծծան թղթով և ծայրից ավելցուկ հեղուկը հեռացնել: Իսկ յեթե հեղուկը քիչ ելցվել պիկնոմետրի մեջ, ապա ա ծայրից մտցնում են ապակյա ձողից կախված հեղուկի մի կաթիւ:


Պետք է հետեւ, վոր պիկնոմետրի մեջ ոդի բշտիկներ չմընան:

Փորձը կատարել հետեւյալ կարգով:

Պիկնոմետրը սկզբից մաքրել քրոմական լուծույթով և ապա մի քանի անգամ մաքրու ջրով լվալ: Այնուհետև, կամ անմիջապես չորացնել և կամ սկզբից լվալ սպիրով, իսկ հետո մաքրու եթերով և ապա չորացնել: Չորացնելու համար պետք է ուժինե փուքով, կամ ողահան մեքենայի ոդությամբ պիկնո-

մետրի միջով տաք և չոր ոդ անցկացնել:

Կշռել պիկնոմետրը 0,1 գրամ ճշտությամբ, դրա համար պետք է պիկնոմետրը կախել և կետից կշռել նժարից:



Նկ. 31. Պիկնոմետր լցնել հեղուկով

Լցնել պիկնոմետրը մաքրու ջրով (յուլց տված ձևով) և համոզվելով, վոր նա դրսից չոր և պիկնոմետրը նորից կշռել:

Վորոշել ջրի տեմպերատուրան:

Հեռացնել պիկնոմետրի միջի ջուրը. դրա համար պետք եւ թեքելով և ծայրից ցած, ա ծայրից փուքով ոդ փչել:

Ներսից և դրսից պիկնոմետրը չորացնել:

Լցնել նրա մեջ փորձարկող հեղուկը և նորից կշռել:


Կշռը վորոշելուց հետո, հեռացնել պիկնոմետրի միջի հեղուկը և մաքրել պիկնոմետրը վերը ցույց տված յեղանակով:

Վորոշել (10) հավասարման հիման վրա ոդի խտությունը, իսկ ջրի խտությունը վերցնել աղյուսակից:


(9) հավասարման համաձայն վորոշել հեղուկի խտությունը:

Այն գեղքում, յերբ պիկնոմետրը ունի կոլթի ձեւ, հեղուկը լցնում են ձագարի միջոցով (նկ. 32): Այս պիկնոմետրը դատարկելու համար մտցնում են նրա մեջ մի կապիլար խողովակ և նրա միջոցով ոդ ներս մղում՝ պահելով պիկնոմետրի կոկորդը դեպի ցած:

Յեթե պահանջվում է պիկնոմետրի միջոցով վորոշել պինդ մարմնի տեսակարար կշռը, ապա ոգտագործում են մի ուրիշ ձեխ պիկնոմետր (նկ. 33): Նա ունի լայն բերան (A), վորը փակվում է յերկարավիղ սնամեջ խցանով. խցանի վրա արված ե մի խաղ (B):



Նկ. 32. Պիկնոմետրի մեջ ձագարով հեղուկ լցնել



Նկ. 33. Պիկնոմետր՝ պինդ մարմնի տեսակարար կփոք փառակու համար

Սխալի հաւաքելը

Սխալի հաշիվը կատարվում ե բանաձեի հիմնական մասի նկատմամբ, առանց հաշվի առնելու (ρ — δ) և ծ մասերը:

Այդ դեպքում, նշանակելով $\frac{P_3 - P_1}{P_2 - P_1} = d$ կստանանք

$$\frac{\Delta x}{x} = \frac{\Delta d}{d}$$

$\frac{\Delta d}{d}$ հարաբերական սխալը վորոշել վորպես կոտորակի սխալը. Համապատասխան է համարիչի և հայտարարի հարաբերական սխալների գումարին:

Ուրեմն հարաբերական սխալը հավասար է՝

$$\frac{\Delta \mathbf{d}}{\mathbf{d}} = \pm \left[\frac{\Delta(\mathbf{p}_3 - \mathbf{p}_1)}{\|\mathbf{p}_3 - \mathbf{p}_1\|} + \frac{\Delta(\mathbf{p}_2 - \mathbf{p}_1)}{\|\mathbf{p}_2 - \mathbf{p}_1\|} \right],$$

Աշխատանք № 4

4. ՀԵՂՈՒԿՆԵՐԻ ՏԵՍԱԿԱՐԱՐ ԿՇԻՌԻ ՎՈՐՈՇԵԼԸ ՎԵՍՏՖԱԼԻ
ԿՇԵՐՔԻ ՄԻՋՈՑՎ

Հեղուկի տեսակաբար կշռը վորոշելու համար, պետք է վերցնել մի պինդ մարմին, վորը զուրկ լինի նկատելի ծակոտիկներից և քիմիական խնամակցությունից տվյալ հեղուկի նկատմամբ և այդ մարմինը կշռել, 3 անգամ ողի, ջրի և հետաքոտելի հեղուկի մեջ:

Նշանակենք մարմնի կշիռը ողում p_1 , ջրի մեջ p_2 և փորձարկվող հեղուկի մեջ՝ p_3 . Համաձայն Արքիմեդի՝ որենքի p_1 մարմնի ծավալաչափ ջուրը կկշռի $p_1 - p_2$ և ուրեմն, այս տարրերության թվային արժեքը կտա մեզ մարմնի ծավալը, արտահայտած խորանարդ սանտիմետրներով։ Նույն որենքի հիման վրա մարմնի ծավալաչափ հեղուկի կշիռը կլինի $p_1 - p_3$. Ուրեմն, այս յերեք կշռումներից հետեւ վում ե, վոր $p_1 - p_2$ խորանարդ սանտիմետր հեղուկը կշռում ե $p_1 - p_3$ գրամ. հետևաբար նրա տեսակարար կշիռը հավասար ե՝


$$1) \quad d = \frac{p_1 - p_3}{p_1 - p_2}$$

Հեղուկի տեսակարար կշիռը վորոշելու այս ձևն ունի այն անհարմարությունը, վոր պահանջվում է կատարել լեռեր կառում:

Վեստֆալի կշեռքով հեղուկների տեսակաբար կշիռը վորոշելիս, այդ յերեք կշռելի յե փոխարինել միայն մեկով և այդպի-սով շատ ավելի արագ և մեծ ճշտությամբ վորոշել հեղուկի տեսա-կաբար կշիռը:

Գործիքի նկարագրություն

Վեստֆալի կղեռքը (տես նկար 34) կազմված է՝ A հենարանից, վորի վրա ամրացրած և B սնամեջ սյունյալիք։ Սյունյակի մեջ գտնվում է կղեռքի և կանգնակը, վորը D պտուտակի միջոցով կարելի յեւ ամրացնել անհրաժեշտ բարձրության վրա։ Կանգնակի



Նկ. 34. Վեստալի կտեղով

ծալըռում գտնվում ե Հ հենարանը, վորի վրա հենվում ե (մի յեռանիստ
պղիզմայի սուր կողքով) անհավասար բազուկներ ունեցող Ից լժակը,
լժակի ձախ կարճ բազուկի ծալըռում գտնվում ե Բ հակակշիռը, վորը
վերջանում ե Կ սրածայրով: Կ սրածայրի դիմաց, հենարանի շրջա-
նակի վրա, գտնվում ե լերկըրորդ ու սրածայրը: Կշեռքը համարվում ե
հավասարակշռած, չեթե և ու ծայրերը ճիշտ իրար դիմաց են գտնը-
վում:

Լծակի աջ՝ ավելի յերկար բազուկը բաժանված է 10 հավասար մասերի, վորոնք նշանակված են թվանշաններով 1-ից 9-ը, իսկ 10-րդը ո կետն եւ 10-րդ կետից կախված է S ձեր կարթը, իսկ կարթից ը թելի միջոցով Q լողանը: Կշեռքի սյունյակին ուղղաձիգ դրություն տալու համար ծառայում է պատվանդանի S պատուակը, իսկ ուղղաձիգ լինելը ստուգելու համար՝ թելից կապած և մի փոքր ծանրոց և վորը այդպիսով ուղղալարի դեր և խաղողմ:

Բացի այս մասերից կը ուժի հետ պետք ե լինի հատուկ ձևի և մեծության մի բաժակ, մի ջերմաչափ և կուարառեռով մի տուփ:

Կշռաքարերի թիվը 4-ից յերկու հատ R₁, մեծ և իրար հավասար, մի հատ R₂ միջակ և մի հատ R₃ փոքր: Այդ կշռաքարերը ունեն ույսերի ձև, այնպես, զոր նրանք կարող են ճեծնել լծակը տեղափորկելով նրա բաժանմունքների փոսիկներում: Կշռաքար R₃-ը 10 անգամ թեթև է R₂-ից, իսկ R₂-ը 10 անգամ թեթև է R₁-ից:

R հակակորի մեծությունը այնպես եւ ընտրած, վոր կշեռքը ողում հավասարակշռության մեջ ե, յերբ նրա սյունյակը ուղղաձիգ ե և ո ծալրից կախած ե Q լողանը:

R₁ կշռաքարի մեծությունը այնպես եւ ընտրված, վոր յերբ լողանը ընկղմում են 15° C տեմպերատուրա ունեցող մաքուր ջրի մեջ, ապա կշռքը հավասարակշռելու համար R₁ ծանրոցը պետք ե նստի լծակի 10-րդ բաժանմունքում (ո կետը): Արքիմեդի որենքի հիման վրա կարելի յեւ յեղբակացնել, վոր R₁ ծանրոցի կշիռը հավասար ե Q լողանի ծավալաչափ ջրի կշռին:

Փորձի կատարումը

Փորձը կատարելու համար անհրաժեշտ ե՝ 1 վեստֆալի կշռք, 4 ույստերներ, 1 ապակյա լողան, բարակ թելով և կարթով, 1 ուղղալար, 1 բաժակ և մի քանի սրվակ տարրեր հեղուկներով (լուծույթներով):

Լծակի հենարանը կշռքի նկատմամբ այնպես դասավորել վոր լծակի պրոեկցիան հատակի վրա անցնի S պտուտակով և հենարանի մյուս յերկու վուտքերով կազմած անկյան կիսողով: Ուղղալարի և S պտուտակի միջոցով տալ սյունյակին ուղղաձիգ դիրք: Լողանը ինսաքով լվալուց և չորացնելուց հետո կախել թելի և կարթի միջոցով լծակի ո բաժանմունքից, Յեթե և ո որածայրերը ճիշտ իրար դիմաց չեն, ապա պտտել R հակաշիռը դեպի աջ կամ դեպի ձախ այնքան, մինչեւ վոր այդ ծայրերը ճիշտ հարմարվեն:

Լցնել բաժակի մեջ այն հեղուկից, վորի տեսակարար կշիռը հանձնարած ե վորոշել և բաժակը այնպես դասավորել վոր լողանը ընկղմի հեղուկի մեջ:

Կշռքի մինչև այդ յեղած հավասարակշռությունը կիսախտվի: Հավասարակշռությունը վերականգնելու համար ոգտագործել ույստերները:

Վերցնել սկզբից R₁-ը և կախել 10 բաժանմունքից. յեթե շատ ե, ապա ունելիով R₁-ը տեղափոխել բաժանմունքից բաժանմունք գեպի ձախ այնքան, մինչեւ վոր գտնվեն յերկու այնպիսի իրար մոտ գտնվող բաժանմունք, վորոնց մեջից կախած լինելու դեպքում և ծայրը բարձրանում ե, իսկ մյուսից կախած լինելու դեպքում իջնում ե (ո ծայրի համեմատությամբ): Դիցուք դրանք 8 և 9 փոսիկներն են: Թողնելով R₁ ույստերը այն բաժանմունքի վրա, վոր տալիս ե ծալրի իջեցում (մեր դեպքում 8 փոսիկի վրա), կախել 10 բաժանմունքից R₂ ույստերը և այնուհետեւ նրա հետ վարդիլ նույնպես, ինչպես վարդեցիք R₁ ույստերի հետ: Դիցուք, յերբ R₂-ը գտնվում ե 5 փոսիկի վրա և ծայրը բարձր ե, իսկ յերբ գտնվում ե 4 փոսիկի

վրա և ծայրը ցածր ե, քան ո սրածայրը: Թողնելով R₂-ը 4 փոսիկի վրա նույն ձեռվ վերջնական հավասարակշռումը կատարել R₃ ույ-տերով: Դիցուք հավասարակշռությունը ստացվեց, յերբ R₃-ը գտնվում ե 7 փոսիկի վրա:


Ամենամեծ ույստերի կշիռը R₁-ի, յեթե նա դրված ե առաջի փոսիկի վրա, ապա, լծակի որենքի համաձայն, նրա աղղեցությունը հավասար կլինի 0,1R₁, յերկրորդի վրա՝ 0,2R₂ և այլն: Նույնը կարելի յեւ ասել R₂ և R₃ ույստերների մասին: Հիշենք, վոր R₃ = 0,1R₂ և R₂ = 0,1R₁: Մեր որինակում R₁ ույստերը դրված ե 8 փոսիկի վրա և ուրեմն, նրա ազդող ուժն ե 0,8R₁, R₂ ույստերը դրված ե 4 փոսիկի և նրա ազդող ուժն ե 0,4R₂ = 0,04R₁, իսկ R₃ ույստերը դրված ե 7 փոսիկի վրա և նրա ազդան ուժն ե 0,7R₃ = 0,007R₁: Այսպիսով յերեք ույստերները միասին աղղում են 0,8R₁ + 0,04R₁ + + 0,007R₁ = 0,847R₁ ուժով, վորը, համաձայն Արքիմեդի որենքի, հավասար ե այն ուժին, վորով լողանը գուրս ե մղվում հեղուկից:

Այդպիսով լողանի ծավալաչափի հեղուկի հավասար ե 0,847R₁ իսկ նույն լողանի ծավալաչափ ջրի կշիռն ե R₁: Հետևաբար, հեղուկի տեսակարար կշիռը կլինի՝

$$2) \quad d = \frac{0,847R_1}{R_1} \text{ կամ } d = 0,847$$

Ուշադրություն: Բաժակի մեջ հեղուկից պետք ե այնքան լցնել վոր լծակի հավասարակշռված վիճակում, լողանը լրիվ չափով ընկղմած լինի հեղուկի մեջ, ինչպես ցույց ե տված 35 նկարում: Միաժամանակ պետք ե հետևել վոր լողանը չհենվի հատակին և չշոշափի բաժակի պատերը:

Յեթե (Q լողանի մի ուրիշ հեղուկի մեջ ընկղմած լինելու դեպքում) լծակը հավասարակշռելու համար ստիպված եք լինում առաջի R₁ ույստերը կախել 10 բաժանմունքից, յերկրորդ R₁ ույստերը գնել 1 փոսիկի վրա, R₂ ույստերը 3 փոսիկի վրա և R₃ ույստերը 9 փո-



Նկ. 35. Լողանը լրիվ ընկղմել հեղուկի մեջ

սիլի վրա, ապա այդ հեղուկի տեսակարար կշռը կլինի:

$$3) \quad d = \frac{R_1 + 0,1R_1 + 0,03R_1 + 0,009R_1}{R_1} = 1,139.$$

Փորձը կատարել ամմոնիքլորիդի (NH_4Cl) 32% , 16% , 8% , 4% և 2% լուծույթներով: Լուծույթները կամ պատրաստի վիճակում կստանաք աշխատանքների զեկավարից և կամ կպատրաստեք ինքներդ հետևյալ յեղանակով:

Կշռել 32 գրամ NH_4Cl , լցնել մենզուրի մեջ և նրա վրա ավելացնել այնքան մաքուր ջուր, վոր ստացվի 100 cm^3 լուծույթ. այդպիսով կստացվի 32% . Այդ լուծույթից ճիշտ կեսը լցնել առանձին պրվակի մեջ, իսկ մյուս կեսի վրա ավելացնել 50 cm^3 ջուր, կստացվի 16% լուծույթ: Այդ լուծույթի ճիշտ կեսը լցնել մի ուրիշ սրվակի մեջ, իսկ մնացածի վրա նորից ավելացնել 50 cm^3 ջուր, կստացվի 8% լուծույթ, և այսպես շարունակ մինչև 2% կամ 1% լուծույթ ստանալը:

Չափել այդ լուծույթների տեմպերատուրան և տեսակարար կշռը այդ տեմպերատուրի տակ ու գծել այն կորը, վորը ցույց են տալիս տեսակարար կշռի կախումը կոնցենտրացիայից, նշանակելով արսցիսների առանցքի վրա կոնցենտրացիաները, իսկ որդինատների առանցքի վրա՝ համապատասխան տեսակարար կշռները:

Բացի NH_4Cl -ի լուծույթներից վորոշել վորեւել ջրից թեթև հեղուկի տեսակարար կշռը, որինակ՝ սպիրտի կամ եթերի:

Ուղղումներ:

Աշխատանքը կատարելիս հաշվի չեն առնված ծանրոցների և լողանի կշռությունը որում և բացի այդ ջրի տեսակարար կշռը 15°C տակ համարվում եր հավասար մեկի, մինչ դեռ այդ աղես չե:

Ուղղումներ կատարելու համար նշարակենք՝

լողանի ծավալը M

մեծայտերի կշռը

լծակից կախած ռալտերների կշռը յերբ լողանը N

հեղուկի մեջ ե, իսկ լծակը հավասարակռած ե ρ

ջրի տեսակարար կշռը 15°C տակ. δ

որի ֆորձի պայմաններում d

լողանի աղեղում x

ֆորձարկող հեղուկի տեսակարար կշռը β

ծանրոցների տեսակարար կշռը u

(R) հակակշռի կշռը որում

Հողանը հավասարակռած ե որում յեթե՝

$$4) \quad u = V(d - \delta)$$

Հողանը հավասարակռած ե ջրում յեթե՝

$$5) \quad u = V(d - \rho) + M \left(1 - \frac{\delta}{\beta} \right)$$

Հողանը հավասարակռած ե փորձարկող հեղուկի մեջ յեթե՝

$$6) \quad u = V(d - x) + N \left(1 - \frac{\delta}{\beta} \right)$$

Հանելով (5) հավասարումից (4) հավասարումը, կստանանք՝

$$V(\delta - \rho) + M \left(1 - \frac{\delta}{\beta} \right) = 0$$

կամ՝

$$7) \quad V(\rho - \delta) = M \left(1 - \frac{\delta}{\beta} \right)$$

Հանելով (6) հավասարումից (1) հավասարումը, կստանանք՝

$$V(\delta - x) + N \left(1 - \frac{\delta}{\beta} \right) = 0$$

կամ՝

$$8) \quad V(x - \delta) = N \left(1 - \frac{\delta}{\beta} \right)$$

Բաժանելով (8) հավասարումը (7) հավասարման վրա, կստանանք՝

$$\frac{x - \delta}{\rho - \delta} = \frac{N}{M}$$

$$x - \delta = D \cdot \frac{N}{M}$$

$$\frac{x - \delta}{\rho - \delta} = D$$

Այստեղից ստանում ենք՝

$$x = D(\rho - \delta) + \delta$$

Այստեղ D-ն հեղուկի տեսակարար կշռն ե՝ վորոշված (2) կամ

(3) հավասարման միջոցով (այսինքն առանց ուղղումների), իսկ այդ նույն հեղուկի տեսակարար կշռն ե ձառնումներից հետո:

Զրի տեսակարար կշիռը 15° կգմնենք աղյուսակներից՝

$$\rho = 0,99915 \frac{\text{g}}{\text{cm}^3},$$

Ողի տեսակարար կշիռը ավյալ և տեմպերատուրի տակ և հոմբարոմետրական ճնշման տակ կվորոշենք հետեւյալ բանաձեռք՝

$$d = \frac{0,001293 \cdot H}{760 \cdot (1 + 0,00367 \cdot t)}$$

Աշխատանք № 5

5. ՊԻՆԴ ՄԱՐՄԵԼ ՏԵՍԱԿԱՐԱՐ ԿՇՈՒԻ ՎՈՐՈՇԵԼԸ ԺՈՂԻԻ ԿՇԵՌՔԻ ՄԻՋՈՑՈՎ


Ժողիի կշեռքը ներկայացնում է մի յերկար զսպանակ, վորի մի ծալքը ամրացրած և հատուկ շտատիվից (Ա կետում). իսկ մյուս ծայրին ամրացրած են յերկու դարակներ (Բ և Ծ) (նկար 36). Ա պտուտակների միջնոցով շտատիվին կարելի լի տալ ուղղաձիգ դիրք: Շտատիվի և զսպանակի միջև դասավորված ե միլիմետրանոց սկալա, դասավորված վորի մի կեսը ուղղաձիգ ուղղությամբ հայելի լի: Հայելու շնորհիվ չափումները կատարելիս կարելի լի խուսափել պարալաքսից: Չափումները կատարում են Հայուցնակի միջնոցով:

Տեսակարար կշիռը վորոշում են իմաստալով, վոր կմարմինը Արքիմեդի որենքի համաձայն, հեղուկի մեջ իր կշռից կորցնում ե այնքան, վորքան կշռում ե նրա ծավալով վերցրած հեղուկը: Յեթե մարմինը կշիռը ողում P_1 -ի, իսկ նույն մարմնի կշիռը օղում P_2 -ի, ապա նրա ծավալով ջուրը կշռում է $P_1 - P_2$: Իսկ վորովհետև ջրի տեսակարար կշիռը առանց զգալի սխալ տեսակարար կարելի լի ընդունել հավասար կատարելու կարելի լի ընդունել հավասար կամ ապա մարմնի ծավալը հավասար կլինի $P_1 - P_2$ ծավալային միավորի:

Այստեղից մարմնի տեսակարար կշիռը կլինի՝

1)

$$d = \frac{P_1}{P_1 - P_2}$$



Նկ. 36. Ժողիի կշեռքը

Ժողիի կշեռքով պինդ մարմնի տեսակարար կշիռը վարոշելու համար վարվում են այսպես՝ նախ ստուգում են կշեռքի ճշտությունը: Դրա համար ապատական կուտակում են ուղղաձիգ դիրք: Այնուհետև Յամ Ծ դարակի վրա դնում են հաջորդաբար 1 gr, 2 gr, 3 gr, 4 gr և այլն և ամեն անգամ դիրքում զսպանակի յերկարացումը: Յեթե այդ յերկարացումները ստացվեն ճիշտ ուղղի համեմատական դրվագ կշռաքարերին, ապա փորձը կարելի յե սկսել:

Կ շարժական հենարանի վրա դնում են մի բաժակ, վորը կիսվ չափ լցված և թորած ջրով: Այնուհետև այդ հենարանը դասավորում են այսպես, վոր ներքին Ծ դարակը և նրան Յամակին միացնող ձողի կեսը ընկղմած լինի ջրի մեջ: Չափումները կատարում են Հ ցուցնակի միջնոցով: Դիցուք նա գտնվում է ո բաժանմունքի դիմաց:

Այնուհետև վերին դարակի վրա դնում են փորձարկվող մարմինը, վորի կշիռը 5 գրամից ավելի չպետք ե լինի:

Կ պատվանդանը իջեցնում են այնքան, մինչև վոր ներքին դարակը խորասուզված լինի ջրի մեջ այնքան, ինչքան նա խորասուզված եր առաջին կշռման ժամանակ: Դիցուք հիմա Հ ցուցնակը գտնվում է ո բաժանմունքի դիմաց:

Չափանակի յերկարացումը ($n - m$) ուղիղ համեմատական լինելով մարմնի կշռին, կրնորոշի մարմնի կշիռը: Այսպես, որինակ, յեթե Q գրամը զսպանակն յերկարացնում է մի բաժանմունքով, ապա մեր մարմնի կշիռը հավասար ե

2)

$$P_1 = Q (m - n)$$

Այնուհետև փորձարկվող մարմինը տեղափոխում են ներքեւ դարակի վրա և տեղափոխելով Կ պատվանդանը աշխատում են, վոր դարակը այնքան սուզվի ջրի մեջ, ինչքան առաջին և յերկրորդ չափումների ժամանակ:

Դիցուք այդ ժամանակ Հ ցուցնակը գտնվում է ո բաժանմունքի դիմաց: Ուրեմն մարմինը ջրում կորցրել ե

3)

$$P_1 - P_2 = (n - p) Q$$

Կը ամ:

Ծ դարակի կշռի կորուստը ջրում հաշվի չենք առնում, վորովհետև յերեք դեպքերումն ել նա ընկղմած եր ջրի մեջ:

(1) հավասարման հիման վրա գտնում ենք, վոր մարմի տեսակարար կշիռը՝

$$4) \quad d = \frac{(n - m)Q}{(n - p)Q} \quad \text{կամ} \quad d = \frac{n - m}{n - p},$$

Այսին մի փորձարկվող նյութի համար ել փորձը կրկնել 3 անգամ և վերցնել միջին արժեքը:

Սխալի հաշիվը

Հարաբերական սխալը $\frac{\Delta d}{d}$ վորոշել վորպես կոտորակի սխալը. Նա հավասար է համարիչի և հայտարարի հարաբերական սխալների գումարին՝

$$\frac{\Delta d}{d} = \pm \left(\frac{\Delta n + \Delta m}{n - m} + \frac{\Delta n + \Delta p}{n - p} \right)$$

Իսկ վորովհետեւ $\Delta n = \Delta m = \Delta p$, ապա

$$\frac{\Delta d}{d} = \pm \left(\frac{2\Delta n}{n - m} + \frac{2\Delta n}{n - p} \right)$$

Աշխատանքը կատարելիս հաշվի չեն առնում մարմի կշիռի կուռսը ոդում և ընդունում են ջրի տեսակարար կշիռը հավասար 1-ի, որում ոդում և ընդունում են ջրի տեսակարար կշիռը հավասար 1-ի, Այս թերությունները սովորաբար նա 1-ից միքիչ տարբերվում են. Այս թերությունները արդյունքի վրա զգալի չափով ազդել չեն կարող, վորովհետեւ չափելու մեթոդից առաջացած սխալն անհամեմատ ավելի մեծ է, քան հաշված սխալները:

Աշխատանք № 6

6. ՎՈՐՈՇԵԼ ՈԴԻ ԽՏՈՒԹՅՈՒՆԸ ԴՅԱԼԻՄԱՅԻ ՅԵՂԱՆԱԿՈՎ.

Ոդի խտությունը վորոշելու համար գործածվող Դյումայի յեղանակը շատ նման է պիկնոմետրիկ յեղանակին: Սկզբունքը շատ պարզ է: Վերցնում են բարակ պատեր ունեցող մի ապակյա կոլապարով և կշռում: Նշանակենք այդ կշիռը p_1 , իսկ 0° -ի բերված ոդի մակարմը՝ H : Ապա միացնելով ոդահան մեքենային աշխատում են, ըստ հնարավորության, ամբողջ ուղև հանել:

Դիցուք մացած ոդի մակարմը կ-ն: Այնուհետեւ դատարկ կոլապար անցքը փակում են և նորից կշռում: Նշանակենք դատարկած կոլապար կշիռը p :

Ապա կոլապան լցնում են ջրով և նորից կշռում: Դիցուք կոլապան ջրով կշռում ե p_2 :

Կոլապայից հանած ոդի մակարմը կլինի $H - h$, իսկ կշիռը $p_1 - p$: Կոլապայի մեջ լցրած ջրի կշիռը կլինի՝ $p_2 - p$: Ըստունելով, վոր համար մակարման տակ $p_1 - p$ ոդի ծավալը հավասար է $p_2 - p$ cm^3 , կատանանք, վոր ոդի խտությունը տվյալ է տեմպերատուրայի և $H - h$ մակարման տակ հավասար է՝

$$1) \quad d_{t, H-h} = \frac{p_1 - p}{p_2 - p}$$

Համաձայն Կլապեյլոնի հավասարման, ունենք

$$2) \quad \frac{v_0}{v} = \frac{(H - h) \cdot T_0}{760 \cdot T} \quad \text{կամ} \quad \frac{v_0}{v} = - \frac{(H - h) 273}{760 (273 + t)}$$

Այստեղ v_0 -ն՝ դուրս հանած ոդի ծավալն է նորմալ պայմաններում. v -ն՝ կոլապայի ծավալն է, իսկ վորովհետեւ տվյալ քանակ խտությունը հակադարձ համեմատական է ծավալին, այսինքն վորովհետեւ՝

$$3) \quad \frac{v_0}{v} = \frac{d}{d_0}$$

ապա (2) և (3) հավասարումներից հետեւմ ե

$$d_{0,760} = d_{t, H-h} = \frac{(H - h) 273}{760 \cdot (273 + t)}$$

Տեղադրելով $d_{t, H-h}$ -ի արժեքը (1) հավասարումից այս բանաձևի մեջ վերջնականացնես ստանում ենք՝

$$5) \quad d_{0,760} = \frac{(p_1 - p) 273 (H - h)}{(p_2 - p) 760 (273 + t)}$$

Կամ վերջնականացնես


$$6) \quad d_{0,760} = 0,3592 \cdot \frac{p_1 - p}{p_2 - p} \cdot \frac{H - h}{273 + t}$$

Փորձը կատարելու համար անհրաժեշտ է բարակ պատեր ունեցող մի ապակյա կոլապար մուտքորապես 250 cm^3 տարողությամբ, ուետինե փուքս, զոդիչ լապտեր (պայլինա լամպ), ոդահան մեքենա, տեխնիկական կշռով և խարտոց:

Կոլապան խնամքով չորացնել, զգուշությամբ տաքացնելով և մեջը փուքսով ոդ մղելով:

Այսուհետև զոդիչ բոցը ուղղել նրա վզին՝ ծայրից մոտ 5 սմ ցած և, անընդհատ պտտելով, այդ մասը փափկացնել և միքիչ ձգել: Վզի այդ մասը մի քիչ կնեղանա (տես նկ. 37):

Աշխատանքի այս մասը կատարել ղեկավարող առիստենտի ներկայությամբ:



Նկ. 37. Կոլբա

Կոլբայի վզի ծայրից մոտ 2 սմ ցած խարտոցով մի խաղ քաշել և յերկու ձեռքով բռնելով կոտրել կոլբայի վիզը խաղած տեղում:

Նորից կշռել կոլբան (թե կոլբան և թե նրա կոտրած վերել մասը միասին): Այդ կլինի p_1 կշռը:

Վերջապես կոլբան լցնել ջրով և նորից կշռել. այս անգամ կշռել տեխնիկական կշռելով վրա 0,1 գ ճշտությամբ: Այդ կլինի p_2 կշռը:

Տեղադրելով h , H , t , p , p_1 և p_2 արժեքները (6) հավասարման մեջ հաշվել ողի խտությունը:

Սխալի հաշիվը

$\frac{\Delta d}{d}$ հարաբերական սխալը հաշվել վորպես կոտորակի հարաբերական սխալը: Նա հավասար է համարիչի և հայտարարի հարաբերական սխալի գումարին:

Հետևաբար

$$\frac{\Delta d}{d} = \frac{\Delta (p_1 - p)}{p_1 - p} + \frac{\Delta (H - h)}{H - h} + \frac{\Delta (p_2 - p)}{p_2 - p} + \frac{\Delta t}{273 + t}$$

Առիստանի № 7

7. Եթերի կամ բենզոլի դոլորժիների ԽՏՈՒԹՅԱՆ ՎՈՐՈՇԵԼԸ
ՎԻԿՏՈՐ ՄԱՅԵՐԻ ՅԵՂԱՆԱԿՈՎ

Յեթե միավոր ծավալ գոլորշու կշռը նորմալ պայմաններում նշանակենք p_1 , իսկ միավոր ծավալ ողի կշռը, նույն պայմաններում, նշանակենք p_2 , ապա գոլորշու խտությունը (ողի նկատմամբ) կլինի

$$1) \quad d = \frac{p_1}{p_2}$$

Փորձը կատարելու համար վերցնում են մի յերկարավեպ կոլբա, վորի մեջ զցում են մի ամպուլ, վորը պարունակում ե ո գրամ փորձարկվող հեղուկից, և տաքացնում: Հեկուկը դառնում է գոլորշի (վորի ծավալն ե դիցուք V) և կոլբայից ն ծավալով ող ե գուրս մըղում: Դուրս մղած ողը հավաքում են մի գլանի մեջ, վորը բաց կողմով ընկղմած ե ջրով լիքը ավազանի մեջ:

Դուրս մղած ողի կշռը գորշելու համար, անհրաժեշտ է ողը բերել նորմալ պայմանների: Նշանակենք ($\text{նորմալ պայմաններում}$) ողի ծավալը V_0 , մնշումը p_0 և բացարձակ տեմպերատուրան T_0 : Համաձայն կապեյրոնի հավասարման կստանանք

$$\frac{V_0 P_0}{T_0} = - \frac{vP}{T}$$

Վորանդից՝

$$v_0 = - \frac{vP}{T} \cdot \frac{T_0}{P_0}$$

Կամ՝

$$2) \quad v_0 = v \frac{P}{760} \frac{273}{(273 + t)}$$

Այս բանաձեռի մեջ P ճնշման նկատմամբ պետք ե մացնել ուղղումներ: Նշանակենք գլանի միջի ջրի և արտաքին ջրի մակարդակների տարբերությունը h -ով: Այդ դեպքում գլանի միջի ողի մնշումը կլինի:

$$p_1 = P - \frac{h}{13,6}$$

այսուեղ $\frac{h}{13,6}$ -ը h բարձրության ջրի սյան ճնշումն ե՝ հաշված սնդի-

Կի սյան բարձրությամբ: Իսկ վորովհետեւ ողը հավաքվում է գլանի մեջ, նախապես անցնելով ջրի միջով, ապա նա հագեցած և ջրի գուրշիներով: Հետևաբար չոր ողի ճնշումը վորոշելու համար թ1 ճնշումից պետք է հանել տվյալ տեմպերատուրայի տակ՝ միջավայրը հացեցնող գուրշիների ճնշումը:

Յեթե այդ ճնշումը նշանակենք թ-ով, ապա գլանի ողի ճընշումը (P_2 -ը) հավասար կլինի:

$$3) \quad P_2 = P - \frac{h}{13,6} - p$$

Տեղադրելով (2) հավասարման մեջ P փոխարեն P_2 արժեքը, կստանանք՝

$$4) \quad v_0 = \frac{v(P - \frac{h}{13,6} - p) 273}{760(273 + t)}$$

Նշանակենք ողի խտությունը նորմալ պայմաններում $\delta_0 = 0,001293$ և մեր գուրշու հարաբերական խտությունը ողի նկատմամբ d, ապա եթերի գուրշու զանդվածը հավասար կլինի՝

$$m = v_0 \delta_0 d = 0,001293 \cdot v_0 d$$

Բազմապատկելով (4) հավասարման աջ և ձախ մասը $\delta_0 d - p$, կստանանք՝

$$5) \quad m = \frac{0,001293 \cdot d \cdot v \cdot (P - \frac{h}{13,6} - p) 273}{760 \cdot (273 + t)}$$

Ալսեղից՝

$$d = \frac{m 760 (273 + t)}{0,001293 \cdot v \cdot (P - \frac{h}{13,6} - p) \cdot 273}$$

կամ

$$6) \quad d = \frac{2153 m (273 + t)}{v (P - \frac{h}{13,6} - p)}$$


Փորձի կատարումը

Փորձը կատարելու համար անհրաժեշտ է վ. Մայերի գործիքը, յեռարան ջերմաչափ, եթերով, կամ բենզոլով լցրած ամպուլ, միլիմետրանոց քանոն և կշեռք:

Վ. Մայերի գործիքը (աես նկ. 38) ունի հետևյալ մասերը՝ միերկարավիղ կոլբա (A), վորը գտնվում է լայն ապակյա խողովակի (B) մեջ: Այդ խողովակի ներքեւ C մասը մետաղյա լի և յեռարանի դեր է խաղում: Ջրի գուրշիները հեռացնելու համար, B խողովակի բերանը փակող խցանի միջով, անցնում է մի նեղ D խողովակի: Յերբ ամպուլը գցում են A կոլբի մեջ, ապա առաջացած գուրշիները E և F խողովակների միջով ոդ են գուրս մղում դեպի G չափագլանը: Այդ չափագլանը իր բաց կողմով իջեցրած և ջրով լցրած H ավագանի մեջ: Ամպուլը A կոլբի ներսը մտցընելու համար յերբեմն կոլբին միացրած և լինում K խողովակը, վորի խցանի միջով անցնում է մի ապակյա ձող, իսկ ամպուլը գտնվում է ձողից վերև, այնպես վոր անհրաժեշտ մոմենտին ձողը մի քիչ գուրս քաշելով կարելի լի ամպուլը գցել կոլբի հատակին: Վորպեսզի ամպուլը հատակի վրա ընկնելիս կոլբը կոտրի, կոլբի հատակի վրա դրված և լինում միքիչ ապակյա լցանակ կամ աղբեստ:

Փորձը կատարել հետևյալ կարգով: Լցնել B խողովակի հատակին միքիչ ջուր և ծածկելով A կոլբայի մուտքի անցքը ջուրը լցնել: A խողովակի միջովը ընդարձակվելով կակսի ջի ողը ընդարձակվելով պահպանության մեջ լցնել և անցքը մատով պերատուրային:

Վ. 38. Վիկտոր Մայերի գործիք
F խողովակի միջով պղպջակներով դուրս գալ: Յերբ A կոլբայի տեմպերատուրան հավասարվեց յեռացող ջրի գուրշիների տեմպերի տեմպերատուրային: G չափագլանի մեջ ջուր լցնել և անցքը մատով պերատուրային: Համար ապակյա լցրի մեջ այսպես, վոր F խողովակի ծածկելով շուր տալ H ավագանի ջրի մեջ այսպես, վոր F խողովակի ծածկելով մանի նրա մեջ: Յեթե A խողովակի միջի ողի տեմպերատուրը մանի նրա մեջ: Յեթե A խողովակի միջի ողի տեմպերատուրան իսկապես հավասարվել և յեռացող ջրի գուրշիների տեմպերա-



առուրային, ապա այլև F խողովակով ողի նոր պղպջակներ դուրս չեն գա:

Ամպուլը կշռել սկզբից դատարկ, իսկ հետո լցրած հեղուկով: Կշռության տարրերությունը կտա հեղուկի ու կշիռը: Բանալով A կոլումի խցանը իջնեցնել նրա մեջ ամպուլը և նորից խնամքով մտցնել խցանը: Միքիչ դուրս քաշելով K խողովակի ձողը ամպուլը գցել A կոլրայի ներսը:

Ամպուլի միջի նյութը տաքանալով լցոլորշիանում եւ և ընդարձակվելով դուրս եւ մղում կոլրայից վորոշ քանակությամբ ողի: Այդ ողը հավաքվում եւ G չափագլանում ջրից վերև: Յերբ այլև ջրի նոր պղպջակներ դուրս չեն գալիս, հեռացնում են F խողովակը, այնպես վոր նրա ծայրը ջրից դուրս ընկնի: Սա նրա համար եւ, վորպեսզի A կոլրի սառչելու ժամանակ նրա մեջ H ավազանից ջուր չծծվի: Սպասելով 10—15 րոպե, վորպեսզի G չափագլանի ողի և H ավազանի ջրի տեմպերատուրան իրար հավասարվեն՝ չափել H ավազանի և տեմպերատուրան և G չափագլանի միջի ողի և ծավալը:

Չափել G չափագլանի և H ավազանի միջի ջրի մակարդակների և տարրերությունը:

Ետեմպերատուրի տակ միջավայրը հագեցնող գոլորշիների քանակումը վորոշել համապատասխան աղյուսակներից: Մթնոլորտի P ճնշումը վորոշել բարոմետրի միջոցով:

Տեղադրելով (6) հավասարման մեջ m, t, v, h, p և P արժեքները հաշվել փորձարկվող նյութի գոլորշիների խոռությունը:

Սխալի հաշիվը

Հարաբերական սխալը հաշվել վորպես կոտորակի սխալ. նա հավասար է համարիչի և հայտարարի հարաբերական սխաների դուրսարին: Ուրեմն՝

$$\frac{\Delta d}{d} = \frac{\Delta m}{m} + \frac{\Delta t}{273+t} + \frac{\Delta v}{v} + \frac{\Delta P + \Delta h_1 + \Delta p}{P - h_1 - p}$$

Այսահեղ

$$h_1 = \frac{h}{13,6};$$

Ա. Ըխատանիք № 8

8. Հեղուկի ԽՏՈՒԹՅԱՆ ՎՈՐՈՇԵԼԸ ՀԱՂՈՐԴԱԿԻՑ ԱՆՈԹՆԵՐԻ ՅԵՂԱՆԱԿՈՎ

Մի գլանաձև անոթի մեջ լցնենք վորեւ հեղուկ և այդ գլանի մեջ մտցնենք մի տախտակ, այնպես, վոր նա գլանը բաժանի յեղուկի լուսականությունը:

կու մասի՝ տրամագծալին հարթությամբ, չհասնելով, սակայն, անոթի հատակին: Հեղուկի մակերեսուցն մակարդակները գլանի յնքանի յնքանի կիսում, տախտակից դեպի աջ և դեպի ձախ կմնա նա անփոփոխ:

Գլանը տախտակով բաժանված և յերկու մասի, յերկու ինքնուրուցն անոթների, վորոնք ներքեւ մասում միացած են իրար:

Այդ ձևով միացրած անոթները կոչվում են հաղորդակից անոթներ: Հետևաբար, հաղորդակից անոթներում լցված հեղուկի մակերես վույթները կդառնվեն միենույն մակարդակի վրա: Այդ կախում չի ունենա վոչ անոթների ձևից, վոչ եւ մեծությունից, անհրաժեշտ միայն, վոր անոթների մեջ լցված լինի միենույն հեղուկը:

Յեթե U ձևի խողովակի մեջ լցնենք սնդիկ, ապա մեր ասածի հիման վրա, սնդիկի մակերեսույթը խողովակի աջ և ձախ մասերում կգտնվի միենույն մակարդակին:

Այժմ, յեթե խողովակի աջ կողմից լցնենք վորեւ հեղուկ ևս, ապա հեղուկների մակերեսույթները այլևս միենույն մակարդակի վրա չեն գտնվի, աջ մասում լցված հեղուկի h₁ բարձրությանը ձախ մասում կհամապատասխանի սնդիկի սյան h₂ բարձրությունը (տեսնկար 39):

Յեթե նշանակենք սնդիկի խտությունը δ₂, իսկ լցված հեղուկի խտությունը δ₁, ապա h₁ հեղուկի սյան ճնշումը կլինի՝

$$p_1 = \delta_1 g h_1$$

իսկ h₂ սնդիկի սյան ճնշումը կլինի՝


$$p_2 = \delta_2 g h_2$$

Հեղուկների հավասարակշռության գեպքում այդ յերկու ճնշումները իրար հավասար են, հետևաբար կարելի յե գրել՝

$$1) \qquad \delta_1 h_1 = \delta_2 h_2$$

վորտեղից

$$2) \qquad \delta_2 = \delta_1 \frac{h_1}{h_2}$$



Այսպիսով, իմանալով լցրած հեղուկի խտությունը և հաղուկի սնդիկի սյան ճնշումների բարձրությունները, կարելի յե վորոշել սնդիկի խտությունը:

Վորպեսզի այս ձեւը տա ճիշտ արդյունք, անհրաժեշտ է հաշվել և մտցնել ուղղությունը այն հավելյալ ճնշումների նկատմամբ, վորոնք առաջանում են հեղուկների մակերեսույթները հարթ չլինելու պատճառով:

Նկ. 39. Ծնկածեվ խողովակի սնդիկի սյան ճնշումը կլինի՝

Ինչպես հայտնի լեռ թռչող հեղուկը խողովակի մեջ կազմում է գողավոր մենիկս, վորի ճնշումը ուղղված ե դեպի վեր, հեղուկից դեպի դուրս, իսկ չթռչող հեղուկը խողովակի մեջ կազմում ե ուռուցիկ մենիկս, վորի ճնշումը ուղղված ե դեպի ներքև, դեպի հեղուկի ներսը: Այդ ճնշումների համար լապլասը տվել ե հետևյալ հավասարումը՝

$$p = \alpha \left(\frac{1}{R_1} + \frac{1}{R_2} \right)$$

Վորը խողովակների համար ձևափոխվում ե այսպես՝

$$p = 2\alpha \cdot \frac{1}{R}$$

այսինքն, խողովակի միջի մենիկսի ճնշումը ուղիղ համեմատական է հեղուկի մակերևությային լարման դորձակցին և հակառակ համեմատական մենիկսի կորության շառավիղին:

Մենիկսկների ազդեցությունը չեղոքացնելու համար, ձախ խողովակի մեջ սնդիկի վրա լցնում են միքիչ նույն հեղուկից, վորը լցված ե աջ խողովակի մեջ (տես նկ. 40):



Նկ. 40. Մենիկսի ազդեցությունը վեացնելու համար ձախ ծենի մեջ ել իսկ ձախ կողմից ազդում են սնդիկի հեղուկի հ1 սյունը, վորի ճնշումն են

$$p_1 = \delta_1 g h_1,$$

իսկ ձախ կողմից ազդում են սնդիկի հ2 և հեղուկի հ3 սյուները, վորոնց ճնշումն են

$$p_2 = \delta_2 g h_2 + \delta_1 g h_3$$

Հեղուկների հավասարակության դեպում այս ճնշումները իրար հավասար են, հետևաբար կարող ենք գրել

3)

$$\delta_1 h_1 = \delta_2 h_2 + \delta_1 h_3$$

Պարաեղից՝

4)

$$\delta_2 = \delta_1 \frac{h_1 - h_3}{h_2}$$

Գործիքի նկարագրությունը


Ու ձեմ մի խողովակ ամրացված ե շտատիվին, ուղղաձիգ ուղղությամբ, այնպես, վոր բաց ծայրերն ուղղված են դեպի վերև: Խողովակների կողքից ամրացրած ե ուղղաձգությունը ստուգելու համար: Խողովակի մեջ լցված ե սնդիկ, իսկ սնդիկի վրա՝ ջուր (տես նկար 41): Շտատիվից 1,5—3 մետր հեռավորության վրա գտնվում ե կաթետումետրը:

Փորձը կատարելու համար անհրաժեշտ են կաթետումետր, շտատիվ Ու ձեմ խողովակով, լուսակաց և ջերմաչափ:



E, F և G պտուտակների միջոցով տալ գործիքին ուղղաձիգ ուղղություն: Կարգավորել կաթետումետրը, ինչպես ասված ե 10 եջում: Զարել միջավայրի և տեմպերատուրան:

Կաթետումետրի դիտակը բարձրացնել և ուղղել այնպես, վոր նրա խաղի հորիզոնական դիմքը շրջափի D մենիկսին (նկ. 42), ապա գրել մենիկսի H₃ բարձրության արժեքը: Այդ արժեքը կարդում են լուսայի միջոցով կաթետումետրի պրիզմայի վրա:

Իջեցնելով դիտակը ուղղել Բ մենիկսին և չափել նրա H₂ բարձրությունը: Ողղել դիտակը դեպի աջ խողովակը և իջեցնելով չափել A մենիկսի H₁ բարձ-



Նկ. 41. Գործիքի սնդիկի տեսակարակի կերպ վորություն համար



Նկ. 42. Հորիզոնական զծի դիրքը մենիկսի նկատմամբ

բությունը և գերջապես բարձրացնելով դիտակը չափել Ը մենիսկի⁴
H₄ բարձրությունը:

Այս չափումները կը կնել յիրեք անգամ:

Տեղադրելով H₁, H₂, H₃ և H₄-ի արժեքները (4) հավասարման
մեջ և գոնելով աղյուսակից ջրի δ₁ խտությունը t^o C տեմպերատու-
րի համար, հաշվել սնդիկի խտությունը՝

$$5) \quad \delta = \delta_1 \frac{(H_4 - H_1) - (H_3 - H_2)}{H_2 - H_1}$$

Սխալի հաշվելը

Հարաբերական սխալը $\left(\frac{\Delta\delta}{\delta}\right)$ վորոշում և իրեւ կոտորակի
սխալ. այսինքն նա հավասար է համարիչի և հայտարարի սխալների
գումարին:

Ուրեմն

$$\frac{\Delta\delta}{\delta} = \frac{\Delta H_1 + \Delta H_2 + \Delta H_3 + \Delta H_4}{(H_4 - H_1) - (H_3 - H_2)} + \frac{\Delta H_1 + \Delta H_2}{H_2 - H_1}$$

$$\Delta H_1 = \Delta H_2 = \Delta H_3 = \Delta H_4 = \Delta H.$$

Այսուղ ԱH կաթետոմետրի նոնիուսի ճշությունն եւ:

Հետեւար՝

$$\frac{\Delta\delta}{\delta} = \frac{4 \cdot \Delta H}{(H_4 - H_1) - (H_3 - H_2)} + \frac{2\Delta H}{H_2 - H_1},$$

Աշխատանք № 9

9. ՇԱՐԺՄԱՆ ՈՐԵՆՔՆԵՐԻ ՍՏՈՒԳՈՒՄԸ ԱՏՎՈՒՏԻ ՄԵՔԵՆԱՅԻ ՄԻՋՈՑՈՎ

ՏԵՍԱԿԱՆ ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Հավասարաչափ է կոչվում այն շարժումը, վորի արագությունը
շարժման ընթացքում փոփոխության չի յենթարկվում. Հավասարա-
չափ շարժումներն իրարից տարբերվում են շարժման արագությամբ:
Շարժման արագությունը չափում է միավոր ժամանակը (1 sec.,
1 min, և այլն) անցած ժամապարհով:

Դիցուք մարմինը շարժվելով հավասարաչափ Տ ժամապարհը ան-

ցել է և վայրկյանի ընթացքում, Նշանակելով այդ շարժման արա-
գությունը Վ-ով կստանանք՝

$$1) \quad v = \frac{s}{t}$$

Կատարելով տարրական հանրահաշվական ձևակոխումներ կստա-
նանք

$$2) \quad s = vt$$

և

$$3) \quad t = \frac{s}{v}$$

Հավասարումները:

Շարժումը կոչվում է հավասարաչափ արագացող, յեթե հավա-
սար և կամավոր ընտրած ժամանակամիջոցում, նրա արագությունը
աճում է միանույն մեծությունով:

Արագության աճումը, վորն առաջանում է ժամանակի մի միա-
վորի ընթացքում, որինակ մի վայրկյանում, կոչվում է արագացում:
Դիցուք մարմինը շարժվում է ուղղագիծ և հավասարաչափ և նրա
արագությունը v₀ եւ Յեթե այդ մարմնի վրա, նրա շարժման ուղղու-
թյամբ, ազդի մի հաստատուն ուժ (հաստատուն ըստ մեծության և
ըստ ուղղության), ապա մարմինը կսկսի շարժվել հավասարաչափ
արագացող շարժումով:

Դիցուք է վայրկյանի ընթացքում մարմնի արագությունը v₀-ից
աճել և մինչև v_t արժեքը: Ուրեմն շարժման արագացումը (ա) կվո-
րոշվի հետեւյալ հավասարումով՝

$$4) \quad a = \frac{v_t - v_0}{t}$$

Այս հավասարումից կստանանք

$$5) \quad v_t = v_0 + at.$$

(5) Հավասարումը հնարավորություն է աալիս հաշվել հավա-
սարաչափ արագացող շարժման արագությունը յուրաքանչյուր մո-
մենտի համար՝ չափելով ժամանակը այն մոմենտից, յերբ սկսում է
ազդել ուժը:

Յեթե մինչև ուժի ազդելը մարմինը հանդիսաւ վիճակումն եր,
այսինքն՝ յեթե v₀ = 0, ապա (4) և (5) հավասարումների փոխարեն
կստանանք՝

$$4a) \quad a = \frac{v_t}{t} \quad \text{և} \quad 5a) \quad v_t = at:$$

Վորովհետև հավասարաչափարագող շարժման արդագությունը աճում է թվաբանական պրոցեսիայով, ապա այդ շարժման միջին արագությունը կվորոշվի վորպես սկզբնական և վերջնական արագությունների կիսագումարը: Նշանակելով միջին արագությունը նշանակելով՝ կստանանք՝

$$6) \quad v = \frac{v_0 + v_t}{2}$$

Մարմինի անցած ճանապարհը միջին արագության միջոցով վորոշվում է այսպես՝

$$7) \quad S = v \cdot t$$

(5), (6) և (7) հավասարություններից, պարզ գործողությունն կատարելով, հավասարաչափարագող շարժման անցած ճանապարհի համար կստանանք՝

$$8) \quad S = v_0 t + \frac{at^2}{2}$$

Շարժման որենքների ստուգումը կատարված է Ատվուդի մեքենայի միջոցով:

Դործիքի նկարագրումը

Ատվուդի մեքենան (տես նկար 43) մի շտատիվ է, վորին ուղղաձիգ ուղղությամբ ամրացրած և մի իերկար տախտակ (A): Տախտակի վրա գծված են սանտիմետրական սկալը: Տախտակի վերին ծայրում գտնվում է մի թեթև ճախարակ (B). ճախարակի անիվը պետք է պտտվի, վորքան հնարավոր է, փոքր շփումով: Ճախարակի վրայով անցնող բարակ թելի ծայրերին կապված են իբրև հավասարակշռող, յերկու զանդվածներ՝ m_1 և m_2 : Այդ զանդվածները սկզբում հանդիսանում են:

Յեթե m_1 զանդվածին ավելացնենք մի փոքր կշռաքար, վորի զանդվածն է m_1 ապա նրա ծանրության ուժի անընդհատ ազդեցության տակ, m_1 և m_2 զանդվածները կշարժվեն հավասարաչափ արագությունով՝ m_1 -ը գեպի ցած, իսկ m_2 -ը՝ գեպի վեր:

Նշանակենք այդ շարժման արագացումը առով:

Յեթե $m_1 + m_2 + m$ զանդվածը շարժվում է այդպիսի արագացումով, ապա նրա վրա ազդող ուժը, համաձայն նյութական յերկը որենքի, հավասար է՝

$$F_1 = (m_1 + m_2 + m) a$$

Մյուս կողմից, $m_1 + m_2 + m$ զանդվածը շարժվում է ու կշռաքարի ծանրության ուժի ազդեցության տակ, վորը նույն որենքի համաձայն, հավասար է

$$F_2 = mg$$

Իսկ վորովհետև

$$F_1 = F_2$$

ապա՝

$$(m_1 + m_2 + m) a = mg$$

Հոբուղից

$$9) \quad a = \frac{mg}{m_1 + m_2 + m}$$

յեթե նկատի չառնենք ճախարակի շարժմը:

Արագությունը և անցած ճանապարհը կվորոշվեն


$$S_t = \frac{at^2}{2} \quad \text{և} \quad v_t = at$$

Հավասարությունի միջոցով.

Յեթե շարժման ժամանակ, վորեւ մոմենտում, ու հավելյալ կշռաքարը հետագայի ապա այդ մոմենտից սկսած շարժումը կշարունակվի ըստ իներցիայի, այսինքն, ուղղագիծ և հավասարաչափ:

Ա տախտակի վրա ամրացրած են յերեք սեղան C, D և G: Այդ սեղաններից C-ն ծալվող է, իսկ D-ն ունի մի անցք, վորի միջնորդը m_1 զանդվածն ազատ անցնում է: Սեղանները պատրակների միջոցով կարելի յեն ամրացնել Ա տախտակի այն տեղում, վորտեղ ցանկալի լի, իսկ պետք յեղած ժամանակ այդ սեղանները կարելի լի գործիքի վրայից բոլորովին հեռացնել:

Ծալվող սեղանի կողքին կա հատուկ հարմարություն, աշխատեցնելու սարքավորումը (пусковой механизм), վորի թելքաշելիս սեղանը ծալվում է:



Նկ. 43. Ատվուդի մեխանի

Բացի այս մասերից Առվուղի մեքենայի հետ պետք է ունենալ նաև հատուկ կշռաքարեր: Այդ կշռաքարերը լինում են սովորաբար յերկու ձեի՝ կլոր և ուղղանկյունաձև (ինչպես ցույց ե տված 44 նկարում):

Վերջապես, աշխատանքը կատարելիս, ժամանակը չափում են վալրկյանաչափով կամ մետրոնոմով:

Չափումներ:

1. Համոզվել վոր հավասարաչափ շարժման արագությունը անսփոփի մեծություն ե: Ը ծալվող սեղանն ամրացնել սկալայի 0 բաժնունքի վրա և նրա վրա զետեղել տ1 զանգվածը:



Նկ. 44. Կրացուցիչ կռամաքարեր

Աշխատեցնող սարքավորման (пусковой механизма) թելը քաշել աջ ձեռքով:

Ուշագրություն՝ թելը պետք է քաշել հանդարտ և տախտակին զուգահեռ, հակառակ զեղքում շտատիվը կսկսի ճոճվել, իսկ դա վատ կանդրադառնա փորձի վրա:

Սեղանի ծալվելու հետևանքով տ1 և տ2 զանգվածները կսկսեն շարժվել հավասարաչափ արագացող շարժումով, չնորհիվ ո կշռաքարի անընդհատ աղղման:

Ը սեղանի միջով անցնելիս, ուղղանկյուն կշռաքարը կմնա սեղանի վրա և այդ մոմենտից սկսած տ1 և տ2 ծանրոցները կշարժվեն ուղղագիծ և հավասարաչափ, մինչև տ1 ծանրոցի Ը սեղանին հասնելը: Այդ շարժման արագությունը վորոշելու համար պետք է չափել անցած ճանապարհը և այն ժամանակամիջոցը, վորի ընթացքում տ1 զանգվածը անցնում է այդ ճանապարհը:

Անցած ճանապարհը հավասար է Ը և Ը սեղանների հեռավորությանը՝ ճանած տ1 զանգվածի բարձրությունը (ինչու):

Ժամանակը վորոշել այսպես՝ յերբ տ1 զանգվածը անցնում է Ը սեղանի անցքի միջով և նրա վրա դրված ո կշռաքարը հարվածում է սեղանին, (ու մուռա նրա վրա) և լավում է ձայն, այդ մոմենտին աշխատեցնել վայրկյանաչափը: Յերբ տ1 զանգվածը դիպչում է Ը

անգանին՝ դարձյալ ձայն ե լսվում. այդ մոմենտին կանգնեցնել վայրկյանաչափը և գրի առնել աղյուսակում չափած ժամանակամիջոցը:

Ժամանակի տեսողությունը ճիշտ վորոշելու համար փորձը կը բեր 3 անգամ:

Փոխել Ը սեղանի տեղը և նորից կատարել փորձը: Դարձյալ մի անգամ փոխել Ը սեղանի տեղը և կատարել փորձը:

Փորձի տվյալների աղյուսակը կազմել այսպես:

Փորձի համար	S	t ₁	t ₂	t ₃	$\frac{t_1+t_2+t_3}{3}$	v = $\frac{S}{t}$
1	S'	t ₁ '	t ₂ '	t ₃ '	t'	v'
2	S''	t ₁ ''	t ₂ ''	t ₃ ''	t''	v''
3	S'''	t ₁ '''	t ₂ '''	t ₃ '''	t'''	v'''

$$v = \frac{v' + v'' + v'''}{3}.$$

Փորձը կատարելիս համոզվել, վոր վ', վ'' և վ''' համարյա իրար հավասար են և աննշան տարրերությունները թույլատրված սխալի առհմաններից դուրս չեն գտնվում:

$$2. S = \frac{at^2}{2} \text{ հավատրման սուզամը}$$

տ1 զանգվածը ո լրացուցիչ կշռաքարի հետ միասին զետեղել ծալվող սեղանի վրա, իսկ նրանից 40—80 սմ ցած ամրացնել Ը սեղանը: Ը սեղանը հեռացնել տախտակի վրայից:

Թելը ձգել վերեռում հիշատակված ձեռվ, աշխատեցնելով միաժամանակ վայրկյանաչափը: Այն մոմենտում, յերբ տ1 զանգվածը դիպչում է Ը սեղանին, կանգնեցնել վայրկյանաչափը: Ը մինչև Ը սեղանը զանգվածները շարժվում են տ1 ծանրոցի անընդհատ աղղեցության տակ և ուրեմն, նրանց շարժումը հավասարաչափ արագացող ե: Այդ շարժումով անցած ճանապարհը հավասար է Ը և Ը սեղանների հեռավորությանը: Այդ ճանապարհը անցնելու համար գործադրած ժամանակամիջոցը վորոշել ցույց տված յեղանակով յերեք անգամ և ամեն անգամ գրի առնել արժեքները աղյուսակում:

Ամբողջ փորձը կրկնել յերեք անգամ, փոփոխելով Ը սեղանի անդը:

Աղյուսակը կազմել այսպես՝

$\Phi_{\text{որդի}} \text{ համար}$	S	t_1	t_2	t_3	$\frac{t \text{ միջին}}{= \frac{t_1+t_2+t_3}{2}}$	$a = \frac{2S}{t_2}$
1	S'	t_1'	t_2'	t_3'	t'	a'
2	S''	t_1''	t_2''	t_3''	t''	a''
3	S'''	t_1'''	t_2'''	t_3'''	t'''	a'''

$$a = \frac{a' + a'' + a'''}{3}$$

Հաշվել a' , a'' և a''' արագացումները և համոզվել, վոր նրանք իրար համարյա հավասար են և անհան տարբերությունները թուլադրված սխալի սահմաններից դուրս չեն գտնվում:

3. $v = at$ հավասարման սուլգումը

m_1 զանդվածի բարձրությունը նշանակենք h -ով. D սեղանը ամրացնել տախտակին S—h բաժանմունքի վրա. Այստեղ, S-ի արժեքը պետք է համապատասխանի հաջորդաբար նույորդ փորձի S', S'' և S''' արժեքներին:

D սեղանից 20-ից 40 սմ ցած ամրացնել G սեղանը, սկալայի և վայրկանաչափի միջոցով վորոշել այն արագությունը, վորով m_1 զանդվածը անցնում է D-ից մինչև G ճանապարհը (ինչպես այդ կատարվում եր 1 փորձի ժամանակ):

Տվյալների աղյուսակը կազմել այսպես:

$\Phi_{\text{որդի}} \text{ համար}$	S	t_1	t_2	t_3	$t \text{ միջ.}$	a	S_1	τ_1	τ_2	τ_3	$\tau \text{ միջ.}$	$v = \frac{S}{t}$
1	S'	t_1'	t_2'	t_3'	t'	a'	S_1'	τ_1'	τ_2'	τ_3'	τ'	v'
2	S''	t_1''	t_2''	t_3''	t''	a''	S_1''	τ_1''	τ_2''	τ_3''	τ''	v''
3	S'''	t_1'''	t_2'''	t_3'''	t'''	a'''	S_1'''	τ_1'''	τ_2'''	τ_3'''	τ'''	v'''

Համոզվել, վոր բոլոր դեպքերում $v = at$ և անհան տարբերությունները թուլադրված սխալի սահմաններից դուրս չեն գտնվում:

Եյս աղյուսակի ձախ մասը 2-րդ փորձի աղյուսակն է. աջ մասը կազմած է նույն ձևով, ինչպես 1-ի փորձի աղյուսակը, այն տարբերությամբ, վոր D և G սեղանների հեռավորությունները նշանակված են S_1' S_2'' և S_3''' , իսկ ժամանակամիջոցը՝ τ' τ'' և τ''' :

4. Նյուտոնի 2-րդ որենիքի սուլգումը

մ կշռաքարը վորիարինել մի ուրիշ ուղղանկյուն կշռաքարով (m') և վորպեսպի շարժվող զանդվածների ընդհանուր մեծությունը չփոխվի, m_1 զանդվածից հեռացնել այնքան կոր ծանրոց, վորքանով մ' կշռաքարը մեծ է մ կշռաքարից. Վորոշել մ' կշռաքարի առաջացրած արագացումը՝ նույնությամբ կրկնելով 2-րդ փորձը:

2-րդ փորձից համաձայն նյուտոնի յերկրորդ որենիքի

$$f_1 = a_1 (m_1 + m_2 + m),$$

իսկ այս վերջին փորձից նույն որենիքի հիման վրա

$$f_{II} = a_{II} (m_1' + m_2 + m')$$

հետևաբար՝

$$\frac{f_1}{f_{II}} = \frac{a_1 (m_1 + m_2 + m)}{a_{II} (m_1' + m_2 + m')}$$

Համաձայն փորձի կատարման պայմանների՝

$$m_1 + m_2 + m = m_1' + m_2 + m'$$

փորտեղից

$$\frac{f_1}{f_{II}} = \frac{a_1}{a_{II}}$$

Այստեղ f_1 -ը ու.ի կշիռն է, իսկ f_{II} -ը մ' կշռաքարի կշիռն է: Համոզվել, վոր վերջին հավասարումը ճիշտ է, յերբ նրա մեջ աեղադրում են f_1 , f_{II} , a_1 և a_{II} արժեքները և վոր անհան տարբերությունը սխալի թուլադրած սահմաններից դուրս չի գտնվում:

Աջևատանի № 10

ԾԱՆՐՈՒԹՅԱՆ ՈՒԺԻ ԱՐԱԳԱՑՄԱՆ ՎՈՐՈՇԵԼԸ ՃՈՃԱՆԱԿԻ
ՈԳՆՈՒԹՅԱՄԲ


ՏԵՍԱԿԱՆ ՄԱՍ

Մաքսամիկական նոնտանակ կոչվում է չճպվող և անկշռելի թելից կախված նյութական կետը, վորը ծանրության ուժի աղդեցության տակ կարող է ճոճվել ուղղաձիգ հարթության մեջ:

Ուսումնասիրենք մաթեմատիկական ճոճանակի շարժումը (նկ. 45): Դիցուք OA շատ բարակ թելից կախված A մարմինը դուրս ե բերվել OA հավասարակշռության դիրքից OB դիրքը: B կետում մարմինի վրա ազդող P ծանրության ուժը վերլուծենք՝ \overline{BE} և \overline{BC} ուժերի, վորոնցից մեկը ուղղված է OB թելի ուղղությամբ և հետեւաբար վոչնչանում է թելի լարումով, իսկ մյուսը՝ թելին ուղղահայց է: \overline{BC} ուժը կստիպի մարմնին շարժվել BA աղեղով դեպի ցած: ΔABC -ից յերևում է, վոր այդ ուժը կախում ունի ու անկյան մեծությունից՝

$$f = P \sin \alpha$$

և դառնում է հավասար գերոյի, յերբ մարմինը գտնվում է հավասարակշռության դիրքում: Ճանապարհի BA մասում մարմնի շարժումը կլինի արագացող (ուժն ուղղված է շարժման ուղղությամբ), մարմինը մեծագույն արագություն կունենա A կետում: A կետից սկսած դեպի B' շարժումը կլինի դանդաղեցող (ուժն ուղղված է կլինի շարժման հակառակ): Հասնելով B' կետը, վորը գտնվում է B կետով



Նկ. 45. Մաթեմատիկական նոնանակ

անցնող հորիզոնական հարթության վրա, մարմինը մի մոմենտ կանգ եղանում է հետո կրկնում նույն շարժումը $B'AB$ ճանապարհով: Այն ժամանակամիջոցը, վորի ընթացքում մարմինը անցնում է A -ից B , B' -ից A , A -ից B' և B' -ից A կոչում ե լրիվ ճոճման պարբերություն, վորը նշանակենք T -ով: Յեթե ճոճման ժամանակ A մարմինը, նրա B դիրքում հաղորդել իմպուլս, վորն ուղղահայց լինի շարժ-

ման հարթության, ապա իմպուլսի ուժի վորոշ արժեքի դեպքում A մարմինը հորիզոնական հարթության վրա կակսի գծել շրջանագիծ, իսկ ճոճմանակը կզնի մի կո՞ն, վորի ծնիչը հավասար կլինի ճոճմանակի թելի յերկարության: Այսպիսի ճոճմանակը կոչվում է կոնական նոնանակ:

Փորձերը ցույց են տալիս, վոր թելի մինույն յերկարության դեպքում կոնական և հարթ ճոճմանակների ճոճման պարբերություններն իրար հավասար են:

Հաշվենք կոնական ճոճման պարբերությունը (նկ. 46): B մարմնի վրա, նրա հավասարաչափ շրջանային շարժման ժամանակ ազդում է \overline{BC} կենտրոնախույս ուժը, վորն ինչպես հայտնի յերկար հավասար և $\frac{mv^2}{R}$, վորտեղ ու մարմնի մասսան է, ու նրա շարժման արագությունը և շրջանագիծի շառավիղը՝ BK : Բացի այդ մարմնի վրա ազդում է $\overline{BD} = mg$ ծանրության ուժը, վորն ուղղված է դեպի յերկրի կենտրոնը: Վորապեսզի B մարմնի շարժումը կատարվի միենույն շրջանագծով՝ անհրաժեշտ է, վոր \overline{BC} և \overline{BD} յերկու ուժերի \overline{BF} համազորը հավասարակշռվի $B0$ թելի հակազդումով, իսկ այդ կլինի այն ժամանակ միայն, յերբ \overline{BF} համազորը ուղղված լինի $B0$ թելի ուղղությամբ: Այդ դեպքում $\angle K0B = \angle DBF$,

$$K0B \text{ յեռանկյունուց},$$

$$\sin \alpha = \frac{KB}{0B}$$

BDF յեռանկյունուց՝

$$\operatorname{tg} \alpha = \frac{DF}{DB}.$$

և անկյան շատ փոքր արժեքների համար կարելի յերկարությունում

$$\sin \alpha = \operatorname{tg} \alpha, \quad \text{ուստի և}$$

$$\frac{KB}{0B} = \frac{DF}{DB};$$

Տեղադրելով համեմատության մեջ՝ $KB = r$, $0B = L$ (ճոճմանակի յերկարությունը), $DF = BC = \frac{mv^2}{2}$ կամ ի նկատի ունենալով,

$$\text{վոր } v = \frac{2\pi r}{T}, \quad BC = \frac{4\pi^2 rm}{T^2} \quad \text{և } DB = mg, \quad \text{կստանանք}$$

$$\frac{r}{L} = \frac{4\pi^2 rm}{mg T^2}, \quad \text{վորտեղից ստացվում է ճոճմանակի պարբերության}$$

$$T = 2\pi \sqrt{\frac{L}{g}} \quad (1)$$

Ինչպես տեսնում ենք մաթեմատիկական ճոճանակի ճոճանակարքերությունը կախում չունի մարմնի մասսայից և ա թեքման անկյունից, յեթե այդ անկյունը փոքր է:

Անալիտիկ մեխանիկայում տրվում ե ճոճանակ պարբերության ժիշտ արժեքը անվերջ շարժի միջոցով՝

$$T = 2\pi \sqrt{\frac{1}{g} \left[1 + \left(\frac{1}{2} \right)^2 \sin^2 \frac{\alpha}{2} + \left(1 \cdot 3 \right) \sin^4 \frac{\alpha}{2} + \left(\frac{1 \cdot 3 \cdot 5}{2 \cdot 4 \cdot 6} \right)^2 \sin^6 \frac{\alpha}{2} + \dots \right]} \quad (2)$$

և անկյան փոքր արժեքների համար կարելի է սահմանափակվել շարքի առաջին յերկու անդամներով և գրել՝

$$T = 2\pi \sqrt{\frac{L}{g} \left(1 + \frac{1}{4} \sin^2 \frac{\alpha}{2} \right)} \quad (3)$$

Վորտեղից

$$g = \frac{4\pi^2 L}{T^2} \left(1 + \frac{1}{4} \sin^2 \frac{\alpha}{2} \right)^2 \quad (4)$$

Յեթե և անկյունը 1° -ից մեծ չե, ապա մեծ ճշտությամբ ($0,0002$ -ի) (4) բանաձևը կարելի է փոխարինել

$$g = -\frac{4\pi^2 L}{T^2} \cdot \text{արտահայտությամբ:} \quad (5)$$

Փորձի կատարումը

Ինչպես յերկում ե (5) բանաձևից ազատ անկման արագացումը ց գտնելու համար պիտի չափել ճոճանակի L յերկարությունը (կախման կետից մինչև ծանրության կենտրոնը) և ճոճան պարբերությունը՝ T :

Ա. Ճոճանակի յերկարության չափումը: Ճոճանակի L յերկարությունը ներկայացնում է թելի լ յերկարության և գնդի շառավիղի գումարը, այսինքն $L = l + r$, լ յերկարությունը չափում են քանոնի ողնությամբ հաշված գնդից մինչև հենարանի սուր յեղը: Շտանդենցիրկուլով չափում են գնդի արագացումը մինչև հենարանի սուր յեղը: Յուղամանը կազմում է գնդի անդամանական արժեքը:

Բ. Ճոճանակի L ի վ ճոճան պարբերության վո-

րոշելը: Ճոճանակ պարբերությունը T չափելու համար պետք ե ոգտվել վայրկյանաչափից: Վայրկյանաչափերը սովորաբար ունենում են յերկու սլաք, մեկը յերկար, վոր ցույց ե տալիս վայրկյանաչափը և մյուսը կարճ, վոր ցույց ե տալիս ըոսկեները: Վայրկյանաչափի ոգտությամբ հնարավոր է չափել ժամանակը $0,1$ կամ $0,2$ վայրկյանի ճշտությամբ: Վայրկյանաչափը աշխատեցնելու համար հարկավոր է սեղմել վայրկյանաչափի կոճակը, յերկը որդ անդամ սեղմելիս սլաքը կանգ է առնում, իսկ յերբորդ անդամ սեղմելիս սլաքը վերադառնում է նախկին դիրքը:

Նախ քան չափման անցնելը պիտի հանգստացնել ճոճանակը և հետո դիտակը ուղղել ճոճանակի թելին այնպես, վոր ոկուլարի մազը, ճոճանակի թելը և պատին կպցրած ստվարաթղթի գիծը դանալեն մի հարթության վրա (իրար ծածկեն) (նկ. 47):

Վորպեսպի ճոճանակը ճոճվելիս միաժամանակ չկատարի պտույտներ, վորն ազդում է չափման ճշտության վրա, — վարդում են հետեւյալ կերպ, բարակ թելից պատրաստում են մի ողակ այնպես, վոր նա ազատ կերպով հադարձի գնդի վրա: Զգելով թելի աղատ ծայրից ճոճանակը դուրս են բերում հավասարակշռության դիրքից մոտ մեկ սանտիմետր (ստվարաթղթի վրա հատուկ գիծ կա դրա համար) և ծայրը կապում պատից՝ այդ սպատակի համար խփած մեխից: Ցերքայդ ձեռվ հավասարակշռության դիրքից հանած գունդը հանգստանում է, թելը այրում են և ճոճանակը սկսում է ճոճվել առանց պտույտներ կատարելու:


Զանց անելով մի քանի տատանում անցնում են պարբերության չափման: Զերքում պատրաստի պահելով վայրկյանաչափը, նայում են զիտակով և լերը ճոճանակի թելը անցնում է հավասարակշռության դիրքով ձախից դեպի աջ, սեղմում են վայրկյանաչափի կոճակը սեղով՝ «զերո», «մեկ», «յերկու»... (ճոճանակի թելը հավասարակշռության դիրքով անցնելու ժամանակ) և հաշվում 100 լրիկ տատանում:

Դա նշանակում է, վոր ճոճանակը դիտելու ընթացքում ճոճվելով 100 անդամ անցել է ձախից—աջ (չհաշված սկզբնականը), 100-րդ տատանումը լրանալու մոմենտին սեղմում են վայրկյանաչափի կոճակը: Վայրկյանաչափի ցույց տված ժամանակամիջոցը բաժանելով 100-ի կստացվի ճոճան պարբերությունը (T): Փորձը պետք է կատարել յերեք անդամ և վերցնել T -ի միջին արժեքը:

Քանի վոր վայրկյանաչափը ցույց ե տալիս վայրկյանի 0,2 մասը, ուստի T -ի համար ստացած արժեքը կլինի 0,002 վայրկյանի ճշտությամբ ($0,2 : 100$):

Ճոճման պարբերությունը T ավելի ճիշտ վորոշելու համար իդմում են հետևյալ ձեթողի:

Նայում են դիտակով և յերբ ճոճանակի թելն անցնում ե համաստակշության դիրքով ձախից աջ, սեղմում են վայրկյանաչափի



Նկ. 47. Գործիքի նկար

կոճակը, ապա այլևս չհետեւելով տատանումներին սպասում են 20—30 րոպե, վորից հետո նայում են դիտակով և յերբ թելը կրկին անցնում ե համաստակշության դիրքով ձախից դեպի աջ, կանգնեցնում են վայրկյանաչափը: Վայրկյանաչափի ցույց տված է ժամանակա-

միջոցում ճոճանակը կատարել է ամբողջ ո թվով տատանում: Բաժանելով է ժամանակամիջոցը նախորդ ձեռվ ստացած Տ ճոճման պարբերության վրա կտանանք ո տատանումների թիվը, վորը կլիներ ամբողջ թիվ, յեթե T չափված լիներ առանց սխալի: Իսկ յեթե T չափվել ե մի վորոշ փոքր սխալով, այն ժամանակ բաժանման արդյունքը կներկայացնի խառը թիվ, վոր բազկացած կլինի ամբողջը n_1 և կոտորակային ա մասերից, այսինքն $n = n_1 + \alpha$, յեթե $\alpha > 0,5$ -ից այն ժամանակ ո-ի համար վերցնում են նրան ամենամոտ ամբողջ թիվը, այսինքն $n_1 + 1$, իսկ յեթե $\alpha < 0,5$ -ից ո-ի համար վերցնում են n_1 թիվը: Բաժանելով է այդ յեղանակով ստացած տատանումների թվի վրա կտացվի ճոճման պարբերության ավելի ճիշտ արժեքը:

Թվային որինակ: Դիցուք փորձով ստացվեց, վոր 100 լրիվ տատանում ճոճանակը կատարեց 3 րոպե 22,4 վայրկյանի ընթացքում, կամ 202,4 վայրկյանում. մեկ տատանման տևողությունը կլինի՝ $T = 202,4 : 100 = 2,024$ վայր. ընդունենք, վոր ո տատանումները տեսլ են 26 ր. 17,4 վայրկյան կամ 1567,4 վայրկյան. բաժանելով 1567,4-ը 2,024-ի կտանանք տատանումների թվի համար՝ $n = 774,4$, թանի վոր ո ամբողջ թիվ ե, ապա նա պետք ե լինի կամ 774 կամ 775. ի նկատի ունենալով, վոր մեր որինակում $\alpha = 0,4$ տատանումների թվի համար վերցնում ենք 774, վորպես 774,4 թվին ամենամոտ ամբողջ թիվը: Այժմ բաժանելով 1567,4-ը 774-ի կտանանքը ճոճման պարբերության համար՝ $T = \frac{1567,4}{774} = 2,025$ վայրկյան,

վորը և կներկացնի T -ի ճշտված արժեքը:

Գ. ց-ի հաշվումը: Վերև նկարագրած յեղանակներով գտնել ճոճանակի թելի յերկարության՝ 1-ի, գնդի շառավղի՝ ր-ի և լրիվ ճոճման պարբերության՝ T -ի արժեքները և տեղադրելով

$$g = \frac{4\pi^2 (l + r)}{T^2}$$

բանաձևի մեջ, հաշվել ց:

Սխալների հաշվումը

Յեթե նշանակենք փորձի ընթացքում չափման ժամանակ թույլ տված սխալները թելի յերկարության, գնդի շառավղի և ճոճման պարբերության համար համապատասխանորեն d_e , dr և dT , ապա աղատանկման արագացման g -ի սխալը dg պետք ե հաշվել հետևյալ բանաձևով՝

$$\left| \frac{dg}{g} \right| = \left| \frac{dl}{l+r} \right| + \left| \frac{dr}{l+r} \right| + 2 \left| \frac{dT}{T} \right|$$


11. ՄԱՐՄՆԻ ԻՆԵՐՑԻԱՅԻ ՄՈՄԵՆՏԻ ՀԱՇՎՈՒՄԸ
ՏԵՍԱԿԱՆ ՄԱՍ

Դիցուք պինդ մարմինը (նկ. 48) պտտվում է 00' առանցքի շուրջը. առանցքից տարբեր հեռավորության վրա գտնվող մարմնի A և B կետերի գծային արագությունները կլինեն տարբեր: Յենթագրենք, մի վրոշ է ժամանակամիջոցում մարմինը պտտվելով հավասարաչափ թեքվել եւ ու հակամաբ. այդ ժամանակամիջոցում A և B կետերը կզեն A₁ և B₁ աղեղներ ու հետևաբար նրանց արագությունները կլինեն:

$$v_1 = \frac{\sim AA_1}{t} \quad \text{և} \quad v_2 = \frac{\sim BB_1}{t},$$

Զեափոխենք այս արտահայտություններից առաջինը, ի նկատի ունենալով, զոր $\sim AA = r_1 \alpha$:

$$v_1 = \frac{r_1 \alpha}{t} = r_1 \omega \quad (1)$$



Նկ. 48. Անկյունային արագություն

Յեթե ու արագությամբ շարժվող մարմնի մասսան նշանակենք m, ապա ինչպես հայտնի լի, այդ մարմնի կինետիկ եներգիան (Ek) հավասար է՝

$$E_k = \frac{mv^2}{2} \quad (3)$$

Հաշվենք պտտվող մարմնի կինետիկ եներգիան: Այդ եներգիան գումարվում է մարմինը կազմող առանձին մաս-

նիկների կինետիկ եներգիաներից: Նշանակենք մասնիկների մասաները՝ $\Delta m_1, \Delta m_2 \dots \Delta m_n$, նրանց հեռավորությունները առանցքից՝ $r_1, r_2 \dots r_n$ և համապատասխան արագությունները՝ $v_1, v_2 \dots v_n$: Դիցուք մարմինը պտտվում է հավասարաչափ ու անկյունային արագությամբ: Գրենք առանձին մասնիկների կինետիկ եներգիաները՝

$$\Delta E_1 = \frac{1}{2} \Delta m_1 v_1^2$$

$$\Delta E_2 = \frac{1}{2} \Delta m_2 v_2^2$$

...

$$\Delta E_n = \frac{1}{2} \Delta m_n v_n^2$$

Նշանակենք $\Delta E_1 + \Delta E_2 + \dots + \Delta E_n = E'$ ամբողջ մարմնի կինետիկ եներգիան: (1) հավասարման հիման վրա ունենք՝

$$E = \frac{1}{2} \omega^2 (m_1 r_1^2 + m_2 r_2^2 + m_3 r_3^2 + \dots + m_n r_n^2)$$

Լամ, ավելի կարճ

$$E = \frac{1}{2} \omega^2 \Sigma m r^2$$

$\Sigma m r^2$ արտահայտությունը կոչվում է մարմնի իներցիայի մոմենտը: Նշանակելով $\Sigma m r^2 = I$ ունենք

$$E = \frac{\omega^2 I}{2} \quad (4)$$

Պտտվող մարմնի կինետիկ եներգիան հավասար է իներցիայի մոմենտի և անկյունային արագության քառակուսու արտադրյալի կեսին:

CGS սիստեմում I իներցիայի մոմենտը չափվում է g × cm⁻² ։ Մի քանի մարմինների իներցիայի մոմենտը.

1. Համասեռ գլան, վորի պտտման առանցքն է գլանի առանցքը՝

$$I = \frac{1}{2} M R^2: \quad (5)$$

2. Համասեռ գունդ, առանցքն անցնում է կենտրոնով՝

$$I = \frac{2}{5} M R^2 \quad (6)$$

Յ. Բարակ և յերկար ձող, առանցքն անցնում է ծանրության կենտրոնով և ուղղահայց է յերկարության՝

$$I = \frac{1}{2} Ml^2. \quad (7)$$


Մ-ը մարմի մասսան է, R -ը շառավիղը և l -ը յերկարությունը։ Յեթե հայտնի յե մարմի իներցիայի մոմենտը ծանրության կենտրոնով անցնող առանցքի նկատմամբ՝ I_c , ապա այդ առանցքին զուգահեռ մի այլ առանցքի նկատմամբ I իներցիայի մոմենտը կլինի՝

$$I = I_c + Ma^2, \quad (8) \quad (\text{Ետայների թեորեմը})$$

Վորտեղ առանցքների հեռավորությունն է իրարից և M -ը մարմի մասսան։

Պտտական շարժում առաջ բերող ուժերը պիտի բավարարեն վորոշ պայմանի. տվյալ առանցքի նկատմամբ նրանք պիտի ունենան գործող պտտական մոմենտ. այդ նշանակում է, վոր ուժերը չպիտի անցնեն պտտման առանցքի վորոնե կետով, կամ զուգահեռ լինեն այդ առանցքին։ M պտտման մոմենտը վորոշվում է հետեւյալ հավասարումով (նկ. 49)՝


$$M = Fr, \quad (9)$$



Նկ. 49. Պտտման մոմենտ

այստեղ շուրջ ամենակարճ հեռավորությունն է առանցքից մինչև F ուժը, այսպես կոչված ուժի բազուկն է։ Ուժի M մոմենտը վեկտորական մեծությունն է. նա ուղղահայց է շուրջ և F -ով տարած հար-

Նկ. 50. Վոլորական տատանում



թության և ուղղված է այնպես, վոր այդ ուղղությամբ նայելիս պըտույտը մեղ յերևա ժամացույցի սլաքի ուղղությամբ։

Ուսումնասիրենք այժմ վոլորական տատանումները։ Դիցուք AB լարից կախված DC մարմինը մնալով հորիզոնական հարթության մեջ DC դիրքից շեզվել է EK դիրքը (նկ. 50). թող F -ը լինի շեղում առաջ բերող ուժը և շուրջի բազուկը։ Առաձգականության տեսության մեջ ապացուցվում է (տես աշխ. վոլորման մոդուլի հաշվումը), փորձն ել հաստատում է, վոր վորոշ սահմաններում (սահմանները կախում գոնեն նյութի տեսակից) պտտման մոմենտը համեմատական է վոլորման ռանկյան՝

$$M = c\alpha, \quad (10)$$

վորտեղ օ՞ն թվայնորեն հավասար է այն մոմենտին, վորն առաջնում է $\alpha = 1$ անկյան պտույտ։ Լարը վոլորած վիճակում պահելու համար անհրաժեշտ է կիրառել մի վորոշ M պտտական մոմենտ, վորը հավասարակշռվում է լարում առաձգական ուժերի հետևանքով առաջացած հավասար և հակառակ ուղղված պտտական մոմենտով։

Լարը վոլորելիս ծախսվում է վորոշ եներզիա լարի մեջ առաջացած ներքին ուժերը հաղթահարելու համար։

Յեթե վոլորման անկյունը աճում է 0° -ից մինչև α , ուժի մոմենտը հատվարաչափ աճում է 0 -ից մինչև $c\alpha$. հետևաբար նրան միջին արժեքը կլինի՝ $\frac{0 + c\alpha}{2} = \frac{c\alpha}{2}$ և կատարած աշխատանքը $\frac{c\alpha}{2} \cdot \alpha = c \frac{\alpha^2}{2}$. Պոտենցիալ եներզիան կչափվի հենց այդ աշխատանքով։

Յեթե KE դիրքում գտնվող մարմինը բաց թողնվի, ապա նա կսկսի կատարել ներդաշնակ շարժում և նրա կինետիկ եներզիան DC դիրքում հավասար կլինի (4) հիման վրա՝

$$E = \frac{\omega^2 l}{2},$$

$$\text{տվյալ դեպքում, քանի վոր } \omega = \frac{2\pi\alpha}{T}, \text{ 1) ապա}$$

$$E = \frac{l}{2} \left(\frac{2\pi\alpha}{T} \right)^2$$

1) Յեթե ներդաշնակ շարժումը արագայալվում է

$$x = A \sin \frac{2\pi t}{T}$$

Հներդիայի պահապանության որենքի հիման վրա՝


$$\frac{1}{2} I \left(\frac{2\pi\alpha}{T} \right)^2 = \frac{1}{2} C \alpha^2$$

վորտեղից ճռման պարբերության համար ստացվում է՝

$$T = 2\pi \sqrt{\frac{I}{C}} \quad (11)$$

Փորձի կատարումը

Անհրաժեշտ պարագաներ. 1. հատուկ սարքավորում իներցիայի մոմենտը վորոշելու համար. 2. վայրկյանաչափ, 3. քանոն, 4. շտանցենցիրկուլ, 5. կշեռք Ռոբերվալի:



Ֆուզիֆի իներցիայի մոմենտը
փոխելու համար


Նկը (նկ. 52) կարելի յէ փոխել սիստեմի իներցիայի մոմենտը:
CD ձողը վոլորենք AB առանցքի շուրջը մոտ 90° և բաց թող-

ապա նրա արտդությունը կլինի

$$v = \frac{2\pi A}{T} \cos \frac{2\pi t}{T}$$

Արագությանը մաքսիմում արժեքը կլինի $\frac{2\pi A}{T}$, Տղայլ դեպում Ա փոխա-

$$\omega = \frac{2\pi\alpha}{T}$$



Դիմեներ անցկացնելու հարմարանքը

նենք. լարի մեջ կառաջանան առաձգական ուժեր, վորոնք կձգտեն վերադարձնել սիստեմը հավասարակշռության դիրքը. այդ ուժերի ազդեցության տակ ձողը կկատարի ճռմական շարժում, վորի ճռման պարբերությունը (11) բանաձերի հիման վրա կլինի՝

$$T = 2\pi \sqrt{\frac{1}{C}}$$

վորտեղ I-ն սիստեմի իներցիայի մոմենտն և AB առանցքի նկատմամբ, իսկ C-ն պատական մոմենտի այն արժեքն է, վոր առաջ բերում մեկ միավոր անկյունը հավասար վոլորում:

$$(11) \text{ բանաձերից } I = \frac{T^2 C}{4\pi^2} \quad (12)$$

վորպեսզի արտաքսենք այս բանաձերից C-ն, փոխում՝ կլինք սիստեմի իներցիայի մոմենտը, հազցնելով չ չ' ձողիկների վրա լրացուցիչ ծանրոցներ, վորոնք ունեն զլանի ձև,

Սիստեմի իներցիայի մոմենտը հավելյալ ծանրոցների գեպը ունի այլ՝ I₁ և այդ սիստեմի T₁ ճռման պարբերությունը կլինի՝

$$T_1 = 2\pi \sqrt{\frac{I_1}{C}}$$

$$\text{վորտեղից } = \frac{T_1^2 C}{4\pi^2}, \quad (13)$$

Հանելով (13) հավասարումից (12)-ը, ունենք՝

$$I_1 - I = \frac{(T_1^2 - T^2) C}{4\pi^2} \quad (14)$$

I₁ — I տարբերությունը ներկալացնում և լրացուցիչ ծանրոցների իներցիայի մոմենտը, վորը նշանակենք ΔI,
Բաժանելով (12) հավասարումը (14)-ի վրա կստանանք՝

$$\frac{1}{I_1 - I} = \frac{T^2}{T_1^2 - T^2}$$

Կամ քանի վոր I₁ - I = ΔI, ունենք՝

$$I = \Delta I \frac{T^2}{T_1^2 - T^2} \quad (15)$$

Հավելյալ ծանրոցների ԱI իներցիալի մոմենտը (5) և (8) բանաձերի հիման վրա կլինի:

$$\Delta I = M_1 \left(\frac{r_1^2}{2} + d_1^2 \right) + M_2 \left(\frac{r_2^2}{2} + d_2^2 \right) \quad (16)$$

Վորտեղ M_1 և M_2 գլանների մասսաներն են, r_1 և r_2 նրանց շառավիղը՝ d_1 և d_2 նրանց առանցքների հեռավորությունը պատման առանցքից:

Ցեղեւ $d_1 = d_2 = d$, $M_1 = M_2 = M$ և $r_1 = r_2 = r$, ապա հախորդ հավասարումը կրկի այսպէս:

$$\Delta I = 2M \left(\frac{r^2}{2} + d^2 \right)$$

Փորձը կատարել հետեւալ ձեռվ.

1. CO ձողի վրա գտնվում է B հայելին, վորի դիմաց դրված և շտատիվին ամրացված թղթի շերտը. դիտակով կարելի յի տեսնել B հայելուց անդրագարձած թղթի շերտի պատկերը. վոլորելով CD ձողը մոտ 90° , թողնում են, վոր նա ճոճի և դիտակով դիտում հայելու մեջ յերբեմն ստացվող թղթի պատկերը. Սպասելով, վոր տատանման ժամանակ դիտակի ուղղաձիգ դիմքը համընկնի ձախ կողմից թղթի ժամանակի դիմքը համընկնի ձախ կողմից թղթի պատկերի յեղքի հետ, աշխատեցնում են վայրկյանաչափը ասելով պատկերի այդ ձեռվ 50 ճոճման ժամանակամիջոցը եւ և «զերո»...: Հաշվել այդ ձեռվ 50 ճոճման ժամանակամիջոցը եւ և գտնել $T = \frac{t}{50}$. Փորձը կատարել յերեք անգամ:

2. Հազգնել և և ձողիկների վրա գլանները և նույն ձեռվ հաշվել սիստեմի ճոճման պարբերությունը T_1 լրացուցիչ ծանրոցներով,

3. Կ2եռքի միջոցով՝ գտնել գլանների M_1 և M_2 մասսաները. քանի միջոցով չափել EB և E'Β հեռավորությունները և գտնել d_1 և d_2 . Շտանգենցիրկուլով չափել գլանների շառավիղները և գտնել r_1 ու r_2 : (16)-ըդ հավասարման հիման վրա հաշվել ΔI :

4. Տեղադրել T_1 -ի, T_2 -ի և ΔI -ի արժեքները (15) հավասարման մեջ ու հաշվել սիստեմի 1 իներցիալ մոմենտը:

Սխալների հաշվումը

Սխալը հաշվում են հետեւալ բանաձեռվ:

$$\frac{dI}{I} = \frac{d\Delta I}{\Delta I} + \frac{2dT}{T} + \frac{2T_1dT_1 + 2TdT}{T_1^2 - T^2}$$

Վորմեղ

$$\frac{d\Delta I}{\Delta I} = \frac{2dM}{M_1 + M_2} + \frac{\frac{1}{2}(r_1 + r_2)dr + (d_1 + d_2)d(d)}{\frac{r_1^2 + r^2}{4} + \frac{d_1^2 + d^2}{2}}$$

Քանի վոր r_1 և r_2 , M_1 և M_2 և d_1 և d_2 -ը իրար բավականաչափ մոտ են. dM , dr և dd մասսաների, գլանների շառավիղների և գլանների առանցքից ունեցած հեռավորության չափման ժամանակ թույլ տված մեծագույն սխալներն են, վորը յերկու կողմից ել նույնը կլինի:

Առխառնություն № 12


12. ԾԱՆՐՈՒԹՅԱՆ ՈՒԺԻ ԱՐԱԳԱՑՄԱՆ ց-ի ՎՈՐՈՇԵԼՔ-ՇՐՋԵԼՔ ՃՈՃԱՆԱԿԻ ՄԻԶԱՑՈՎ

ՏԵՍԱԿԱՆ ՄԱՍ

Դիցուք ՕԸ (նկ. 53) մաթեմատիկական ճոճանակը¹⁾, վորը ճոճվում է COA ուղղաձիգ հարթության մեջ, գուրս ե բերվել ՕԸ դիրքից ՕԱ դիրքը կազմելով ուղղաձիգի հետ ու անկյուն: Ծանրության ուժի ազդեցության տակ նա կակսի ճոճվել, կատարելով մեկ լրիվ ճոճումը T ժամանակամիջոցում: Գըտնենք մաթեմատիկական ճոճանակի Ն արագությունը նրա միջանկալ վորեւել դիրքերից մեկում, որինակ Ե-ում, յերբ ճոճանակի թեքման անկյունն է φ: Խջեցնենք Ե-ից և A-ից ուղղահայցներ ՕԸ-ի վրա և ընդունենք ED = h: Այդ ժամանակի համար դիրքից անցնում ե B դիրքը, այսինքն՝

$$\frac{mv^2}{2} = mgh,$$

$$v^2 = 2gh$$



նկ. 53

1) Մաթեմատիկական ճոճանակի մասին աևս նախորդ աշխատանքը:


Բայց $h = OD - OE = l \cos \varphi - l \cos \alpha = l (\cos \varphi - \cos \alpha)$, վորտեղ
լ-ը ճռանակի OC յերկարությունն է: Այստեղից ունենք՝

$$v = \sqrt{2gl (\cos \varphi - \cos \alpha)} \quad (1)$$

Յեթև նշանակենք օ-ով մաթեմատիկական ճռանակի անկյունային արագությունը, ապա $v = \omega l$ ու հետևաբար (1) հավաստրումը կդրվի՝

$$\omega = \sqrt{\frac{2g}{l} (\cos \varphi - \cos \alpha)} \quad (2)$$

Ֆիզիկան ճռանակ կոչվում է $O A$ մարմինը, վորը կարող է ճռվել ծանրության կենտրոնով չափանող վորեւ հորիզոնական առանցքի շուրջը (նկ. 54): Դիցուք այդ առանցքը, վորի շուրջը ճռվում է $O A$ մարմինը, ուղղահայաց և գծագրի հարթության և



Նկ. 54. Ֆիզիկական ճռանակ

անցնում և O կետով: Ծանրության կենտրոնի C -ի հեռավորությունը պատման առանցքից նշանակենք օ-ով, ճռանակի մասսան ու նրա կշիռը $P = mg$: $O A$ դիրքում գտնվող ճռանակը, վորը ուղղագծի հետ կազմում է α անկյուն, յեթև թողնվի ինքն իրեն, ապա նա կսկսի ճռվել ունենալով տարբեր կետերում տարբեր անկյունային արա-

գություն ա: Հաշվենք նրա անկյունային արագությունը OB գիրքում՝ յերբ թեքման անկյունը φ յեւ իջեցնենք CE և CD ուղղահայցները ON -ի վրա և նշանակենք $ED = h$:

Ծանրության կենտրոնին կիրառված ծանրության P ուժի կատարած աշխատանքը A գիրքից B գիրքն անցնելը կինի Ph կամ Pa ($\cos \varphi - \cos \alpha$): Ճռանակի ձեռք բերած կենդանի ուժը հավասար է $\frac{l\omega^2}{2}$ ¹⁾, վորտեղ լ-ն ճռանակի իներցիայի մոմենտն և պատման առանցքի նկատմամբ: Եներգիայի պահպանության սկզբունքի հիման վրա՝

$$\frac{l\omega^2}{2} = Pa (\cos \varphi - \cos \alpha)$$

Այս հավասարումից օ-ի համար ստանում ենք՝

$$\omega = \sqrt{\frac{2Pa (\cos \varphi - \cos \alpha)}{l}} \quad (3)$$

Ֆիզիկական ճռանակի վերածելի (приведенная) յերկարությունը կոչվում է այն մաթեմատիկական ճռանակի $ST = 1$ յերկարությունը, վորի ճռման պարբերությունը համընկնում է տիյալ ֆիզիկական ճռանակի ճռման/պարբերության հետ: Յեթև այդպիսի JL կուճռանակներ թեքվեն ու անկյունով և թողնվեն վոր ճռվեն, ապա հավասար չենքման անկյան գեղագում ֆիզիկական ճռանակի անկյունային արագությունը՝ օ-ն հավասար պիտի լինի մաթեմատիկական ճռանակի նույն դիրքում ունեցած ω_1 անկյունային արագության: Այսինքն $\omega = \omega_1$ և (2) ու (3) հավասարումների հիման վրա՝

$$\sqrt{\frac{2Pa (\cos \varphi - \cos \alpha)}{l}} = \sqrt{\frac{29}{1} (\cos \varphi - \cos \alpha)}$$

վորտեղից ֆիզիկական ճռանակի վերածելի յերկարության համար ստացվում է մի կարևոր բանաձև՝

$$l = \frac{lg}{Pa} \quad \text{կամ}$$

քանի վոր $P = mg$

$$l = \frac{l}{ma} \quad (4)$$

1) Տես աշխատանք № 11 «Մաքմակի իներցիայի մոմենտի վարուելը»:


տուկ հենարան ճռանակի ծանրության կենտրոնը վորոշելու համար Շըթելի ճռանակը (նկ. 56) ներկայացնում է մի մետաղյա ձող (AB), վորոշումի լեռկու D և D' շարժական հենարաններ (պրիզմաներ): Զողին ամրացրած են նաև C և C' ծանրոցները, վորոշում նույնական շարժական են և պառատակների ոգնությամբ կարելի յեւ ամրացնել ձողի տարրեր մասնակում: Կախելով AB ճռանակը D պրիզմայով հենարանից ամրացնում են C, C' ծանրոցները և D' պրիզման տեղափոռում են այնպես, վոր ստացվի վորոշ ասսիմետրիա (անհամաչափություն): Այսուհետեւ թելը կապելով ձողից, թելի մլուս ծայրը ձգում է կապում են N հենարանից այնպես, վոր ձողի B ծայրը դուրս չկա M հենարանից թղթի վրա գծած K գծից:

Ալբելով թելը թողնում են, վոր ճռանակը ճռվի. դիտակով դիտում են և հաշվում 100 տատանման ժամանակամիջոցը և գտնում T₁-ը: T₁-ի արժեքը ճշտում են նախորդ աշխատանքում նկարագրած յեղանակով: Շրջելով ճռանակը և կախելով D' պրիզմայից նույն ձեռք գտնում են T₂: Պրիզմաները և C ու C' ծանրոցները պիտի դասավորված լինեն այնպես, վոր T₁-ի և T₂-ի տարրերությունը չգերազանցի 0,04 վայրկանից. ալբերությունների ավելի մեծ տարրերության դեպքում փորձի սխալը լինում է մեծ:

Նկ. 56. Շրջելի նոնանակ


Ճռանակի ծանրության կենարոնի հեռավորությունը D և D' հենարանների նոր ծայրերից (այսինքն a₁-ը և a₂-ը) վորոշում են հեռակալ լեռանակով:

Ճռանակը հանում են պատվանդանից և պառկեցնում B և C նկ. 57) հենարանների վրա. M պատվանդանի մեջտեղում գտնվում է L շարժական պատվանդանը, վորի վրա կա հացըրած A դանակը. N պտուտակի ոգնությամբ դանակը կարելի յեւ բարձրացնել և իջեցնել: Ցեթեւ դանակի սուր մասով ցածից բարձրացնել B և C հենարանների



Նկ. 56. Շրջելի նոնանակ

վրա պահպաղ ճռանակը, ապա նա կպահպանի հորիզոնական դիրք միայն այն ժամանակի հենման գիծը և ճռանակի ծանրության կենտրոնը գտնվեն միևնույն հարթության վրա: Այսպիսով փորձի նպատակն է այս դեպքում, տեղափոխելով L շարժական պատվանդանը և բարձրացնելով A դանակը դանել ճռանակի վրա մի այնպիսի կետ, վոր դրանով դանակի վրա հենված ճռանակը գտնվի հավասարակշռության մեջ: N պտուտակի միջոցով A դանակը պիտի բարձրացնել շատ դանդաղ, վորպեսզի ճռանակը չհոնվի:



Նկ. 57. Սարքավորում ծանրության կենտրոնի փորչելու համար

Այդ դիրքը գտնելուց հետո զգուշությամբ իջեցնում են ճռանակը B և C հենարանների վրա ու քանոնի ոգնությամբ չափում են D և D' դանակների սուր ծայրերից մինչև դանակի սուր ծայրը: Այս ճանապարհով գտնում են DA = a, D'A = a₂ և DD' = l հեռավորությունները: Մասացած արդյունքները տեղադրում են (8) բանաձեռ մեջ և գտնում ց: Բոլոր չափումները պիտի կատարել մեծ խնամքով: առանձին ուշադրություն պիտի դարձնել T₁-ի և T₂-ի չափման վրա. Նախորդ կարգակ նախորդ աշխատանքի տեսական մասում ճռանակի պարբերությունը չափելու յեղանակի մասին: Հաշիվները կատարել հինգանիշ լոգարիթմական աղյուսակի ոգնությամբ:

Սխալների հաշիվը

Մեծագույն հարաբերական սխալը ց-ի համար կլինի՝

$$\frac{dg}{g} = \frac{dl}{l} + \frac{da_1 + da_2}{a_1 - a_2} + \frac{T_1^2 da_1 + T_2^2 da_2 + 2T_1 a_1 dT_1 + 2T_2 a_2 dT_2}{a_1 T_1^2 - a_2 T_2^2}$$

քանի վոր da₁ և da₂ սխալները, նույնպես և dT₁ ու dT₂ սխալները նույն կարգի սխալներ են, ուստի

$$da_1 = da_2 = da \text{ և } dT_1 = dT_2 = dT$$

պարզեցուց հետո կստանանք՝

$$\frac{dg}{g} = \frac{dl}{l} + \frac{(T_1 + T_2)(T_1 - T_2)}{a_1 T_1^2 - a_2 T_2^2} da + \frac{2(a_1 T_1 - a_2 T_2) dT}{a_1 T_1^2 - a_2 T_2^2}$$

Մարմինի ձեր կամ նրա ծավալի մասնիկների փոխադարձ գառավորության փոփոխությունը արտաքին ուժերի ազդեցության տակ կոչվում ե դեֆորմացիա:

Դեֆորմացիայի ժամանակ մարմինների մեջ առաջանում են ներքին ուժեր, վորոնք մոլեկուլալին ծագում ունեն և կոչվում են առաձգական ուժեր: Առաձգական ուժերը հակառակ են մարմինի վրա աղղող արտաքին ուժերին և վերջինների վերանալու դեպքում վերադառնում են մարմինը իր նախկին տեսքին:

Փոքր դեֆորմացիաների դեպքում այդ դեֆորմացիան վերանում է, յերբ արտաքին ուժերը դադարում են մարմինի վրա աղղողուց: Սակայն P արտաքին ուժերի մեծացումով կարելի յե ստանալ մի այնպիսի դեֆորմացիա, վորը լրիվ չի վերանալու արտաքին ուժերի վերացնելու հետ մեկտեղ, այն դեֆորմացիան, վոր պահպանում է մարմինը կոչվում ե մնացորդային դեֆորմացիա: Ուժի փոքրագույն արժեքը, վոր առաջ ե բերում մնացորդային դեֆորմացիա՝ կոչվում ե առաձգականության սահման:

Առաձգական կոչվում են այն մարմինները, վորոնց առաձգականության սահմանը բավականաչափ մեծ է, այսպես են որինակ՝ պողպատը, փղոսկը և ալյու, ընդհակառակը, վոչ առաձգական մարմինների համար աղղող ուժերը առաձգականության սահմանին են հասնում դեֆորմացիայի դեռ փոքր արժեքների համար:

Դեֆորմացիա առաջ բերող ուժերը մեծանալով առաջ են բերում մարմին խզում (մարմինը պոկիվում է, կոտրվում ե և այլն). վորոշ մարմինների համար խզումը տեղի յե ունենում ավելի շուտ քան աղղող ուժի առաձգականության սահմանին հասնելը. այդպիսի մարմինները կոչվում են փիրուն: Յերբ խզման ուժը զգալի չափով մեծ է առաձգականության սահմանից, ապա այդպիսի մարմինները կոչվում են ձգվող (ՏԱՐԿԱՄԱՆ):

Առաձգական յերեսույթներում ժամանակը մեծ վեր ե խաղում. դեֆորմացիան չի դադարում ուժն անմիջապես ազդելուց հետո, այլ փոփոխում է, յերենին և յերկար ժամանակ:

Դեֆորմացիան սկզբից աճում է՝ արագ կերպով, հետո սկսում դանդաղորեն մոտենալ վերջնական արժեքին: Նույնը և արտաքին ուժերը վերանալուց հետո՝ դեֆորմացիան սկզբից փոքրանում է արագ կերպով, իսկ հետո ավելի դանդաղորեն: Ուշացման այս յերեւույթը կոչվում է առաձգական հետազգում: Փոքր կատարելիս հետազգման այս յերեւույթը միշտ ի նկատի յեն ունենում:

Փոքր դեֆորմացիաների սահմաններում մարմինների նկատմամբ կիրառելի յեն հետեւալ որենքները (Հուկի որենքները):

1. Դեֆորմացիայի մեծությունը համեմատական ե դեֆորմացիա առաջ բերող արտաքին ուժի մեծության (Հուկի որենքը),

2. Արտաքին ուժի նշանի փոփոխությունը առաջ ե բերում դեֆորմացիայի նշանի փոփոխություն, առանց փոփոխելու դեֆորմացիայի բացարձակ արժեքը:

3. Արտաքին մի քանի ուժերի առաջ բերած դեֆորմացիան հավասար ե առանձին-առանձին ուժերի առաջ բերած դեֆորմացիաների գումարին:

Վորպես դեֆորմացիայի չափ, սովորաբար, վերցնում են հարաբերական դեֆորմացիա, այսինքն դեֆորմացիայի բացարձակ արժեքի հարաբերությունը նախնական մեծության:

Դեֆորմացիա առաջ բերող ուժը հաշվում են մեկ միավոր մակերեսի վրա, վորը կոչվում է լարում: Յեթե S մակերեսի վրա աղղող ուժն է P, ապա թարման համար ունենք՝

$$\rho = \frac{P}{S}.$$

Ընդհանուր առմամբ, յեթե նշանակենք մարմինի կրած դեֆորմացիան (հարաբերական)՝ δ, մեկ միավոր մակերեսի վրա աղղող ուժը՝ P, ապա համաձայն Հուկի որենքի՝

$$\delta = c \rho$$

վորտեղ ո համեմատականության գործակից է, վորը տվյալ դեպքում կլինի դեֆորմացիայի գործակից:

Դեֆորմացիայի գործակիցի հակադարձ մեծությունը K = $\frac{1}{c}$ ներկայացնում է տվյալ դեֆորմացիայի մոդուլը:

Դեֆորմացիայի գործակիցները կամ մոդուլները հաշվելիս սովորաբար թարմանում են $\frac{kg}{mm^2}$ մոդուլ:

ՅՈՒՆԳԻ ՄՈԴՈՒԼԻ ՎՈՐՈՇԵԼԸ ԼԵՐՄԱՆՏՈՎԻ ԳՈՐԾԻՔԻ
ՊԳՆՈՒԹՅԱՄԲ

ՏԵՍԱԿԱՆ ՄԱՍ

Զողը (կամ լարը) ամրացնենք A կետից, ինչպես ցույց ե տված 58 նկարում: Դիցուք ձողի յերկարությունն է 1, իսկ լայնական կտրվածքի մակերեսը S: Այժմ ձողի Յալրից P ծանրոցը: Այդ ծանրոցի ազդեցության տակ ձողը կերկարի Ճշով: Դեֆորմա-

ցիայի չափը, ինչպես հայտնի յե (տես ընդհանուր ժամ) այս դեպքում կլինի՝ $\Delta l_1 = \frac{\Delta l}{1}$ հարաբերությունը։ Զողի կարվածքի ամեն մի միավոր մակերեսի վրա ազդող ուժը կամ լարումը կլինի՝ $P = \frac{P}{S}$, Հուկի որենքի հիման վրա կարող ենք գրել՝

$$\Delta l_1 = \alpha p, \quad (1)$$

վորտեղ և համեմատականության գործակից և կոչվում է գծային ձգման գործակից¹⁾:

Քանի վոր Δl դեֆորմացիան փոքր մեծություն է, ուստի փոքր կլինի նաև ու գործակիցը. ավելի հարմար է գործ ունենալ այս հաշվարձ մեծության հետ, վոր կոչվում և Յունգի մոդուլ և նշանակում

են Ե տառով, այսպիսով $E = \frac{1}{\alpha}$ ։

Այժմ (1) բանաձեռ կգրվի այսպես

$$P = E \Delta l_1, \quad (2)$$

Յեթև (2) բանաձեռմ ընդունենք $\Delta l_1 = 1$, կամ վոր միենույն և $\frac{\Delta l}{1} = 1$, ապա կոտանանք $E = P$.

Նշանակում և, Յունգի մոդուլը թվային արժեքով հավասար է այն ուժին, վոր ազդելով ձողի յուրաքանչյուր միավոր մակերեսի վրա առաջ և բերում ձողի յերկարության կրկնապատկում։ Հասկանալի յե, վոր գործնականորեն ալզպիսի ձգումը անհնարին է, քանի վոր մինչև ձողի կրկնապատկելը տեղի կունենա խզում։

(2) բանաձեռ, Δl_1 -ի և թշի արժեքները նրա մեջ տեղադրելուց հետո կը նույնի հետեւալ տեսքը՝

$$\frac{P}{S} = E \frac{\Delta l}{1},$$

վորտեղից

$$E = \frac{P}{\Delta l S} \quad (3)$$

¹⁾ Յեթև օ բացասական է, այն ժամանակ տեղի յե ունենում ձողի կարճացում. այդ դեպում և կոչվում է դժային սեղմման գործակից։

Ի՞չպես յերկում ե (3) բանաձեռից, Յունգի մոդուլը Է վորոշելու համար անհրաժեշտ է չափել ձողի (լարի) յերկարությունը՝ 1, սրա գայնական կարվածքը՝ S , ձողի P ուժը և նրա ազդեցության տակ առաջացած Δl յերկարացումը։


Փորձի կատարումը

Անհրաժեշտ գործիքներ. կերպանտոպի գործիքը, կշռաքարեր, միկրոմետր, յերկար քանոն, դիտակ շտատիվի վրա ուղղաձիգ քանոնով։

Մեր լարորատորիայում Յունգի մոդուլը վորոշելու համար, ոգովում են կերպանտոպի պարզեցրած գործիքը (նկ. 69):


Ա կրոնշտեյնից կախված է MC լարը; Լարի ցածի ծայրին ամրացրած է C ծանրոցը, վորի նպատակն է միշտ ուղիղ պահել լարը։ Յեթե C գլանից կախված F նժարի վրա դնենք ծանրոց, այն ժամանակ լարի C ծայրը վորոշ չափով կիշենի, ինչպես լարի իրեն յերկարացման, նույնպես և AM կրոնշտեյնի ձկման հետեւանքով։ Ձկման ազդեցությունը վերացնելու նպատակով կրոնշտեյնի M ծայրից ամրացրած MD և ME լարերից կախում են ց նժարը։ Յեթե չափել ML լարի յերկարությունը (1), յերբ P ծանրոցը գտնվում է ց նժարի վրա և նրա 1' յերկարությունը, յերբ ծանրոցը տեղափոխվել է F նժարի վրա, ապա 1'' - 1' տարբերությունը կներկայացնի MC լարի իսկական յերկարացումը, քանի վոր AM կրոնշտեյնի ձկում առաջացնող ուժը յերկու գելքումն ել մնում է նույնը, ազդելով կրոնշտեյնի M կետի վրա մի դեպքում MC լարի միջոցով, մյուս դեպքում DM և EM լարերի միջոցով։

Ճ յերկարացումը չափվում է հայելու և շկալայի մեթոդով, C գլանին հենվում է H հայելու հիմքը (նկ. 60): Գործիքից մոտ 1 մետր հեռավորության վրա գտնվում է ուղղաձիգ սկալայով մի դիտակ։ Հայելուց անդրագարձած սկալայի պատկերը կարելի յե դիտել դիտակի



նկ. 59. Կերպանտոպի գործիքը

ողակությամբ։ Յերբ P ծանրոցը ց նժարից տեղափոխվում է F նժարի վրա MC լարը ձգվում և և C գլանը իջնում։ միաժամանակ իջնում և նաև գլանին մի ծայրով հենված ր լժակը, վորի հետևանքով Ա հայելին պտտվում և և ընդունում 0K դիրքը։



նկ. 60

Դիցուք նաև քան ծանրոց գնելը դիտակով դիտելիս յերեաց սկալայի n_1 բաժանմունքը, դա նշանակում է, վոր սկալայի n_1 բաժանմունքից դուրս է եկող $n_1 A$ ճառագայթը անդրադառալով հայելուց գնում և դիտակի առանցքի՝ $A n_0$ ուղղությամբ։ անկման և անդրադառան անկյուններն են $n_1 A B$ և $B A n_0$, վորոնք իրար հավասար են։ Նշանակելով այդ անկյունը α_0 , յեռանկյունի $n_0 A n_1$ -ից յերեաւմ և վոր՝

$$\operatorname{tg} 2\alpha_0 = \frac{n_1 - n_0}{R},$$

վորտեղ R ներկայացնում և սկալայի հեռավորությունը հայելուց Յեթե այժմ դիտակով դիտել, յերբ F նժարի վրա դրվել և P ծանրոցը, ապա դիտակում սկալայի n_1 բաժանմունքի փոխարեն կերեա մի այլ n_2 բաժանմունք և α_0 անկյունն ել կդառնա մի այլ α_1 անկյուն, անկման և անդրադառան անկյունները կլինեն՝ $n_2 A E$ և $E A n_0$ հայելուն կանգնեցրած ուղղահայացն ե $A E$. հայելու տարբեր դիրքերում նրան կանգնեցրած ուղղահայացներով կազմած անկյունը BAE կլինի հայելու պտտման անկյունը, վորը ինչպես յերեաւմ և գծագրից հավասար և $\alpha_1 - \alpha_0$ ։

Յեռանկյունի $n_0 A n_2 - \text{ից } n_1 n_2$

$$\operatorname{tg} 2\alpha_1 = \frac{n_2 - n_0}{R},$$

վասար ե այն աշխատանքին, վոր կատարում է հաստատուն ճնշման տակ ընդարձակվող գաղը 1° տաքանակիությունը:

Ինչպես ասացինք 1 միավոր մասսա ունեցող գաղը հաստատուն ճնշման տակ 1° տաքացնելիս, նրան պետք է հաղորդել C_v ջերմություն և վորոշ ΔQ ջերմության աշխատանքը կատարելու համար՝

$$C_p = C_v + \Delta Q$$

ΔQ ջերմության համապատասխանող աշխատանքն է $p\Delta V$ կամ R , հետեւաբար $\Delta Q = \frac{R}{I}$ և $C_p = C_v + \frac{R}{I}$ վորտեղից ստացվում է (1) հավասարումը:

Դիցուք մարմիններից բաղկացած մի սիստեմ շրջապատված է բոլոր կողմերից ջերմության բացարձակ անհաղորդիչ թաղանթով: Այն ժամանակ սիստեմի ներսում ինչ պրոցես ել վոր տեղի ունենա, ջերմությունը չի կարող անցնել վոչ դրսից ներս և վոչ ել ներսից դեպի դուրս: Այսպիսի պրոցեսներ, վորի ժամանակ սիստեմը ջերմության փոխանակում չի կատարում շրջապատի հետ կոչվում են աղիարատ պրոցեսներ:


Աղիարատ պրոցեսների համար գաղի ծավալի և ճնշման կախումը արվում է Պուասոնի հավասարման միջոցով՝

$$pV^k = p_1 V_1^k = p_2 V_2^k = \dots = \text{Constant} \quad (2)$$

այստեղ

$$k = \frac{C_p}{C_v} - 1$$

Այժմ բերենք (2) հավասարման տարրական արտաձումը¹⁾



Նկ. 94

Դիցուք I անոթում գտնվում է մեկ միավոր մասսա ունեցող գաղ (նկ. 94), վորի ծավալն է v , տեմպերատուրը՝ T , AB -ն շարժական միաց է, վորի վրա ներսից ազդում է գաղի քարտաքը. Վեր-

1) Այս արտաձումը ավել է պրոֆ. Հ. Նովակոսիկյանը:

Հինը հավասարակշռվում ե թարտաքին ճնշումով: Այժմ, թողնելով
թարտաքին անփոփոխ հաղորդենք գազին այնքան ջերմություն, վոր
նրա տեմպերատուրը բարձրանա 1°-ով և գառնա $T_1 = (T + 1)^o$. ծա-
վալը կմեծանա և կդառնա v_1 : \bar{U}_1 յունետեսէ շրջապատենք անոթը բո-
լոր կողմերից ջերմության համար անհաղորդիչ մի մարմնով և մե-
ծացնենք թարտաքին մինչև վոր վերականգնի գազի սկզբնական Վ
ծավալը, դրա հետևանքով գազը կտաքանա և տեմպերատուրը (T_2)
հավասար կլինի $T + k$, վորտեղ $k > 1$. իսկ նոր ճնշումը p_2 մեծ
կլինի թից:

Հասկանալի է, վոր վերջին պրոցեսը ադիաբատ ե:

$$\text{Ապացուցենք, վոր } k \text{-ն հավասար է } \frac{C_p}{C_v}:$$

Իրոք, յեթե՝ I-ին վիճակից 11-ը ստանալու համար գազին հա-
ղորդած ջերմության քանակը նշանակենք Q , ապա պարզ է, վոր III
վիճակը I-ից ստանալու համար ել պիտի ծախսվեր նույն Q քանա-
կը: Քանի վոր II դեպքում գազի քանակը մի միավոր է, տաքացման
տեմպերատուրը 1^o և ճնշումը մնացել ե անփոփոխ, այսինքն տեսա-
կարար ջերմունակությունը C_p , ապա

$$Q = 1 \cdot C_p \cdot 1 = C_p,$$

իսկ III դեպքում, գազը տաքանում է կ աստիճան (h համեմատած I-ի
հետ) պահպանելով ծավալն անփոփոխ (այսինքն տեսակարար ջեր-
մունակությունը այժմ C_v է) և գազի մասսան նույնն է, ապա

$$Q = 1 \cdot C_v \cdot k$$

$$\text{Վորտեղից } C_v \cdot k = C_p \quad \text{կամ } k = \frac{C_p}{C_v}$$

(2) բանաձեի արտածման համար հիշած յերեք վիճակների հա-
մար ել դրինք կապեցրոնի հավասարումը

$$pv = RT$$

$$p_1 v_1 = R(T + 1)$$

$$p_2 v_2 = R(T + k)$$

բաժանելով յերկրորդ և յերրորդ հավասարումները տուանձին-առան-
ձին առաջին հավասարման վրա, կստանանք՝

$$\frac{p_1 v_1}{p v} = \frac{T + 1}{T};$$

$$\frac{p_2 v_2}{p v} = \frac{T + k}{T}$$

կամ ի նկատի ունենալով, վոր $p_1 = p$ և $v_2 = v$, կրծատելուց հետո
առնենք

$$\frac{v_1}{v} = 1 + \frac{1}{T}; \quad \frac{p_2}{p} = 1 + \frac{k}{T}.$$

բարձրացնելով առաջին հավասարման յերկու մասը կ-ըդ աստիճան՝

$$\left(\frac{v_1}{v} \right)^k = \left(1 + \frac{1}{T} \right)^k = 1 + \frac{k}{T} + \frac{k(k-1)}{1 \cdot 2} \cdot \frac{1}{T^2} + \dots$$

և ստհմանափակվելով շարքի առաջին յերկու անդամներով (քանի
վոր T -ն սովորաբար մեծ թիվ է, ապա նրա յերրորդ անդամից
ակսած փոքր մեծություններ են) կրանանք՝

$$\left(\frac{v_1}{v} \right)^k = 1 + \frac{k}{T}$$

Ստացած այս հավասարման բաղդատումը $\frac{p_2}{p} = 1 + \frac{k}{T}$ հավա-
սարման հետ, կտա մեզ՝

$$\left(\frac{v_1}{v} \right)^k = \frac{p_2}{p},$$

կտմ քանի վոր $v = v_2$ և $p = p_1$ ապա

$$\left(\frac{v_1}{v_2} \right)^k = \frac{p_2}{p_1}$$

այսաեղից

$$v_1^k p_1 = v_2^k p_2$$

և հետեւաբար $v^k p = \text{constant}$ (2) (η ուասսոնի հավասարում):

Այսպիսով, ադիաբատ ընդարձակման ժամանակ գազի ծավալի
կ-ըդ աստիճանի և ճնշման աշտարյալը հաստատուն մեծություն ե:


Փորձի կատարումը

Ան հրաժեշտ պարագաներ. Կլիման և Դեղորմի գործիքը
Այն գործիքը, վորի միջոցով կլիման և Դեղորմի լեզնակով
վորոշում են $\frac{C_p}{C_v} = k$, ներկայացնում և ապակյա մի մեծ շիշ A (նկ.
95), վորը փակված է խցանով. վերջինն ունի յերկու անցք, վորից
մեկը միանում է C ծորակի միջոցով արտաքին ողին, իսկ մյուսը՝

Բ խողովակի միջոցով Մ ջրային մանոմետրին: Բացելով Շ ծորակը և փակելով Ը-ն, Ե փուքսի միջոցով Ա անոթի մեջ կարելի յե մզել ող և Մ մանոմետրով չափել հավելյալ ճնշումը Ա անոթում:

Փորձը կատարում են այսպես.

Փակում են Ը ծորակը և բացելով Շ-ն Ե ռետինե բալոնի միջոցով Ա անոթի մեջ մղում են ող. յերը մանոմետրում ջրի սկզբնը դառնում և հավասար 15—25 սմ-ի, փակում են Շ ծորակը. Ողը մղե-



Նկ. 95. Կեման յեվ Դեգորմի գործիք

լու հետևանքով Ա անոթում ողը տաքանում է. վորոշ ժամանակ սպասելուց հետո, յերը Ա անոթի ողի տեմպերատուրը հավասարվում է շրջապատի t_1^0 տեմպերատուրին, հաշվում են մանոմետրում ջրի սյուների բարձրությունների տարբերությունը՝ ի և գրի առնում այն Այնուհետև արագ բաց են անում լրիվ կերպով Ը ծորակը և իսկուն փակում, հավասարեցնելով անոթի ողի ճնշումը արտաքին H_0 ճնշման հետ. Այդ ժամանակ սեղմված ողը արագությամբ դուրս ե գալիս (գաղը ընդարձակվում է) Ը ծորակից, վորի հետևանքով գաղի տեմպերա-

տուրը անոթում իջնում է մինչև t_2^0 : Ընդարձակման այս պրոցեսը պիտի համարել աղիաբառ:

Քիչ հետո ողի տեմպերատուրը անոթում բարձրանում է և հավասարվում շրջապատի տեմպերատուրին. ըստ վորում ճնշումը կբարձրունա և մանոմետրը ցույց կտա h_2 սյուների տարբերությունն:

Նշանակենք ողի մասսայի այն ծավալը, վորը գտնվել է Ա անոթում Ը ծորակը արագ բացելուց և փակելուց հետո՝ v_2^0 : Ը ծորակի մինչև բանալը նույն մասսայով ողը անոթում բռնում եր ավելի փոքր՝ v_1 ծավալ:

Կազմենք հետեւյալ աղյուսակը ողի յերեք վիճակի համար.

№	Պայմանները	$\frac{Ողի}{Ժակալը}$	$\frac{Ճնշումը}{\text{ճնշումը}}$	$\frac{\Omega_{\text{բարմա-}}}{\text{ամանը}}$
1	Մինչև Ը ծորակի բանալը	v_1	$H_0 + h_1$	t_1^0
2	Ը ծորակը բանալու մոմենտին	v_2	H_0	t_2^0
3	Ը ծորակը փակելուց հետո, յերը ողի տեմպերատուրը հավասարվում է շրջապատի տեմպերատուրին	v_2	$H_0 + h_2$	t_1^0

Առաջի վիճակից յերկրորդ վիճակի անցնելը կատարվում է աղիաբառ կերպով, հետեւաբար (2) հավասարման հիման վրա՝

$$v_1^k (H_0 + h_1) = v_2^k H_0$$

Առաջի և յերկրորդ վիճակներում գաղի տեմպերատուրը նույնն է, ուստի կիրառելով Բոյլ-Մարիոնի որենքը այս գեղքի համար ունենք՝

$$v_1 (H_0 + h_1) = v_2 (H_0 + h_2)$$

բարձրացնելով այս հավասարումը կ-րդ աստիճան և բաժանելով նաև խորդի վրա կստանանք՝

$$\frac{(H_0 + h_1)^k}{H_0 + h_1} = \frac{(H_0 + h_2)^k}{H_0},$$

լոգարիթմենք ստացած հավասարման յերկու մասը

$$k \lg (H_0 + h_1) - \lg (H_0 + h_1) = k \lg (H_0 + h_2) - \lg H_0$$

Լուծելով հավասարումը վորոնելի կ-ի նկատմամբ, ունենք՝

$$k = \frac{\lg (H_0 + h_1) - \lg H_0}{\lg (H_0 + h_1) - \lg (H_0 + h_2)}$$

Քանի վոր H_0 , $H_0 + h_1$ և $H_0 + h_2$ հնչումները իրարից շատ քիչ են տարբերվում, ապա լոգարիթմների տարբերությունը կարելի յէ փոխարինել թվերի տարբերությամբ՝

$$k = \frac{H_0 + h_1 - H_0}{H_0 + h_1 - (H_0 + h_2)}$$

կամ

$$k = \frac{h_1}{h_1 - h_2} \quad (3)$$

Ինչպես յերկում ե (3) հավասարումից կ-ի հաշվումը վեր ե ածվում $h_1 - h_1$ և $h_2 - h_1$ չափման, վորը կատարվում ե վերը նկարագրած լեզառակով.

Փորձը կատարել 10 անգամից վոչ պակաս և հաշվել $k_1, k_2 \dots k_{10}$ արժեքները:

Հաշվել կ-ի միջին արժեքը՝

$$k_0 = \frac{k_1 + k_2 + \dots + k_{10}}{10}$$

Վորից հետո գտնել առանձին չափումների շեղումները միջին արժեքից՝

$$\begin{aligned} |k_0 - k_1| &= \Delta k_1 \\ |k_0 - k_2| &= \Delta k_2 \\ &\vdots \\ |k_0 - k_{10}| &= \Delta k_{10} \end{aligned}$$

և վերջում վորոշել միջին բացարձակ սխալը՝

$$\Delta k_0 = \frac{\Delta k_1 + \Delta k_2 + \dots + \Delta k_{10}}{10}$$

և միջին հարաբերական սխալը՝

$$\frac{\Delta k_0}{k_0}$$

արտահայտելով վերջինը տոկոսներով:

Ս. վատանի № 26

28. ՀԱԼՄԱՆ ԿԵՑԻ ՎՈՐՈՇԵԼԸ

Նյութը կարող ե դոյություն ունենալ յերեք ագրեգատային վիճակում՝ պինդ, հեղուկ և գազային:

Պինդ նյութի մոլեկուլներն աղատ չեն շարժվում. նրանք կա-

տարում են ճոճական շարժում՝ յուրաքանչյուրը վորոշ անշարժ կետի շուրջը: Այդ նշանակում ե, վոր պինդ վիճակում նյութի մոլեկուլներն ունենան վորոշ գասավորություն և այդ գասավորությունը ժամանակի ընթացքում չի փոփոխվում:

Հեղուկի մոլեկուլների փոխադարձ կապն ավելի թույլ ե՝ մոլեկուլները չեն ճոճվում վորոշ հավասարակշռության դիրքի շուրջը, ինչպես պինդ նյութերինը, այլ աղատ են. նրանք շարժվում են անընդհատ փոխելով շարժման ուղղությունը: Սակայն շարժվելու ընթացքում հեղուկի մոլեկուլը միշտ գտնվում է հարևան մոլեկուլների ազդման սֆերայի ներսում: Հեղուկների մոլեկուլների դասավորության մեջ գոյ մի կարգ գոյություն չունի: Մոլեկուլների փոխադարձ գասավորությունը ժամանակի ընթացքում փոխվում ե:

Մեր ասածից հետեւում ե՝ նյութը պինդ վիճակից հեղուկ դարձնելու համար պետք ե հաղթահարել մոլեկուլար ուժերը, պետք ե պինդ նյութի մոլեկուլների դասավորումը փոխարինել միանգամայն անկարգ և անընդհատ փոփոխող դասավորությամբ: Այդ նշանակում ե, վոր պինդ նյութը հեղուկացնելու համար անհրաժեշտ ե ծախսել աշխատանք:

Պետք ե նկատել, վոր յեթե պինդ նյութի հեղուկացումը կատարվում ե անփոփոխ ճնշման տակ, ապա ամեն մի նյութ կունենա հաստատուն հալման տեմպերատուրա, վորը, սակայն, տարբեր և տարբեր նյութերի համար:

Յեթե մի պինդ մարմին տաքացնենք, որինակ սառուցի մի կառը, ապա նրա տեմպերատուրան կաճի, վորքան տեմպերատուրան բարձրանա, այնքան մարմնի մոլեկուլներն ավելի ինտենսիվ կշարժվեն: Վերջապես վորոշ տեմպերատուրի տակ, սառուցի համար գակլունի 0°C , մոլեկուլների կինետիկ հներգիան այնքան կմեծանա, վոր յեթե շարունակենք մարմնին ջերմություն հազորել, այլևս պինդ մարմնի մոլեկուլների ուժերը չեն կարողանա մոլեկուլներին պահելի իրենց տեղերում՝ մարմինը կսկսի հեղուկանալը: Հեղուկանալու ընթացքում անընդհատ հաղթահարվում են մոլեկուլների հարակցուկան ուժերը: Այդ ուժերը հաղթահարելու համար անհրաժեշտ եներգիան մարմինն ստանում ե ջերմության ձեռքի:

Վորովհետեւ այդ ջերմությունը ծախսվում ե միայն մոլեկուլների հարակցական ուժերը հաղթահարելու աշխատանքի վրա, այդ պատճառով հալման ընթացքում մարմնի տեմպերատուրան չի աճում: Ծախսված եներգիան վերածվում ե մոլեկուլար ուժերի պոտենցիալ եներգիայի և այդ պատճառով նա կոչվում է «հալման թագնված ջերմություն»:

Հալման թագնված ջերմությունը չափում են կալորիմերի այն

քամակով, վորը, հալման տեմպերատուրի տակ, պետք ե հաղորդել 1 գրամ նյութին, վորպեսզի նա պինդ վիճակից ձեափոխվի հեղուկի՝ առանց տեմպերատուրայի աճման:

Պինդ նյութերից պետք ե տարրերել ամորֆ նյութերը: Առաջիններն ունեն բյուրեղային կազմություն և նրանց ձեզ կախում ունի մոլեկուլների փոխադարձ դասավորությունից և հեռավորություններից: Ամորֆ նյութերի մոլեկուլների դասավորության մեջ վոչ մի կարգ չկա:

Այդ նյութերը, ըստ մոլեկուլների դասավորության և շարժման, նմանվում են հեղուկներին:

Յեթե տաքացնենք մի ամորֆ մարմին, որինակ, մեղրամոմի մի կտոր, ապա նրա տեմպերատուրան աճում ե՝ սկզբից արագ, այնուհետեւ, հասնելով 60°C տեմպերատուրայի աճումը շարունակվում է դանդորեն: Յերբ տեմպերատուրան հասնում է 65°C , նա նորից շարունակում է աճել արագ:

Յեթե ուշադրություն դարձնենք այս տվյալների վրա, կեղրակացնենք, վոր $60^{\circ} - 65^{\circ}\text{C}$ սահմաններում մեղրամոմի հատկությունների հետ մի ինչ վոր փոփոխություն ե կատարվում: Սակայն այդ փոփոխութույնը կատարվում է վոչ թե հանկարծակի, այլ սահուն կերպով:

Իսկապես, յեթե հետազոտենք մեղրամոմի դիմադրումը իր ձեռփոփոխյանը, կտեսնենք, վոր $60^{\circ}\text{C} \sim$ մոտ մոմբ սկսում ե փափկել տեմպերատուրայի աճման հետ միասին այդ փափկելն ավելի և ավելի նկատելի յե դասնում և 65°C մոտ մեղրամոմը ներկայացնում է մածուցիկ հեղուկ:

Այսպիսով մեղրամոմը անընդհատ ձեռվ պինդ վիճակից հեղուկի յե վերածվում ե, ի հարկե, չի կարելի ցուց տալ այն տեմպերատուրան, յերբ այդ տեղի յե ունենում:

Դիցուք ունենք վորոշ քանակության վորեե նյութ հեղուկ վիճակում: Յեթե այդ նյութից չերմություն ե անջատվում, ապա նրա տեմպերատուրան իջնում ե և վերջապես հեղուկը պաղում ե մինչև նյութի հալման տեմպերատուրան: Այժմ յեթե շարունակվի ջերմության անջատումը՝ նյութը կսկսի պնդանար վորպեսզի մեկ գրամ հեղուկը ալիք տեմպերատուրայի տակ պնդանա՝ առանց տեմպերատուրայի փոփոխության, նրանից պետք ե այնքան ջերմություն անջատվի, վորքան հալեցման թագնված ջերմությունն ե:

Թե հալման և թե պնդացման պրոցեսը հարմար ե պատկերացնել գրաֆիկորեն: Դրա համար, որինակ, մի հալմանի մեջ զցենք ալյումինիումի մի կտոր, տաքացնենք նրան ավելի բարձր, քան


հալման տեմպերատուրան ե և ապա թողնենք, վոր հալմանը և նրա մեջը գտնվող հեղուկ ալյումինիումը միասին սառչեն:

Տերմոելեմենտի միջողով 3 բոպեն մի անգամ, կամ ավելի հաճախ, չափենք ալյումինիումի տեմպերատուրան, նշանակելով տվյալները գրաֆիկի վրա՝ ընդունելով արացիների առանցքը ժամանակի առանցքը, իսկ որդինատների առանցքը՝ տեմպերատուրայի առանցքը:

Դիցուք հեղուկ ալյումինիումի սկզբնական տեմպերատուրան եր 900°C , իսկ պնդացման աստիճանը՝ 658°C . Վորձը կամարելիս կնկատենք՝ սկզբում ալյումինիումի տեմպերատուրան անընդհատ իջնում և $900^{\circ}\text{C} \sim$ ից մինչև 658°C : Պաղեցման այդ պրոցեսին գրաֆիկի վրա համապատասխանում է կորի ABC մասը: Այնուհետև ջերմությունը շարունակվում ե անջատվել, սակայն տեմպերատուրան վորոշ ժամանակում և անջատվել, սակայն անջատվությունը մնում է հավասար 658°C : Այդ ընթացքում նյութը պնդանում ե՝ հեղուկը բարեղանում է: Անջատվող ջերմությունը պնդացման թագնված ջերմությունն ե: Պրոցեսի այդ մասը գրաֆիկի վրա պատկերացված է կորի BC հատվածով, Պնդացման ընթացքում հալամանի մեջ միաժամանակ կգտնվեն թե հեղուկ, և թե պինդ ալյումինիումի: Յե կեալ համապատասխանում է այն մոմենտին, յերբ պնդացումը

նոր սկսում ե, իսկ C կեալ այն մոմենտին, յերբ տեղի յե ունեցել լրիվ պնդացումը: Այժմ յեթե շարունակվի ջերմության անջատումը, ապա ալյումինիումի տեմպերատուրան կսկսի իջնել $658^{\circ}\text{C} \sim$ ից ցած: Պրոցեսի այդ մասը պատկերացված է CD մասով: ABCD կորը կոչվում է պնդացման կոր:

Յեթե բոլորովին մաքուր անոթի մեջ զգուշությամբ սառեցնենք հեղուկացը սալուլ, ապա հաճախ ստացվում ե, վոր տեմպերատուրան իջնում ե ավելի ցած, քան սալուլ պնդացման աստիճանն ե, սակայն սալուլ չի պնդանում: Սալուլ հալման կամ պնդացման աստիճանը մոտ + $42^{\circ}\text{C} \sim$, իսկ այս ձեռվ պաղեցնելով հաջողվում ե:



Ժամանակ

Նկ. 96

Նրա տեմպերատուրան իշխնել մինչև $+18^{\circ}\text{C}$: Հեղուկի այլպիսի զիաձակը կոչվում է գերասառ վիճակ:

Բավական ե գերասառ հեղուկը ցնցել կամ նրա մեջ դցի նույն նյութից մի փոքրիկ բլուրեղ, վորովեսղի հեղուկը սկսի պնդանալ՝ նրա մի մասը իսկույն պնդանում ե, իսկ տեմպերատուրան բարձրանում մինչև հեղուկի պնդացման ասս իճանը:

Ուրեմն գերասառ վիճակը մի անկախուն դրություն ե, վորը հեշտությամբ փոխարինվում ե նորմալ վիճակով:

Գերասառ վիճակը գրաֆիկորեն ցույց ե տված 97 նկարի վրա: Այստեղ ցույց ե տրված, վոր պաղեցման կորի AB մասը իշխում ե ավելի ցածր, քան պնդացման է տեմպերատուրան ե, հասնելով մինչ C կետը:

Այդ կետին համապատասխանում ե t_1 տեմպերատուրան, վորը ավելի ցածր է քան պնդացման է տեմպերատուրան:

Յերբ սկսում ե բյուրեղացումը, անջատվում ե պնդացման թագնված ջերմությունը, վորը ծախսվում ե նյութի տեմպերատուրան բարձրացնելու վրա: Այդպիսով, յերբ սկսվում ե բյուրեղացումը, նյութի տեմպերատուրան արագորեն բարձրանում ե մինչև հեղուկի պնդացման է տեմպերատուրան: Պրոցեսի այդ մասը ցույց ե տված CD հատվածով: Այսուհետեւ

պրոցեսը շարունակվում ե նորմալ կարգով:

Ինչ վերաբերում ե ամորֆ նյութերին, ապա սկզբում յերբ նա տաք ե, նա մածուցիկ հեղուկ ե: Պաղելու ընթացքում նրա տեմպերատուրան սկզբում արագ իշխում ե: Պրոցեսի այդ մասը գրաֆիկի վրա ցույց ե տված կորի AB (նկ. 98) հատվածով: Այդ մասում ամբողջ նյութը դեռ հեղուկ ե, սակայն, վորքան ցածր ե տեմպերատուրան, այնքան հեղուկը ավելի մածուցիկ ե:

Այսուհետեւ պաղումը դանդաղում ե և հեղուկն անսկատելի ձեռվով սկսում ե պնդանալ՝ պրոցեսի այդ մասը գրաֆիկի վրա (նկ. 98) պատկերացված ե կորի BC մասով: Վերջապես, նյութի տեմպերատուրան շարունակում ե արագորեն իջնել և նյութը լրիվ պնդանում

ե. պրոցեսի այդ մասը պատկերացրած ե գրաֆիկի վրա կորի CD հատվածով, հալման է տեմպերատուրան յերեսում ե անմիջապես գրաֆիկի վրա:

Փորձի կատարումը

Փորձը կատարելու համար անհրաժեշտ ե յեռարան (ցանկալի յելեկտրական) բյուրեղային և ամորֆ նյութերով հալամաններ, ժամացուց և ջերմաչափ:

Փորձը կատարելի ս, վոր պես բյուրեղային նյութ, վերցնել հիպոսուլֆիտը ($\text{Na}_{\text{2}}\text{SO}_3$), իսկ վորպես ամորֆ նյութ՝ պարաֆին կամ մեղրամում:

Յեռարանի մեջ լցնել այնքան ջուր, վոր նրա մակարդակը հատակից 3—4 սմ. բարձր լինի: Լցնել հալամաններից մեջի մեջ հիպոսուլֆիտ, իսկ մյուսի մեջ պարաֆին, մինչև հալամանի կեսը:

Դնել հիպոսուլֆիտ պարունակող հալամանը յեռարանի հատակին և տաքացնելով հեղուկացնել:


Սպասել մինչև հեղուկ հիպոսուլֆիտի տեմպերատուրան հասնի 80-ից -90°C :

Հիպոսուլֆիտ պարունակող հալամանը հանել յեռարանից և նրա տեղը դնել պարաֆինը պարունակող հալամանը:


Ջերմաչափի միջոցով անընդհատ խառնելով առաջին հալամանի հեղուկ հիպոսուլֆիտը՝ 3 րոպեն մի անգամ գրի առնել ջերմաչափի ցուցմունքը և շարունակել այդ մինչև հեղուկի պնդանալը:

Ուշադրություն՝ հեղուկի պնդացման ժամանակ պետք ե զգույշ լինել և յեթե նկատվում ե, վոր ջերմաչափի միջոցով գժվարությամբ ե նյութը խառնվում, ապա դադարեցնել այդ գործողությունը՝ ջերմաչափը կոտրելուց խուսափելու համար:

Յեթե պաղելու ընթացքում հեղուկի տեմպերատուրան մոտենում է 44°C -ի և հեղուկը չի պնդանում, այն ժամանակ հեղուկի մեջ



Նկ. 97



Նկ. 98

գցեք մի կտոր հիպոսուլֆիտի բլուբեղ և շարունակեցեք փորձը մինչև վերջը:

Հանել ջերմաչափը նյութից և լվալ:

Պարաֆինը պարունակող հալամանը հանել յեռարանից և դադարեցնել յեռացնելը:

Յ ըովեն մեկ անգամ գրի առնել պարաֆինի տեմպերատուրան՝ անընդհատ խառնելով հեղուկը և հետեւելով, վոր հալամանի պատերի վրա պնդացած պարաֆին չնստի:

Դադարեցնել պարաֆինի խառնելը, յերբ նա ընդունի շիւայի կազմություն:

Ապա 2—3 անգամ ևս չափել պարաֆինի տեմպերատուրան և դադարեցնել փորձը:

Ջերմաչափը մաքրել, իսկ յեռարանի մեջ մնացած ջուրը թափել:

Գծել միկրոմետրական թղթի վրա հիպոսուլֆիտի և պարաֆինի պնդացման գրաֆիկները՝ ընդունելով չերի առանցքը իրեն ժամանակի առանցքը, իսկ յ-ներինը՝ տեմպերատուրաների առանցքը:

Գծուծ գրաֆիկից վորոշել հիպոսուլֆիտի և պարաֆինի համան անմագնիությունը:

Աշխատանք № 27

29. ՍԱԲՈՒՅՑԻ ՀԱԼՄԱՆ ԹԱԳՆՎԱԾ ՋԵՐՄՈՒԹՅԱՆ ՎՈՐՈՇԵԼԸ

Հալման թագնված ջերմություն կոչվում է ջերմության այն քանակը, վորն անհրաժեշտ ե ծախսել, հալման տեմպերատուրի տակ գտնվող, մեկ գրամ նյութը հեղուկացնելու համար:

Յեթե հեղուկը պնդանում ե, ապա անջատվում ե այնքան ջերմություն, վորքան նա կլանել եր հալման ժամանակ։ Այդ պատճառով հալման ջերմությունը վորոշելու փոխարեն, վորոշում են պընդացման ջերմությունը:

Դիցուք m_1 գրամ հեղուկացրած նյութ լցնում ենք կալորիմետրի մեջ։ Նշանակենք այդ նյութի տեմպերատուրան t_1 , կալորիմետրի ջրալին համարժեքը mc , նրա մեջ լցրած ջրի զանդվածը M և վերջապես կալորիմետրի միջի ջրի տեմպերատուրան t ։

Վորովիետե $t_1 > t$, ապա, ջերմության փոխանակման հետևանքով, ջրի տեմպերատուրան կակսի բարձրանալ, իսկ հեղուկացրած նյութինը՝ իջնել։

Նախ այդ տեմպերատուրան կիջնի մինչև նյութի պնդացման աստիճանը, վորը նշանակենք T . հետո կսկսվի պնդացման պրոցեսը։ Պնդացման պրոցեսի ընթացքում անջատվում է թագնված ջերմու-

թյունը, իսկ նյութի տեմպերատուրան չի փոխվում։ Յերբ ամբողջ մարմինը պնդանում ե, այն ժամանակ նըա տեմպերատուրան ևս սկսում ե իջնել և, վերջապես, հավասարվում ե ջրի տեմպերատուրային։ Վերջնական տեմպերատուրան նշանակենք Θ .

Նյութի տեսակարար ջերմունակությունը հեղուկ վիճակում նշանակենք c_1 , իսկ պինդ վիճակում՝ c_2 ։

Զուրը t^o -ից մինչև Θ^o տաքանակու համար կլանում ե Q_1 կազմություն ջերմություն, վորը հավասար ե՝

$$Q_1 = (M + mc)(\Theta - t)$$

Տաք նյութը պաղելով t_1^o -ից մինչև T պնդացման աստիճանը՝ անջատում ե $m_1 c_1(t - T)$ կալորիա ջերմություն։ Պնդացման ժամանակ անջատվում ե ևս $m_1 x$ կալորիա ջերմություն, վորտեղ չը պնդացման թագնված ջերմությունն ե։ Վերջապես, պինդ նյութը պաղելով մինչև խառնուրդի վերջնական տեմպերատուրան (Θ) անջատում ե $m_1 c_2(T - \Theta)$ կալորիա ջերմության։

Ընդամենը անջատվում ե՝

$$Q_2 = m_1 c_1(t - T) + m_1 x + m_1 c_2(T - \Theta)$$

Կազմության ջերմության։

Եներգիայի պահպանության որենքի համաձայն՝ $Q_1 = Q_2$ ։ Հետևաբար, կարող ենք գրել՝

$$(M + mc)(\Theta - t) = m_1 c_1(t - T) + m_1 x + m_1 c_2(T - \Theta)$$

Լուծելով x -ի նկատմամբ ստանում ենք՝

$$(1) \quad x = \frac{(M + mc)(\Theta - t) - m_1 c_1(t - T) - m_1 c_2(T - \Theta)}{m_1}$$

Սառուցի հալման թագնված ջերմությունը վորոշելու համար անհրաժեշտ ե մի կալորիմետր՝ խառնիչով և կալորիմետրիկ ջերմաչափով, տեխնիկական կշեռք և մանրացրած սառուցի։

Կշեռք կալորիմետրի ներքին անոթը՝ (բաժակը) խառնիչի հետ միասին $0,1$ գրամ ճշտությամբ։

Նշանակենք կշեռք ու։

Լցնել կալորիմետրի մեջ ջուր՝ անոթի կեսից մի քիչ ավել և նորից կշեռք և նշանակենք մաքուր ջրի կշեռքը M ։

Անընդհատ խառնիչով և հետևելով ջերմաչափի ցուցմունքին տաքանել կալորիմետրի միջի ջուրը այնքան, վոր նրա տեմպերատուրան 4^o -ից -7^o բարձր լինի, քան սենյակի տեմպերատուրան ե։

Չափել կալորիմետրի միջի ջրի տեմպերատուրան $0^o, 1^o$ ճշ-

տությամբ և իսկույն (անընդհատ խառնելով) իջեցնել ջրի մեջ սառույցի կտորները: Սառույցի յուրաքանչյուր կառը ջրի մեջ իջեցնելուց առաջ շորով չորացնել և իջեցնել ջրի մեջ շատ հանդարտ, այնպես, վոր այդ պրոցեսի ընթացքում վոչ մի կաթիլ ջուր դուրս չթռնի:

Անընդհատ խառնելով, այնքան սառույց գցել ջրի մեջ, վոր ջրի տեմպերատուրան սենյակի տեմպերատուրայից այնքան ցածր լինի, վորքան նա բարձր եր փորձի սկզբում: Որինակ յեթե սենյակի տեմպերատուրան յեղել ե 16°C, խոր ջրի տեմպերատուրան փորձի սկզբում յեղել եր՝ 22°C, ապա փորձի վերջում, խառնուրդի տեմպերատուրան պետք ե լինի 10°C: Այդպիսի պայմաններում կորուստը ճառագլթման նկատմամբ շատ քիչ ե:

Փորձը վերջացնելով նորից կշռել կալորիմետրի ներքին անոթը, խառնիչով և միջի ջրով: Կշռի աճումը կլինի նրա մեջ գցած սառույցի կշռը: Նշանակենք այդ կշռը m_1 , կալորիմետրի միջի ջրի սկզբնական տեմպերատուրան t , վերջնականը Θ , խոր կալորիմետրի տեսակարար ջերմությունը c :

Կալորիմետրի և նրա ջրի տեմպերատուրան իջել ե t^o C-ից մինչև Θ^o C, հետևաբար սառույցին հաղորդված ջերմության քանակը հավասար ե:

$$Q_1 = (M + mc)(t - \Theta)$$

Ջերմության այս քանակից xm_1 -ը ծախսվել է սառույցի հալեցման վրա, իսկ մնացած $m_1\Theta$ քանակը ծախսվել է սառույցից ստացված ջրի տեմպերատուրան մինչև Θ^o C բարձրացնելու համար: Այստեղ չ-ը հալսան թագնված ջերմությունն ե,

Հետևաբար՝

$$(M + mc)(t - \Theta) = m_1x + m_1\Theta$$

Վորտեղից՝

$$x = \frac{(M + mc)(t - \Theta) - m_1\Theta}{m_1}$$

Սխալի հաշվումը

Հարաբերական սխալը պետք ե հաշվել վորպիս կոտորակի սխալ, վորը հալվասար ե համարիչի հարաբերական սխալին գումարած հայտարարի հարաբերական սխալը. հետևաբար՝

$$\frac{\Delta x}{x} = \frac{\Delta [(M + mc)(t - \Theta)] + \Delta [m_1\Theta]}{(M + mc)(t - \Theta) - m_1\Theta} + \frac{\Delta m_1}{m_1}$$

Համարիչի բացարձակ սխալը վորոշում և վորպիս արտադրիչների սխալների գումար՝

$$\Delta[(M + mc)(t - \Theta)] + \Delta(m_1\Theta) =$$

$$= (M + mc)\Delta(t - \Theta) + (t - \Theta)\Delta(M + cm) + m_1\Delta\Theta + \Theta\Delta m_1$$

Հետևաբար՝

$$\frac{\Delta x}{x} = \frac{(M + mc)\Delta(t - \Theta) + (t - \Theta)\Delta(M + cm) + m_1\Delta\Theta + \Theta\Delta m_1}{(M + mc)(t - \Theta) - m_1\Theta} + \frac{\Delta m_1}{m_1}$$

Սեխատանի № 28

30. Զրի գոլորշիմետր թագնված ջերմություն վորոշելը

Հեղուկի մակերեսութից անընդհատ գոլորշիացում և կատարվում: Հեղուկի այն մոլեկուլները, վորոնց կինետիկ եներգիան համեմատաբար մեծ ե, կարողանում են անցնել հեղուկի մակերևությունին թաղանթից գեղի գուրա: Այդ պրոցեսը կոչվում ե գոլորշիացում:

Ինչպիս հայտնի յե, հեղուկի տեմպերատուրան կախում ունի մոլեկուլների արագությունից: Բայց վորոշիետե գոլորշիացման ժամանակ հեղուկից հեռանում են մեծ արագություն ունեցող մոլեկուլները, այդ պատճառով գոլորշիացումից հեղուկը սառչում ե, չեթե, ինչպիս, գոլորշիացումը կատարվում ե վոչ դրսից ստացված ջերմության հաշվին:

Վորպիսպի հեղուկի տեմպերատուրան գոլորշիացման ընթացքում մնա անփոփոխ, անհրաժեշտ և հեղուկին ջերմություն հաղորդել: Այդ հաղորդված ջերմությունը չի բարձրացնում հեղուկի տեմպերատուրան և այդ պատճառով նա կոչվում ե գոլորշիացման թագնըլված ջերմություն:

Գոլորշիացման թագնված ջերմությունը չափում են կալորիմետրի այն քանակով, վորը պետք ե հաղորդել մեկ դրամ հեղուկին, վորպիսպի նա, անփոփոխ տեմպերատուրի տակ գոլորշիանա:

Վորոշիետե յեռման ընթացքում հեղուկի տեմպերատուրան մնում և անփոփոխ, ապա գոլորշիացման թագնված ջերմությունը հարմար ե հաշվել յեռման կետի համար:

Յեթե յեռացող հեղուկի գոլորշիները խտացնենք, հեղուկ դարձնենք, ապա գոլորշու ամեն մի գրամը (անփոփոխ տեմպերատուրայի տակ հեղուկանալիս) անջատում ե նույնքան ջերմություն, ինչքան նա կլանում ե գոլորշիացման:

Ուրեմն, գոլորշիացման թագնված ջերմությունը հավասար ե

Նույն պայմաններում կատարվող հեղուկացման թագնված ջերմությանը:

Այդ վերջինը վորոշելու համար վարվում են այսպես՝ վերցնում են մի կալորիմետր, վորի մեջ լցրած և ջուր: Դիցուք, կալորիմետրի ջրային համարժեքն ե առ, մեջը լցրած ջրի զանգվածն ե Մ և սկզբանական տեմպերատուրան՝ t : Հատուկ յեռարանից անց են կացնում կալորիմետրի մեջ ու գրամ գոլորշի՝ t_1 տեմպերատուրայի տակ: Գոլորշին խտանալով անջատում ե թագնված ջերմությունը և այնուհետեւ սառչում և մինչև խտանուրդի վերջնական տեմպերատուրան (T):

Վորովհետև կալորիմետրի տեմպերատուրան բարձրացել ե և ից մինչև $T^o C$, ապա նա կլանել ե Q_1 կալորիա ջերմություն, վորը հավասար ե:

$$Q_1 = (mc + M)(T - t)$$

m_1 գրամ գոլորշին խտանալով անջատել ե m_{1x} քանակությամբ ջերմություն, վորտեղ չ-ը գոլորշիացման թագնված ջերմությունն ե: Իսկ սառչելով մինչև խտանուրդի վերջնական T տեմպերատուրան՝ անջատել ե և $m_1(t_1 - T)$ կալորիա ջերմություն: Ուրեմն՝ գոլորշին ընդգամնը անջատել ե:

$$Q_2 = m_{1x} + m_1(t_1 - T)$$

Ջերմություն:

Եներգիայի պահպանության որենքի հիման վրա՝ $Q_1 = Q_2$, հետևաբար՝

$$1) \quad (mc + M)(T - t) = m_{1x} + m_1(t_1 - T)$$

Վորտեղից գոլորշիացման թագնված ջերմությունը՝

$$2) \quad x = \frac{(mc + M)(T - t) - m_1(t_1 - T)}{m_1}$$

Փոքածի համար անհրաժեշտ գոքածիքները.

Կալորիմետր՝ իր խտանիչով և կալորիմետրիկ ջերմաչափով, յեռաբան և գոլորշու չորանցը (հասարակ տեսակի դեֆլեկմատոր):


Այնուարանից դուրս յեկող գոլորշին մասնում ե գոլորշու չորանցի մեջ (B): Գոլորշու չորանցը պետք ե այնպես դասավորված լինի, վոր նրանից դուրս յեկող C խողովակը համարյա թե հասնի D կալորիմետրի հատակին (նկ. 99): Տեմպերատուրան չափում են Է կալորիմետրիկ ջերմաչափի միջոցով: Կալորիմետրի ջուրը խտանելու համար ոգտագործում են արուցք խտանիչը (g):

Փոքածի կատարել հետեւյալ կարգով:

Լցնել յեռարանի մեջ ջուր (մոտավորապես մի յերրողդը). Ելեկտրականությամբ կամ սպիրու այրոցով ջուրը յեռացնել:

Կշռել 0,1 գրամ ճշտությամբ կալորիմետրի բաժակը՝ խառնիչի հետ միասին (ինթագրվում ե, վոր խտանիչը և կալորիմետրը նույն նյութից են պատրաստված):

Լցնել կալորիմետրի մեջ, նրա կեսից մի քիչ ավելի, ջուր և նորից կշռելով, վորոշել լցրած ջրի M կշռը:



Նկ. 99

Յերբ յեռարանի միջի ջուրը յեռա, միացնել գոլորշու չորանոցը յեռաբանին, սպահելով չուանոցի C ծայրը կալորիմետրից դուրս: Յեռաբանի գոլորշին մտնելով չորանոցի մեջ և հանդիպելով սառը միջավայրի, կոկսի խտանալ և միաժամանակ սաքացնել չորանոցը: Սպասել մինչև չորանոցի տեմպերատուրան հավասարվի գոլորշու տեմպերատուրային: Այդ ժումենատից չոր գոլորշին կոկսի դուրս ցայտել չորանոցի C ծայրից:

Զափել կալորիմետրի ջրի և տեմպերատուրան. այդ տեմպերատուրան պետք ե սենյակի տեմպերատուրայից մի քանի աստիճան ցածր լինի: Ապա միացնել չորանոցը կալորիմետրի հետ այսպես, վոր նրա C ծայրը համարյա թե հասնի կալորիմետրի հատակին:

Ջրի գոլորշիները ընկնելով կալորիմետրի, համեմատաբար սառը միջավայրը, սկսում են խտանալ և անջատում են թագնված ջերմությունը: Դրա հետեւանքով կալորիմետրի ջրի տեմպերատուրան սկսում ե բարձրանալ Խառնելով ջուրը խտանիչի միջոցով, անընդհատ հետեւել ջերմաչափի ցուցմունքին և յերբ ջրի տեմպերատուրան նույնքան աստիճան բարձր լինի սենյակի տեմպերատուրայից (մոտավորապես), վորքան առաջ ցածր եր, հանել գոլորշու չորանոցը կալորիմետրից:

Սրանից հետո շարունակել ջուրը խառնել և զրի առնել այն ամենաբարձր Տ տեմպերատուրան, վորից հետո ջրի տեմպերատուրան սկսում ե իջնել:

Տվյալների համար կազմել հետևյալ աղյուսակը

	$t_{\text{փ}}$	Տեմպերա- տուրա	Տեսակարար ջերմունակ.	Վերջնական տեմպերա- տուրան
Կալորիմետր . . .	m	t	c	
Զուր . . .	M	t	1	T
Գուրքի . . .	m_1	t_1	—	

Փորձը կատարելուց հետո նորից կշռել կալորիմետրը, խառնիչը և նրա միջի ջուրը: Կզորի ավելացումը կտա հեղուկացած գուրշուրանակը (m_1):

Ըստ արույրի կալորիմետրի համար հավասար է $0,092 \cdot t$ 0,094-ի:

Տվյալները տեղադրելով (2) հավասարման մեջ հաշվել գուրշուրացման թագնված ջերմությունը (x):

Սխալի հաւելումը

Հարաբերական սխալը $\frac{\Delta x}{x}$ վորշել վորպես կոտորակի սխալը. նա հավասար է համարիչի և հայտարարի հարաբերական սխալների գումարին: Ուրեմն՝

$$\frac{\Delta x}{x} = \pm \left\{ \frac{\Delta [(mc + M)(T - t)] + \Delta [m_1(t_1 - T)]}{(mc + M)(T - t) - m_1(t_1 - T)} + \frac{\Delta m_1}{m_1} \right\}$$

Բայց $\Delta [(mc + M)(T - t)]$, վորպես արտադրյալի սխալը, հավասար է՝

$$(mc + M)\Delta(T - t) + (T - t)\Delta(mc + M)$$

Նույն պատճառով՝

$$\Delta [m_1(t_1 - T)] = m_1\Delta(t_1 - T) + (t_1 - T)\Delta m_1$$

Հետևաբար

$$\frac{\Delta x}{x} = \frac{(mc + M)\Delta(T - t) + (T - t)\Delta(mc + M) + m_1\Delta(t_1 - T) + (t_1 - T)\Delta m_1 + \Delta m_1}{(mc + M)(T - t) - m_1(t_1 - T)} + \frac{\Delta m_1}{m_1}$$

31. Ո՞րի ՀԱՐԱԲԵՐԱԿԱՆ ԽՈՆԱՎՈՒԹՅԱՆ ՎՈՐՈՇԵԼԸ


Ջրի աղաւ մակերեսութից սովորաբար կատարվում է անընդհատ գուրշիացում: Այլ գուրշիացումը դատարաւմ է յերբ ողը հագենում ե գուրշիներով:

Մեկ խորանարդ մեար ողի մեջ պարունակված գուրշիների քանակը կախում ունի տեմպերատուրայից: Գոյություն ունեն հատուկ աղյուսակներ, վորոնց մեջ բերված են 1m³ ողում պարունակվող հագեցած գուրշիների քանակը (M) արտահայտված գրամ-ներով՝ տարբեր տեմպերատուրաների համար:

Վորպես որինակ բերենք հետևյալ աղյուսակը

t	...	M
— 10°		2,36
0°		4,86
10°		9,33
20°		17,12
30°		30,04

Հագեցած գուրշիների քանակի կախումը տեմպերատուրայից գրաֆիկորհն պատկերացրած է ԱԲ կորով (նկ. 100):



Նկ. 100

Գրաֆիկում աբացիսների առանցքի վրա նշանակված են տեմպերատուրները, իսկ որդինատների առանցքի վրա՝ հագեցած գուրշիների քանակը: Վորքեն Տ տեմպերատուրայի համար միջավայրը հագեցնող գուրշիների քանակը գրաֆիկի վրա կպատկերացվի ՏՄ որդինատով:

Սրանից հետո շարունակել ջուրը խառնել և զրի առնել այն ամենաբարձր Տ տեմպերատուրան, վորից հետո ջրի տեմպերատուրան սկսում ե իջնել:

Տվյալների համար կազմել հետևյալ աղյուսակը

	t_1	Տեմպերատուրա առողջական	Տեմպերատուրա ջերմունակ	Վերջնական տեմպերատուրան
Կալորիմետր . . .	m	t	c	
Զուր	M	t	1	T
Քոլորզի	m_1	t_1	—	

Փոքձը կատարելուց հետո նորից կշռել կալորիմետրը, խառնիչը և նրա միջի ջուրը: Կորի ավելացումը կտա ճեղուկացած գոլորշութանակը (m_1):

Համարույթի կալորիմետրի համար հավասար է $0,092 \cdot \frac{t}{t_1}$ ից $0,094 \cdot \frac{t}{t_1}$:

Տվյալները տեղադրելով (2) հավասարման մեջ հաշվել գոլորշիացման թափնված ջերմությունը (x):

Սխալի հաշվումը

$$\text{Հարաբերական սխալը} \frac{\Delta x}{x} = \frac{\Delta t}{m c + M} \text{ վորոշել վրակա կոտորակի սխալը.}$$

Նա հավասար է համարիչի և հայտարարի հարաբերական սխալների գումարին: Ուրեմն՝

$$\frac{\Delta x}{x} = \pm \left\{ \frac{\Delta [(mc + M)(T - t)] + \Delta [m_1(t_1 - T)]}{(mc + M)(T - t) - m_1(t_1 - T)} + \frac{\Delta m_1}{m_1} \right\}$$

Բայց $\Delta [(mc + M)(T - t)]$, վրակա արտադրյալի սխալը, հավասար է՝

$$(mc + M)\Delta(T - t) + (T - t)\Delta(mc + M)$$

Եռոյն պատճառով՝

$$\Delta[m_1(t_1 - T)] = m_1\Delta(t_1 - T) + (t_1 - T)\Delta m_1$$

Հետեաբար

$$\frac{\Delta x}{x} = \frac{(mc + M)\Delta(T - t) + (T - t)\Delta(mc + M) + m_1\Delta(t_1 - T) + (t_1 - T)\Delta m_1 + \Delta m_1}{(mc + M)(T - t) - m_1(t_1 - T)} + \frac{\Delta m_1}{m_1}$$

31. Ո՞Ի՞ ՀԱՐԱԲԵՐՈՒԿԱՆ ԽՈՆԱՎՈՒԹՅԱՆ ՎՈՐՈՇԵԼԸ


Ջրի աղատ մակերեսութից սովորաբար կատարվում ե անընդհատ գոլորշիացում: Այդ գոլորշիացումը դատարկում է յերբ ողբ հագենում ե գոլորշներով:

Մեկ խորանարդ մեար ողի մեջ պարունակված գոլորշների քանակը կախում ունի տեմպերատուրայից: Գոլորշյուն ունին հատուկ աղյուսակներ, վորոնց մեջ բերված են 1m³ ողում պարունակվող հագեցած գոլորշների քանակը (M) արտահայտված գրամականութեալ տարրեր տեմպերատուրաների համար:

Վորպես որինակ ըերենք հետևյալ աղյուսակը

t	M
-10°	2,36
0°	4,86
10°	9,33
20°	17,12
30°	30,04

Հագեցած գոլորշների քանակի կախումը տեմպերատուրայից գրաֆիկորեն պատկերացրած ե AB կորով (նկ. 100):



Նկ. 100

Գրաֆիկում արտցիսների առանցքի վրա նշանակված են տեմպերատուրները, իսկ որդինատների առանցքի վրա՝ հագեցած գոլորշների քանակը: Վորևէ Տ տեմպերատուրայի համար միջավայրը հագեցնող գոլորշների քանակը դրաֆիկի վրա կպատկերացվի ՏՄ որդինատով:

1m³ ողի մեջ պարունակվող գոլորշիների քանակը (արտահայտված գրամմներով) կոչվում է բացարձակ խոնավություն:

Տվյալ տեմպերատուրայի համար բացարձակ խոնավությունը կունենա ամենամեծ արժեքը, յերբ ողը հագեցած է գոլորշիներով:

Սովորաբար ողը հագեցած չի լինում գոլորշիներով: Դիցուք Տ տեմպերատուրի տակ 1m³ ողը պարունակում է ո ց ջրի գոլորշիներ և հալտնի յե, վոր ո < M, վորտեղ M-ը նույն պայմաններում, հագեցած ողի կշիռն ե: Այդ դեպքում բացարձակ խոնավությունը գրափեցած վրա կատակերացվի Տո հատվածով, վորը ավելի փոքր է քան ՏՄ որդինատը: (Տո հատվածը համապատասխանում է ո գրամին, ՏՄ-ը՝ M գրամին),

Ինչպես գրաֆիկից յերևում ե, հագեցած գոլորշիների խոնավությունը հավասար է ո-ի, յերբ տեմպերատուրան Տ' ե:

Ողի բացարձակ խոնավությունը վորոշելու համար հաճախ ոգտագործում են հետեւալ յեղանակը:

Բացարձակ խոնավությունը գրաֆիկի վրա պատկերացրած է Տո որդինատով: Ողը սառեցնենք: Այդ դեպքում ո կետը, տեմպերատուրայի անկման հետեւանքով, կտեղափոխվի դեպի ձախ՝ ուղղիդով, շարունակ մնալով միևնույն բարձրության վրա, վորովինեւ այս դեպքում միավոր ծավալում պարունակվող գոլորշիների քանակը մնում է անփոփոխ: Մի վորոց Տ' տեմպերատուրի տակ ո կետը կհամընկնի ո' կետի հետ, վորը գտնվում է ԱԲ կորի վրա: Ինչպես տեսնում ենք, Տ' որդինատը հավասար է Տո հատվածին: Այդ նշանակում ե, վոր Տ' տեմպերատուրի տակ ողում պարունակվող գոլորշիները հագեցնում են միջավայրը: Ուրեմն, ողի բացարձակ խոնավությունը չափելու համար պետք է վորոշել Տո = T' մեծությունը: Այդ նողատակի համար ողտագործում են հիգրոմետր կոչվող գործիքը:

Հիգրոմետրը ներկայացնում է մի մետաղյա անոթ, վորի մեջ լցնում են եթեր: Գոլորշիացնելով այդ եթերը կարելի յե անոթի տեմպերատուրան իջեցնել Յերբ կհասնի Տ'-ի, այսինքն, յերբ ո կետը կհամընկնի ո' կետի հետ, հիգրոմետրի շրջապատող ողը կդառնա հագեցած գոլորշիներով: Այդ մոմենտից սկսած հիգրոմետրի փայլուն մակերեսութը կսկսի ծածկվել ցողով:

Տվյալ դեպքում ցողն առաջանում է յերբ հիգրոմետրի տեմպերատուրան Տ' աստիճան ե: Այդ տեմպերատուրան կոչվում է ցողի կետ: Ցողի կետին համապատասխանող հագեցնող գոլորշիների քանակը կլինի միջավայրի բացարձակ խոնավությունը ավյալ պայմաններում:

Բացի բացարձակ խոնավությունից հաճախ անհրաժեշտ է լինում վորոշել ողի հարաբերական խոնավությունը:

Հարաբերական խոնավությունը ցույց է տալիս, թե ինչ չափով ողը մոտիկ է հագեցման վիճակին: Այդ պատճառով հարաբերական խոնավությունը չափում են ողի միավոր ծավալում պարունակվող գոլորշիների քանակի և տվյալ տեմպերատուրայում այդ ծավալը հագեցնող գոլորշիների հարաբերությամբ: Ուրիշ խոսքով, հարաբերական խոնավությունը ողի բացարձակ խոնավության և միջավայրը հագեցնող գոլորշիների հարաբերությունն ե:

Ուրեմն, հարաբերական խոնավությունը (B) հավասար է՝

$$1) \quad B = \frac{m}{M}$$

Այս կոտրակի համարիչը ցողի կետին համապատասխանող հագեցնող գոլորշիների քանակն ե, իսկ հայտարարը՝ հագեցնող գոլորշիների քանակն ե տվյալ տեմպերատուրում:

Սովորաբար հարաբերական խոնավությունը արտահայտում էն տոկոսներով: Դրա համար (1) հավասարման աջ մասը բազմապատկում են 100-ով:

Ողի տվյալ ծավալը հագեցնող գոլորշիների քանակի և այդ գոլորշիներով առաջարած միջն գոյություն ունի ուղիղ համեմատականություն: Այդ պատճառով, նշանակելով ո գոլորշիների միջումը թ, իսկ M գոլորշիների միջումը P, պատահաման փոխարեն կարող ենք գրել՝

$$2) \quad B = \frac{P}{P} \cdot 100\%$$

Այստեղ հարաբերական խոնավությունը արտահայտված է տոկոսներով:

32. ՀԱՐԱԲԵՐԱԿԱՆ ԽՈՆԱՎՈՒԹՅԱՆ ՎՈՐՈՇԵԼԸ ԼԱՄԲՐԵԽՏԻ ՀԻԳՐՈՄԵՏՐԻ ՄԻՋՈՑՈՎ

Լամբրեխտի հիգրոմետրը (նկ. 101) մի գլանաձև մետաղյա տուփ է, վորը ամբացրած է համապատասխան շտատիվի վրա:

Տուփի առաջի մակերեսը գլանի հիմքերից մեկն ե, նա հայելի յե, այսինքն, պատած է արծաթով կամ սիկելով և փայլեցրած ե: Այդ մակերեսը շրջապատած է մի մետաղե ողակով, վորի մակերեսութը նույնպես հայելի յե: Ողակի ներքին տրամադիմ տուփի


տղամագծից անհշան մեծ ե, այնպիս վոր տուփի և արտաքին ողակի միջև մնում ե մի շատ նեղ ձեզ:

Տուփի մեջ լցնում են եթեր և փուքով եթերի միջով ող անցկացնելով արագացնում եթերի գոլորշիացումը: Եթերը արագ գոլորշիանում ե. գոլորշիացման թափնված ջերմությունը կանում ե եթերից: Դրա հետևանքով թե՛ եթերի և թե՛ տուփի տեմպերատուրան սկսում ե իջնել: Յեթե տեմպերատուրան ալիքան ե իջնում, վոր այդ տեմպերատուրի տակ միջավայրի գոլորշինը հագեցնում են միջավայրը, տուփի փայլուն մակերեսին ցող ե նստում: Յողի կետը վորոշելու համար տուփի մեջ մոցընում են ջերմաչափ այնպես, վոր նրա սնդիկի գնդիկը լրիվ ընկղմած լինի եթերի մեջ:

Զափաղանց կարենոր ե ցողի կետը ձիշտ վորոշել, իսկ դրա համար անհրաժեշտ նկատել ցող առաջանալու ամենաթույլ հետքերը:

Փորձի կատարումը

Փորձը կատարելու համար անհրաժեշտ են՝ 1 լամպելիսի հիգրոմետր, 1 ջերմաչափ (լավ ե յեթե ճշտությունը լինի $0,1^{\circ}\text{C}$), 1 սետինե փուք, 1 սրվակ եթերով, հիգրոմետրիկ աղուսակ՝ $0,1^{\circ}\text{C}$ -ի ճշտությամբ և 1 ձագար:


Նկ. 101. Լամպելիսի հիգրոմետր
Վորոշել սենյակի ողի է₂ տեմպերատուրան: Հիգրոմետրի տուփի մեջ լցնել ձագարի միջոցով եթեր մինչև տուփի $\frac{2}{3}$ -ը: Տուփի վերեր անցքի մեջ մտցնել այն ջերմաչափը, վորով չափված ե սենյակի տեմպերատուրան: Ուստինե փուքով անցկացնել եթերի միջով ողի թույլ հոսանքը դիտելով միաժամանակ հիգրոմետրի տուփի փայլուն մակերեսը:

Ուշադրություն՝ փորձը կատարելու ժամանակ գործիքը պետք ե պաշտպանված լինի աշխատողների շնչառությունից, վորով հետեւ, յեթե շնչել գործիքի վրա կամ նրա մոտ, հայելին անմիջապես կծածկվի ցողով:

Եթերի միջով անցկացնել ողի հոսանք այնքան ժամանակ, մինչեւ վոր ցողը նկատվի: Դրի առնելով ջերմաչափի t_1 ցուցմունքը դաշտարեցնել ողի հոսանքը և դիտել ցողի անհետանալը: Հենց վոր ցողը անհետացավ, գրի առնել ջերմաչափի t_0 ցուցմունքը և նորից, փուքսի միջոցով, անցկացնել եթերի միջով ողի հոսանքը: Այս անգամ դիտել տուփի մակերեսը ավելի ուշադիր և ավելի մեծ ճշտությամբ, վորոշել ցող առաջանալու t_1' տեմպերատուրան: Դարպարեցնելով ողի հոսանքը, նույն ձեռվ վորոշել ցողի անհայտանալու t_0' տեմպերատուրան: Այդ ձեռվ փորձը կրկնել 5 անգամ: Ցողը առաջանալու և անհետանալու տեմպերատուրաները պետք ե վորոշվեն ավելի և ավելի մեծ ճշտությամբ: Վորքան ձիշտ են վորոշված այդ մեծությունները, այնքան ել նրանց արժեքները իրար մոտիկ կլինեն, տարբերությունը $0,5^{\circ}\text{C}$ ավելի չպետք ե լինի:

Տվյալները գրել հետևյալ աղյուսակի մեջ


t_1	t_1'	t_1''	t_1^n
t_0	t_0'	t_0''	t_0^n

Յողի կետը կլինի ցող առաջանալու և ցողն անհայտանալու վերջին 3 տվյալների միջինը: Նշանակելով այդ ձեռվ վորոշված ցողի կետը՝ t_1 , աղյուսակից վերցնել t_1 և t_2 տեմպերատուրաներին համապատասխան հագեցած գոլորշու ճնշումները և վորոշել հարպերական խոնակությունը:

33. ՀԱՐՍԲԵՐԱԿԱՆ ԽՈՆԱԿՈՒԹՅԱՆ ՎՈՐՈՇԵԼԸ ԱՌԻԳՈՒՍԻ ՊՍԻԽՐՈՄԵՏՐԻ ՄԻՋՅՈՅՎ

Առգուստի պսիխրոմետրը բաղկացած ե յերկու ջերմաչափից, վորոնք ամրացած են մի շատափիլի վրա (նկ. 102): Ջերմաչափից մեկը սովորաբար ցույց ե տալիս միջավայրի տեմպերատուրան: Մյուսի սնդիկի գնդիկը փաթաթած ե բատիստով, վորի ծայրը իջցրած և ջրով լցրած բաժակի մեջ: Մաղականության շնորհիվ, ջուրը բատիստով բարձրանում ե վերև, այդպիսով ջերմաչափի գնդիկը միշտ խոնակ վիճակումն ե: Վորովինետե բատիստի մակերեսութից անընդհատ գոլորշիացում ե կատարվում, խոնակ ջերմաչափի տեմպերատուրան միշտ ավելի ցածր ե, քան չորինը: Վորքան միջավայրի ողը չոր ե, աղյուսակ գոլորշիացումը ավելի արագ ե կատարվում և նրա տեմպերատուրան ավելի յե իջնում: Ուրեմն, վորքան միջավայրի ողը չոր լինի, աղյուսակ ել ջերմաչափերի ցուցմունքների տարբերությունը մեծ կլինի:

Սրանից հետևում է, վոր իմանալով յերկու ջերմաչափերի ցուցմունքների տարրերությունը, կարելի յե վորոշել բացարձակ խոնավությունը: Իսկ իմանալով բացարձակ խոնարությունը և միջավայրի տեմպերատուրան, կարելի յե վորոշել նաև հարաբերական խոնավությունը:



Նկ. 102

Այսեղ կ մի գործակից ե, վորը կախում կունհամարմի մակերևութի տեսակից, $S \cdot L$ նրա մակերեսն ե, $t_1 - t_2$ -ը մարմինի և միջավայրի տեմպերատուրաների տարրերությունն ե, պսիլորումետրի գեպքում t_1 չոր ջերմաչափի տեմպերատուրան ե, իսկ t_2 խոնավ ջերմաչափի տեմպերատուրան ե:

Գործիացման համար անհրաժեշտ Q_1 ջերմության քանակը ուղիղ համեմատական է գործիացման արագությանը: Նշանակելով այդ արագությունը Վ-ով կստանանք՝

$$5) \quad Q_1 = cvT$$

Այսեղ ը համեմատության գործակից ե: Գոլորշիացման արագության համար Դալորշիացման արագության համար Դալորշը գտել ե վոր

$$6) \quad v = \frac{aS}{H} (p' - p)$$

վորուեղ:

S — այն մակերեսն ե, վորից կատարվում է գործիացում, H մթնոլորտի ճնշումն ե, p' -ը խոնավ ջերմաչափի ցույց աված տեմպերատուրի տակ գտնվող և միջավայրը հագեցնող գործիների ճնշումն ե,

թ-ն միջավայրի գործիացների ճնշումն ե, ա-ն համեմատության գործակից ե, վորը կախում ունի շրջապատող ողի շարժման արագությունից:

Տեղադրելով (6) հավասարումից արագության արժեքը (5) հավասարման մեջ և հավասարեցնելով (5) և (4) հավասարումների աջմասերը, կստանանք՝

$$7) \quad k = (t_2 - t_1) ST = \frac{caS}{H} (p' - p) T$$

Լուծելով այս հավասարումը թ-ի նկատմամբ, կստանանք՝

$$8) \quad p = p' - \frac{k}{ca} \cdot H (t_2 - t_1)$$

Կամ նշանակելով՝

$$\frac{k}{ca} = A$$

գերջնականապես կստանանք՝

$$9) \quad p = p' - AH (t_2 - t_1)$$

Այս հավասարումից կարելի յե վորոշել թ-ի արժեքը, յեթե A -ի արժեքը հայտնի յե:

Փորձի տվյալները ցուց են տալիս, վոր, յեթե t_1 -ը $0^\circ C$ -ից բարձր ե, ապա A , մոտավորապես, հավասար է $0,0008$, իսկ յեթե t_1 -ը $0^\circ C$ -ից ցածր ե, ապա A կարելի յե ընդունել մոտավորապես, հավասար $0,00068$ -ի:

թ-ը վորոշում են հիգրոմետրիկ աղբուսակից, H -ը՝ բարոմետրի միջոցով:

(9) հավասարման հիման վրա վորոշել միջավայրում պարունակվող ջրի գործիացների ճնշումը (p) և իմանալով t_2 տեմպերատուրի տակ միջավայրը հագեցնող գործիների ճնշումը (p_1), հարաբերական խոնավության համար ստանում ենք հետևյալ արժեքը՝

$$B_0 = \frac{p}{p_1} \cdot 100\%$$

Սովորաբար Առաջուստի պսիլորումետրով հարաբերական խոնավությունը վորոշելիս ոգտագործում են մի հատուկ աղբուսակ, վորը պարունակում է մի շարք տեմպերատուրաների համար հաշված տըզ-յաները:

Այդ աղյուսակը կազմած ե հետևյալ ձևով՝ վերևի ձախ անկյունում, և տառի տակ, գրված են չոր ջերմաչափի ցուցմունքները: Ե-ից դեպի աջ գրված են թ/0, 1, 2, և այլ 11 թվերը, վորոնք չոր և թաց ջերմաչափերի ցուցմունքների տարրերություններն են: Յերկրորդ սյունյակում թ/0 նշանի տակ, գրված են հազեցած գոլորշիների ճշնաշումները և ջերմաստիճանի համար, իսկ մյուս թվերի տակ, համապատասխան սյունյակում՝ միջավայրի գոլորշիների ճնշումները:

Վորպեսզի աղյուսակի գործածությունը պարզ լինի, բերենք մի որինակ: Դիցուք չոր ջերմաչափը ցույց է տալիս $t_2 = 25^{\circ}, 4\text{C}$, իսկ խոնակ ջերմաչափը՝ $t_1 = 16^{\circ}, 4\text{C}$. Հետևարար՝ $t_2 - t_1 = 9^{\circ}\text{C}$: Գլուխում ենք աղյուսակի առաջին սյունակում Ե-ի տակ 25,4 թիվը և հետո 9 տարրերության համապատասխանող սյունյակում, 25,4 թիվը:

Պահպամերիկ աղյուսակ

t	թ/0	1	2	3	4	5	6	7	8	9
25.0	23.60	21.60	19.70	17.80	16.00	14.30	12.70	11.10	9.50	8.01
25.1	23.74	21.73	19.83	17.92	16.12	14.41	12.50	11.20	9.60	8.09
25.2	23.88	21.86	19.96	18.04	16.24	14.52	12.90	11.30	9.70	8.18
25.3	24.02	21.99	20.09	18.16	16.36	14.63	13.00	11.40	9.80	8.27
25.4	24.16	22.12	20.22	18.28	16.48	14.74	13.10	11.50	9.90	8.36
25.5	24.30	22.25	20.35	18.40	16.60	14.85	13.20	11.60	10.00	8.45

Դիմաց գտնում ենք 8,36 թիվը. այդ թիվը արտահայտում է միջավայրի գոլորշիների ճնշումը. ուրեմն, $p = 8,36$. իսկ p_1 -ի համար $p/0$ սյունյակում, $25^{\circ}, 4$ թվի դիմաց գտնում ենք $24,16$, այսինքն $p_1 = 24,16$: Այս տվյալների հիման վրա հաշվելով հարարերական խոնակությունը (B_0), կստանանք՝

$$B_0 = \frac{p}{p_1} \cdot 100\% = \frac{8,36 \cdot 100}{24,16} \%$$

$$B_0 = 34,6\%$$

Փորձի կատարումը

Փորձը կատարելու համար անհրաժեշտ ե 1 պսիխորոմետր և 1 վենտիլատոր:

Գրել չոր ջերմաչափի ցուցմունքը: Յերկրորդ ջերմաչափի բաժակի մեջ լցնել ջուր՝ բաժակի $\frac{2}{3}$ մասը:

Այն ոդը, վորով անմիջապես շրջապատված ե խոնակ ջերմաչափը և յեթե նա հանգիստ վիճակում ե, հեշտությամբ հագենում ե գոլորշիներով. դրա հետեանքով խոնակ ջերմաչափի ցուցմունքները կլինեն սխալ. ավելի բարձր խոնակություն ե ցույց տրվում, քանի խոկապես գոյություն ունի: Վորպեսզի ճիշտ տվյալ ստացվի, պետք ե այնպես անել, վոր խոնակ ջերմաչափի շուրջը ջրի գոլորշիներ չկուտակվեն, իսկ դրա համար պետք ե շարժման մեջ դնել ոդը կամ պսիխորոմետրը:

Այդ նպատակի համար ծառայում ե ելեկտրական վենտիլատորը: Վենտիլատորը աշխատեցնել այնքան ժամանակ, մինչև վոր նկատվի, վոր խոնակ ջերմաչափի սնդիկը այլևս չի իջնում: Գրի առնել խոնակ ջերմաչափի այդ, ամենացածր ցուցմունքը և վորոշել $t_2 - t_1$ տարրերությունը:

Ոգտվելով պսիխորոմետրիկ աղյուսակից, վորոշել հարարերական խոնակությունը:

Այն դեպքերում յերբ լարորատորիայում վենտիլատոր չկապետք ե շարժման մեջ դնել պսիխորոմետրը. դրա համար պետք ե վերցնել պսիխորոմետրը և այնքան ճոճել, մինչև վոր նկատվի, վոր խոնակ ջերմաչափը այլևս չի իջնում:

Աշխատանք № 30

34. Պինդ ՆՅՈՒԹԻ ՆԵՐՔԻՆ ԶԵՐՄՀԱՂՈՐԴԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱԿՑԻ ՎՈՐՈՇԵԼ


Յեթե մարմի տարրեր մասերը տարրեր տեմպերատորա ունեն, կամ յեթե իրար հետ շոշափման մեջ են յերկու մարմին, վորոնց տեմպերատորաները տարրեր են, ապա ջերմային եներգիան սկսում ե հոսել մարմի բարձր տեմպերատորա ունեցող մասերից դեպի այն կողմը, վորտեղ տեմպերատորան ցածր ե:

Այս յերեսույթը կոչվում է ջերմհաղորդականություն և բացատրվում ե կիսետիկ մոլեկուլար տեսությամբ հետեալ ձևով: Յեթե մարմի տարրեր մասերը տարրեր տեմպերատորա ունեն, ապա այն մասերում, վորտեղ տեմպերատորան բարձր ե, մոլեկուլների շարժման միջին արագությունը մեծ ե, իսկ այն տեղերում, վորտեղ տեմպերատորան ցածր ե, մոլեկուլների շարժման միջին արագությունը ավելի փոքր ե:

Ալպիսի վիճակը, սակայն, յերկար պահպանվել չի կարող: Արագ շարժվող մոլեկուլների հարվածների ազդեցության տակ, դանագաղ շարժվող մոլեկուլների արագությունը կսկսի մեծանալ: Մյուս

կողմից հարվածների հետևանքով արագ շարժվող մոլեկուլների կինետիկ եներգիան կախի նվազել է, ուրեմն, շարժման միջին արագությունը կախի նվազել Բայց վորովհետեւ ջերմությունը մոլեկուլների կինետիկ եներգիան է, ապա ուրեմն, մարմնի տաք մասերից ջերմությունը անցնում է սառը մասերին:

Պատկերացնենք մի հարթ զուգահեռ թիթեղ, վորը պատրաստած ե վորեւ համասեռ նյութից (նկ. 103). Յենթաղբենք, վոր թիթեղի ձախ՝ MN յերեսի տեմպերատուրան անընդհատ պահպանվում է t_1^0



նկ. 103

թյուն չի կուտակվում: Ջերմության այդ ձեռքի կախումը ներսում, վոչ մի կետում ջերմություն չի կուտակվում: Ձերմության այդ ձեռքի կուտակվումը կոչվում է ստացիոնար հոսանք:

Առանձնացնենք մեր թիթեղի վրա S մակերեսը և հաշվենք, թե այդ մակերեսով, տվյալ ժամանակամիջոցում, ձախից գեղի աջ ինչ քան ջերմություն է անցնում:

Դրա համար առանձնացնենք թիթեղի մեջ մի գլան, որով, վորի հիմքերը հավասար են S-ի, և հաշվենք այդ գլանի կամավոր կտրվածքով հոսած ջերմության քանակը:

Քանի վոր հատման մակերեսի յուրաքանչյուր քառակուսի սահմետը հոսում է միևնույն ջերմության քանակը, ապա ամբողջ

մակերեսով հոսած ջերմության քանակը ուղիղ համեմատական կլինի մակերեսին: Բացի այդ, քանի վոր ունենք ջերմության ստացիոնար հոսանք, ապա անցած ջերմության քանակը ուղիղ համեմատական կլինի ժամանակի (T) տեղողությանը: Վերջապես ջերմության հազարդությունը այսպահ արագ կկատարվի, վորքան մեծ է տեմպերատուրայի անկումը՝¹ 1 օն ճանապարհի վրա:

Յեթե թիթեղի յերկու յերեսների տեմպերատուրաների տարբերությունն է $t_1 - t_2$, իսկ թիթեղի հաստությունը՝, ապա տեմպերատուրայի անկումը մեկ սանտիմետր յերկարության վրա կլինի՝

1)

$$g = \frac{t_1 - t_2}{l}$$

Ոյս մեծությունը կոչվում է տեմպերատուրային գրադիենտ: Այդպիսով ստացիոնար հոսանքի գեղքում ջերմհաղորդականության որինքը կարելի յե բանաձեռ այսպես:

Տվյալ ժամանակի ընթացքում և տվյալ մակերեսով անցած ջերմության քանակը ուղիղ համեմատական է ժամանակի տեղողությանը, մակերեսին և տեմպերատուրային գրադիենտին:

Նշանակելով համեմատականության գործակիցը կ-ով, կստանանք, վոր անցած ջերմության քանակը (Q) հավասար է

2)

$$Q = k \cdot \frac{S \cdot T \cdot (t_1 - t_2)}{l}$$

Մեր բերած որինակում ջերմության գրադիենտը հաստատուն մեծություն է: Կարող ե պատահել, վոր մարմնի բոլոր կետերը միևնույն գրադիենտը չունեն: Այդ գեղքում՝

$$g = \frac{t_1 - t_2}{l}$$

մեծությունը տալիս է միայն միջին գրադիենտը տվյալ հատվածի յերկարությամբ:

Վորպեսզի նման դեպքերում գրադիենտը ճիշտ վորոշենք, պետք է 1 յերկարությունը վերցնել շատ փոքր, ուրեմն, այդ գեղքում 1-ի փոխարեն կունենանք dl, իսկ $t_1 - t_2$ փոխարեն՝ dt. Հետեւարար (1) արտահայտության փոխարեն գրադիենտի համար կունենանք՝

3)

$$g = \frac{dt}{dl}$$

(2) Հավասարության փոխարեն կստանանք՝

$$4) \quad Q = k ST \frac{dt}{dl}$$

$$Ցեղե S = 1 \text{ cm}^2, \quad T = 1 \text{ sec} \quad t_1 - t_2 = 1 \frac{\text{սստ.}}{\text{cm}}, \quad \text{ապա } (2)$$

հավասարումից ստանում ենք՝

$$Q = k$$

Ուրեմն, և դործակեցը ցույց է տալիս ջերմության այն քանակը, վորոն անցնում և տվյալ մարմնի կտրվածքի մի քառակուսի սահմետը մակերեսով, մեկ վայրկյանի ընթացքում, յեթե գրադիենտը հավասար է մեկի:

Այդ քանակությունը կոչվում է ներքին ջերմհաղորդականության դործակեց:

Տարբեր նյութերի ջերմհաղորդականության դործակեցը, ինչպես յերեսում և աղյուսակից, տարբեր եւ:

k	k
արծաթ	1,0960
պղինձ	0,7190
յերկաթ	0,1665
երոսիտ	0,000089
ջուր	0,00120
եթեր	0,000303
ող	0,0000568
ջրածին	0,000327
հելիում	0,0003386
ածխաթթու գազ	0,0000307

Փորձի կատարումը


